ՌՈԲԵՐՏ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄՈՒՐՍԻԼԻ II-Ի «ՏԱՍՆԱՄՅԱ» ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

HITTITE SOURCES ABOUT THE ARMENIAN HIGHLAND

VOLUME I

GHAZARYAN ROBERT

THE "TEN" YEAR ANNALS OF MURŠILI II

The book is recommended for publication by the Scientific Council of the Institute of Oriental Studies

YEREVAN
"Gitutyun" publishing house of NAS RA
2013

9(47.925)
Ղ-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԵԹԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

Հատոր I

ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Ղ 98

ՄՈՒՐՍԻԼԻ II-Ի «ՏԱՍՆԱՄՅԱ» ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2013

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Ղ 158

Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.դ. Ա.Վ. Քոսյան

Ղ. 158

Ղազարյան Ռոբերտ Պետրոսի
Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը./ Ռ.Ղազարյան, ՀՀ ԳԱԱ արևելագիտ. ինստ. - Եր.: Գիտություն, 2013.- 142 էջ:

Աշխատությունը ներկայացնում է խեթական տերության արքա Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը: Այն Ք.ա. XIV դարի վերջի XIII դարի սկզբի փոքրասիական Խաթթի պետության և հարևան երկրների, մասնավորապես՝ Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների վերաբերյալ անգնահատելի սկզբնաղբյուր է: Աշխատությունը «Խեթական սկզբնաղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին» շարքի առաջին հատորն է և կարող է օգտակար լինել հայագետներին, արևելագետներին, ինչպես նաև Հին Արևելքի պատմությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

Գրքի շապիկին KBo III 4 ԴԿ I, II աղյուսակն է, իսկ սեպագրով գրված է հետևյալը՝
MU.10.KAM LÚ-annaš ŠA ^{m}Mur-ši-li LUGAL.GAL LUGAL ^{KUR}Ḫa-at-ti
(10-ամյա քաջագործությունները Մուրսիլիի՝ մեծն արքայի, Խաթթի երկրի արքայի): Գրքի հակառակ երեսին պատկերված է Արիննայի Արևի աստվածուհու արձանիկը
(The Metropolitan Museum of Art. Accession Number: 1989.281.12)

ISBN 978-5-8080-0990-5

© Ղազարյան Ռ., 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն ---- 5
Պայմանական նշաններ, համառոտագրություններ, հապավումներ ---- 6
Օգտագործված գրականության ցանկ ---- 8
Առաջաբան ---- 10
Տառադարձում և թարգմանություն ---- 16
Հավելված ---- 64
Տեղանուններ ---- 64
Անձնանուններ ---- 94
Դիցանուններ ---- 107
Շումերագիր բառեր ---- 110
Աքքադագիր բառեր ---- 114
Թվեր ---- 116
Անվանացանկեր ---- 117
Քարտեզ ---- 122
Սեպագիր տեքստեր ---- 123

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ, ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

[.....] վնասված, բացակայող և չվերականգնված հատված
[( )] բացակայող, սակայն կրկնօրինակների օգնությամբ վերականգնված հատված
< > անհրաժեշտ, սակայն գրչի կողմից բաց թողնված սեպանշան կամ բառ
! գրչի կողմից գրված սխալ սեպանշան
<< >> ավելորդ սեպանշան (բառ), գրչի թույլ տված սխալ
X չվերականգնված սեպանշան
ـ լուվիերեն բառ
* բառի վերականգնված ձև

աքք. աքքադերեն
խեթ. խեթերեն
հայ. հայերեն
շում. շումերերեն
խուր. խուրրիերեն
լուվ. լուվիերեն

ԴԿ Դիմային կողմ
ՀԿ Հակառակ կողմ

ՀLS - Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, 168 էջ:
Մերձավոր Արևելք - Մերձավոր Արևելք: Պատմություն, քաղաքակա-նություն, մշակույթ (Երևան):
ՄՄԱԵԺ - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (Երևան):
ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես (Երևան):
ВДИ - Вестник Древней Истории (Москва).
ИЛР - Капанцян Г. Историко-лингвистические работы. К начальной истории армян. Древняя Малая Азия, т. 1, Ереван, 1956.
ADM - Grélois J.-P. Les Annales Decennales de Mursili II (CTH 61.1), Hethitica, 1988, IX, p. 17-145.
AM - Götze A. Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, 329 S.

Anatolica - Anatolica. Annuaire international pour les civilizations de L'Asie antérieure (Istanbul).
AS - Anatolian Studies. Journal of the British Institute of Archaeology at Ankara (London).
Bo - Inventarnummern von Tontafeln aus Boğazköy.
BoTU - Forrer E., Die Boghazköi-Texte in Umschrift (=MVDOG; 1922, 1926, Berlin, 1941, 1942, Leipzig).
CTH - Laroche E., Catalogue des textes hittites, Paris, 1971, 267p. Premier Supplément, RHA, 1972, № 30, pp. 94-133.
Hethitica - Bibliothèque des Cahiers de l'Institut de Linguistique de Louvain.
JAOS - Journal of the American Oriental Society (Michigan).
KBo - Keilschrifttexte aus Boğhazköi (Leipzig/Berlin, 1923ff).
KUB - Keilschrifturkunden aus Boğhazköi (Berlin, 1921ff).
MIO - Mitteilungen des Instituts für Orientforschung (Berlin, 1953 ff.)
MVAG - Mitteilungen der Vorderasiatisch-äegyptischen Gesellschaft (Berlin/Leipzig).
RGTC, VI - Del Monte G., Tischler J., Répertoire Géographique des Textes Cunéiformes, № VI. Die Orts-und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978.
RGTC, VI/2 - Del Monte G., Répertoire Géographique des Textes Cunéiformes, № VI/2. Die Orts-und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1992.
RHA - Revue Hittite et Asianique (Paris).
RIDA - Revue Internationale de Droits de l'Antiquite (Bruxelles).

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն: Ակունքները X-VI դդ. մ.թ.ա.: Հայերի ծագումը, Երևան, 1972, 430 էջ:
2. **Խաչատրյան Վ.**, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, 159 էջ:
3. **Ղազարյան Ռ.**, Հայասա-Ազզիի տեղադրության հարցի շուրջ (ըստ Մուրսիլիս II-ի տարեգրության), Մերձավոր Արևելք, 2005, էջ 35-39:
4. **Ղազարյան Ռ.**, Կասկա երկիրն ըստ սեպագիր աղբյուրների, ՄՄԱԵԺ, XXVI, 2007, էջ 52-64:
5. **Ղազարյան Ռ.**, Հայասա. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009, 164 էջ:
6. **Ղազարյան Ռ.**, Տուրուբերանում Հայասայի տեղորոշման հարցի շուրջ, Հայկազուններ. առասպել և պատմություն: Միջազգային գիտաժողով. զեկուցումների դրույթներ, Երևան, 2012, էջ 65-68:
7. **Մանանդյան Հ.**, Երկեր, Ե: Сообщения хеттских, ассирийских, урартийских и древнеармянских источников о Хайаса-Аззи, էջ 489-562, Երևան, 1984, 615 էջ:
8. **Մարտիրոսյան Ն.**, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը: Յուշամատեան ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական, աշխատասիրեց եւ կազմեց Վահէ Հայկ, Նիւ Եորք, 1959:
9. **Քոսյան Ա.**, Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, 264 էջ:
10. **Քոսյան Ա.**, Մուրսիլիս II-ի հայասական արշավանքները (նոր սկզբնաղբյուրներ), ՊԲՀ, 2004, էջ 197-204:
11. **Քոսյան Ա.**, Հայասան և Ազզին, Շնորհ ի վերուստ. առասպել, ծես և պատմություն: Հոդվածների ժողովածու նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին, Երևան, 2008, էջ 263-291:
12. **Քոսյան Ա.**, Վանից մինչև Եփրատ (հայոց վաղ պետականության ակունքներում), Հայկազուններ. առասպել և պատմություն: Միջազգային գիտաժողով. զեկուցումների դրույթներ, Երևան, 2012, էջ 24-27:
13. **Аветисян Г.** Государство Митанни (военно-политическая история в XVII-XIII вв. до н.э.), Ереван, 1984.
14. **Ардзинба В.** Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982, 252 с.

15. **Дьяконов И.** Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н.э. Хурриты, лувийцы, протоармяне, Ереван, 1968, 264с.
16. **Немировский А.** «Пространные анналы» Мурсилиса II – текстологическая условность?, ВДИ, 2005, 1, с. 3-14.
17. **Немировский А.** «Да будет это ведомо богам»: EA 43 и политическая история Амарнского времени, ВДИ, 2005, 4, с. 108-127.
18. **Хачатрян В.** Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики), Ереван, 1971, 182с.
19. **Bin-Nun S. R.** The Tawananna in the Hittite Kingdom, Texte der Hethiter, Heft 5, Heidelberg, 1975, 404 p.
20. **Bryce T.** Some Observations on the Chronology of Suppiluliuma's Reign. - AS, 39, 1989, p. 19-39.
21. **Bryce T.** The Kingdom of the Hittites, 1998, Oxford, 464p.
22. **Cornelius F.** Neue Arbeiten zur hethitischen Geographie, Anatolica, 1967, № I, S. 62-77.
23. **Cornelius F.** Ein hethitischer Hexenprozess. - RIDA, 22, 1975, S. 27-46.
24. **Haas V.** Geschichte der hethitischen Religion, Leiden, New York, Köln, 1994, 1025 S.
25. **Hoffner H. A.** A Prayer of Mursili II about his Stepmother, JAOS, 103/1, 1983, p. 187-192.
26. **del Martino S.** Le accuse di Muršili II alla regina Tawananna secondo il testo KUB XIV 4. In: S. de Martino/F. Imparati (Edd.), Studi e testi I (= EOTHEN 9). Firenze: pp. 19-48.
27. **Otten H.** Neue Fragmente zu den annalen des Muršili, MIO, 1955, 3, S. 153-179.
28. **Wilhelm G.**, Boese J. Absolute Chronologie und die hethitische Geschichte des 15. und 14 Jahrhunderts v. Chr. - 1987, High, Middle or Low. Acts of International Colloquium on Absolute Chronology Held at the University of Gothenburg 20th – 22nd August 1987. Part 1, Gothenburg, 1987, S. 74-117.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հին Արևելքի ամենանշանավոր արքաներից մեկի՝ Մուրսիլի II-ի (Ք.ա. 1321-1295 թթ.)[1] թողած գրավոր ժառանգությունը բազմազան է և խիստ կարևոր նրա կառավարման ժամանակաշրջանի՝ Փոքր Ասիայի և հարակից տարածքների երկրների և ժողովուրդների պատմության ուսումնասիրման առումով:

Մուրսիլի II-ը նորխեթական տերության հիմնադիր Սուպպիլուլիումա I-ի (Ք.ա. 1344-1322 թթ.)՝ մեզ հայտնի հինգ որդիներից կրտսերն էր, որը զբաղեցրեց Խաթթիի գահը շատ բարդ ժամանակաշրջանում: Երիտասարդ արքան, կառավարման առաջին տարիներից սկսած, ստիպված էր ծանր պայքար մղել Խաթթիի ներքին և արտաքին թշնամիների դեմ: Դրությունը ծանրանում էր նաև նրանով, որ Խաթթիում շարունակվող համաճարակը մեծ քանակությամբ մարդկային կյանքեր էր խլել և ծանր կացության մեջ դրել պետությունը: Կային խնդիրներ նաև ընտանիքում՝ կապված խորթ մոր՝ Սուպպիլուլիումա I-ի երկրորդ, բաբելոնացի կնոջ հետ[2]: Այնուամենայնիվ, Խաթթիի արքային առաջին տասը տարվա ընթացքում շատ բան հաջողվեց անել: Նա կարողացավ վերականգնել տերության միասնականությունը և տարածքային ամբողջականությունը, ճնշել ենթակա երկրներում ծագած ապստամբությունները: Իր երկու եղբայրների՝ Շարրիկուշուխի և Տելեպինուի մահվանից հետո նա կարողացավ շարունակել հոր սկսած քաղաքական գիծը և Հալեպի (Խալպա) ու Կարգամիսի գահերին բազմեցրեց նրանց որդիներին: Հյուսիսսիրիական այդ տարածքները շատ կարևոր դիրք ունեին այն առումով, որ մոտ էին գտնվում Խաթթիին թշնամի Եգիպտոսի և Ասորեստանի տարածքներին: Մուրսիլիին հաջողվեց նաև լուծել արցավական խնդիրը՝ ջախջախելով Փոքր Ասիայի արևմուտքում

[1] Մուրսիլի II-ի կառավարման տարեթվերը տրված են՝ ըստ վերջին՝ 1980-90-ական թվականներից մասնագիտական գրականության մեջ արմատացած նոր ժամանակագրության (Տես՝ Wilhelm, Boese, 1987, S.74ff.; Bryce, 1989, p. 19ff.):

[2] Երբ Մուրսիլի II-ի կառավարման իններորդ տարում մահացավ նրա կին Գասսուլավիյան (Գասսուլիյավիյա), Խաթթիի արքան մեղադրեց դրանում իր խորթ մորը՝ համարելով, որ նա սև մոգության ծես էր կատարել և հիվանդություն ուղարկել Մուրսիլի II-ի կնոջ վրա: Արքան վտարում է տավանաննային (թագուհուն) արքունիքից: Տես՝ Bin-Nun, 1975, 177ff. Cornelius, 1975, S. 27-46. Hoffner, 1983, p. 187-192. S. Del Martino, 1998, pp. 19-48. Քոսյան, 2004, էջ 197-204: Քոսյան, 2008, էջ 283-285:

գտնվող Արցավայի համադաշնության երկրների կորիզը կազմող Արցավայի թագավորությունը: Հյուսիսում և հյուսիս-արևելքում ժամանակավորապես լուծվեցին նաև կասկական և հայասական խնդիրները: Այսպիսով, մենք կարող ենք արձանագրել, որ Մուրսիլի II-ի կառավարման առաջին տասը տարիներն առանձնահատուկ նշանակություն ունեին նրա ողջ կառավարման համար: Թերևս այս պատճառով է նա առանձնացրել իր, այսպես կոչված, «Տասնամյա» տարեգրությունը:

Աշխատանքի կառուցվածքը

Խաթթուսայի պալատական պահոցից և Փոքր Ասիայի այլ վայրերից հայտնաբերված բազմաթիվ արձանագրությունները հույժ կարևոր տեղեկություններ են պարունակում տվյալ ժամանակաշրջանի Հայկական լեռնաշխարհի պատմության ուսումնասիրման համար: Անգնահատելի են հատկապես Մուրսիլի II-ի տարեգրությունները, որոնք մեզ հայտնի են՝ որպես «Տասնամյա» և «Ընդարձակ»[3]: «Տասնամյա»-ն ներկայացնում է արքայի կառավարման առաջին տասը տարիների իրադարձությունները, իսկ «Ընդարձակ»-ը ընդգրկում է նրա կառավարման գրեթե ողջ շրջանը[4]:

«Տասնամյա» տարեգրության հիմնական տեքստն է հանդիսանում KBo III 4 (= 2 Bo TU 48)[5]: Այն պահպանվել է մասնակիորեն,

[3] CTH 61.

[4] Դեռևս Մուրսիլի II-ի տարեգրությունների առաջին ուսումնասիրողները՝ Է. Ֆոռերը, Ա. Գյոթցեն, գտնում էին, որ Մուրսիլի II-ի կառավարման ժամանակաշրջանի միևնույն իրադարձությունները տրված են տարբեր հատվածներում՝ էական տեքստային և բովանդակային տարբերություններով: Այսինքն՝ նշյալ հատվածները պատկանում են ոչ թե մեկ, այլ երկու ինքնուրույն տարեգրական բնույթի ստեղծագործության: Մասնավորապես, KBo III 4 աղյուսակն իրենից ներկայացնում է, ընդհանուր առմամբ, ավարտուն տեքստ, որտեղ նկարագրվում են Մուրսիլի II-ի կառավարման առաջին տասը տարիների իրադարձությունները, որտեղ նա, ի փառս Արիննայի Արևի աստվածուհու, հաղթում է իր բոլոր թշնամիներին, որոնք հանդես էին եկել Խաթթիի դեմ իր գահ բարձրանալու ժամանակ: Որոշ այլ հատվածներ հանդիսանում են այս տեքստի կրկնօրինակները կամ նրա կցաբեկորները: Մնացած բոլոր տեքստերը, որոնք նկարագրում են Մուրսիլի II-ի կառավարման առաջին տասը տարիների իրադարձություններն առավել մանրամասն, ինչպես նաև նրա կառավարման հետագա տարիներին վերաբերող հատվածները Ա. Գյոթցեի կողմից պայմանականորեն մտցվել են, այսպես կոչված, «Ընդարձակ» տարեգրության մեջ (տես՝ CTH 61. II):

[5] Բնօրինակը (VAT 6165 =KBo III 4 = 2 BoTU 48) գտնվում է Անկարայի թանգարանում:

կան վնասված և կորսված հատվածներ: Նրան են գալիս լրացնելու մի քանի կցաբեկորներ, որոնք ներառված են աշխատության մեջ՝ KBo XVI 1 II 1-61; KBo XVI 4 1-12; KBo XVI 2 I 1-5; KBo XVI 1 II 51-64; KBo XVI 1 II 28-41; KBo XVI 1 II 62-67; KUB XVI 1 III 1-53; KUB XIX 38 III 3-17; KUB XIX 38 IV 1-22; KBo XVI 3 1-4:

****

«Տասնամյա» տարեգրությունում իրադարձություններն ունեն հետևյալ հաջորդականությունը՝

0. Նախաբան,

1-ին տարի. Դուրմիտտա, Խալիլա, Դուդդուսգա, Իսխուպիտտա երկրների հնազանդեցումը,

2-րդ տարի. արշավանքներ դեպի Կատխահդդուվա քաղաք, Իսխուպիտտա երկիր և Կամմամա քաղաք,

3-րդ տարի. Տիկկուկուվա քաղաքի և Դասմախա երկրի նվաճումը, Պիսխուրու երկրի թշնամու ջախջախումը Պալխուիսայի մոտ, ռազմական գործողություններ Արցավայի դեմ, Վալմայի ճակատամարտը, Ապասա մայրաքաղաքի գրավումը, Արիննանդա լեռան երկրի հպատակեցումը,

4-րդ տարի. ռազմական գործողությունների շարունակումը Արցավայի Պուրանդա քաղաքի մոտ, Սեխա գետի երկրի և Միրա երկրի հնազանդեցումը,

5-րդ տարի. Ասխարպայա լեռան երկրի և Արավաննա երկրի գրավումը,

6-րդ տարի. Տարիկարիմու լեռան կասկերի հնազանդեցումը և Զիխարիյա երկրի նվաճումը,

7-րդ տարի. Տիբիյա կասկական երկրի նվաճումը,

8-րդ տարի. իրադարձությունների նկարագրությունը կորսված է,

9-րդ տարի. Կաննուվարայի ճակատամարտը, Յախրեսսա քաղաքի և Պիգայնարեսսա երկրի հնազանդեցումը,

10-րդ տարի. Ազզիի Արիպսա և Դուկկամմա քաղաքների նվաճումը:

Վերջաբան

«Տասնամյա» տարեգրությունն ամբողջական (զուգահեռ նաև «Ընդարձակ» տարեգրությունը) առաջին անգամ հրատարակել է Ա. Գյոթցեն[6], այնուհետև նոր կցաբեկորների ներառմամբ վերահրատարակել է Ժ.-Պ. Գրելուան[7]: Հայագիտական ուսումնասիրություններում տեղ է գտել տեքստի առանձին հատվածների տառադարձումը և թարգմանությունը[8]: Տեքստի հայերեն ամբողջական թարգմանություն մինչ օրս չէր իրականացվել: Հաշվի առնելով Մուրսիլի II-ի տարեգրությունների կարևորությունը հատկապես Հայաստանի հին շրջանի պատմության ուսումնասիրման համար՝ ձեռնարկվեց սույն աշխատանքը[9]:

Տարեգրության թարգմանությունը, տառադարձումը, մեկնաբանությունները կատարելիս հաշվի ենք առել վերջին տարիների սեպագրագիտության նոր մոտեցումները: Աշխատության վերջում տրվել են Տարեգրության սեպագիր աղյուսակները: Առանձին ներկայացվել են նաև Տարեգրության մեջ տեղ գտած անձնանունների և տեղանունների ցանկերը՝ մեկնաբանություններով հանդերձ:

Աշխատությունում օգտագործել ենք մի շարք հատուկ նշաններ, հապավումներ, որոնց ամբողջական ցուցակը տրված է սկզբնամասում: Սույն ուսումնասիրության մեջ օգտագործվել են հետևյալ սկզբունքները՝

- ներկայացվել է Տարեգրության ամբողջական տառադարձումն՝ ըստ տարիների, այնուհետև տրվել է ամբողջական թարգմանությունը,
- հիմնական տեքստին զուգահեռ, լրացնող հատվածները (եթե այդպիսիք առկա են) նշվել են տողատակով,
- տառադարձման ժամանակ նշվել են մեր կամ այլ հեղինակների նկատառումները տեքստում տեղ գտած բացթողումների կամ սխալների վերաբերյալ,
- թարգմանության ժամանակ որոշ բառեր կամ բառակապակցություններ ավելի հասկանալի դարձնելու համար տրվել են նաև մեր մեկնաբանությունները դրանց վերաբերյալ,
- հատուկ անունների դեպքում պահպանվել է այժմ խեթագիտության մեջ ընդունված գրելաձևը,

---

[6] AM.

[7] ADM. Կան հրատարակված նաև Տարեգրության կցաբեկորները (տես՝ Otten, 1955, S. 162-165.):

[8] Մարտիրոսյան, 1959, էջ 108-113: ИЛР, с. 28-30. Хачатрян, 1971, с. 62, 65. Ադոնց, 1972, էջ 38-42: Մանանդյան, 1984, էջ 503-516: Խաչատրյան, 1998, էջ 69-70: Ղազարյան, 2009, էջ 127:

[9] *Հեղինակը իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի վարիչ, պ.գ.դ. Արամ Քոսյանին՝ սույն աշխատությունը խմբագրելու և օգտակար խորհուրդներ տալու համար:*

- զուգահեռներ են անցկացվել «Ընդարձակ» տարեգրության համաժամանակյա տեքստերի հետ, որպեսզի պատկերն ամբողջական լինի,
- տեքստում օգտագործված շումերերեն բառերը, վերջավորությունները, սահմանիչները (դետերմինատիվները) տառադարձման ժամանակ տրվել են լատիներեն մեծատառերով, իսկ աքքադերեն բառերը՝ շղագիր լատիներեն մեծատառերով (առանձին ցանկերով տեղ են գտել Հավելվածում),
- սահմանիչները, շումերագիր և աքքադագիր վերջավորությունները տրվել են բառերի վերևի մասում,
- Հավելվածում տրվել են ցանկեր, որտեղ տեղ են գտել Տարեգրությունում հիշատակված հատուկ անուններն՝ իրենց համառոտ մեկնաբանություններով:

ՄՈՒՐՍԻԼԻ II-Ի «ՏԱՍՆԱՄՅԱ» ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

KBo III 4 = 2 BoTU 48

(ԳԱՀԱԿԱԼՈՒՄ)

ԴԿ I

1[10]. [(*UM-MA* ^{D}UTU[11])]^{ŠI} ^{m}Mur-ši-li LUGAL.GAL LUGAL ^{KUR}Ḫa-at-ti UR.SAG
2. [(DUMU ^{m}Šu-up)][12]-pí-lu-li-u-ma LUGAL.GAL UR.SAG

---

3. ku-it-ma-an-za-kán *A-NA* ^{GIŠ}GU.ZA *A-BI-YA* na-wi$_5$ e-eš-ḫa-at nu-mu a-ra-aḫ-zé-na-aš
4. KUR.KUR^{MEŠ} ^{LÚ}KÚR ḫu-u-ma-an-te-eš ku-u-ru-ri-ya-aḫ-ḫi-ir nu-za *A-BU-YA* ku-wa-pí DINGIR^{LIM}-iš DÙ-at
5. ^{m}Ar-nu-an-da-aš-ma-za-kán ŠEŠ-*YA* *A-NA* ^{GIŠ}GU.ZA *A-BI-ŠU* e-ša-at EGIR-an-ma-aš
6. ir-ma-li-ya-at-ta-at-pát ma-aḫ-ḫa-an-ma KUR.KUR^{MEŠ} ^{LÚ}KÚR ^{m}Ar-nu-an-da-an ŠEŠ-*YA* ir-ma-an
7. iš-ta-ma-aš-šir nu KUR.KUR^{MEŠ} ^{LÚ}KÚR ku-u-ru-ri-ya-aḫ-ḫi-iš-ki-u-an da-a-ir

---

8. ma-aḫ-ḫa-an-ma-za ^{m}Ar-nu-an-da-aš ŠEŠ-*YA* DINGIR^{LIM}-*š* ki-ša-at nu KUR.KUR<^{MEŠ}>[13] ^{LÚ}KÚR *Ú-UL*-ya ku-i-e-eš ku-u-ru-ri-ya-aḫ-ḫe-eš-kir
9. nu a-pu-u-uš-ša KUR.KUR^{MEŠ} ^{LÚ}KÚR ku-u-ru-ri-ya-aḫ-ḫi-ir nu a-ra<-aḫ->zé-na-aš KUR.KUR ^{LÚ}KÚR ki-iš-ša-an
10. me-mi-ir *A-BU-ŠU*-wa-aš-ši ku-iš LUGAL ^{KUR}Ḫat-ti e-eš-ta nu-wa-ra-aš UR.SAG-iš LUGAL-uš e-eš-ta
11. nu-wa-za KUR.KUR^{MEŠ} ^{LÚ}KÚR tar-aḫ-ḫa-an ḫar-ta nu-wa-ra-aš-za DINGIR^{LIM}-iš DÙ-at DUMU-*ŠU*-ma-wa-aš-ši-za-kán

---

[10] Այս հատվածի (KBo III 4 ԴԿ I 1-40) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KBo XVI 1 ԴԿ II 1-61-ում:
[11] AM, S. 14.
[12] Նույն տեղում:
[13] Տեքստում շում.՝ MEŠ հոգնակիակերտ բառը բաց է թողնված: Հավանաբար, գրչի սխալն է:

(ԳԱՀԱԿԱԼՈՒՄ)

1. [(Այսպես եմ ասում ես՝ Արևս (խեթական արքաների տիտղոսը - Ռ.Ղ.))], Մուրսիլին՝ մեծ արքան, Խաթթի երկրի արքան, հերոսը,
2. [(որդին Սուպ)]պիլուլիումայի՝ մեծն արքայի, հերոսի:

---

3. Դեռ չէի բազմել ես հորս գահին, հարևան
4. բոլոր երկրները թշնամացան ինձ հետ: Եվ երբ հայրս աստված դարձավ (մահացավ - Ռ.Ղ.),
5. Առնուվանդան՝ եղբայրս, իր հոր գահին բազմեց: Բայց հետո նա
6. նույնպես հիվանդացավ: Երբ թշնամի երկրները եղբորս՝ Առնուվանդայի հիվանդության
7. մասին իմացան, թշնամի երկրները սկսեցին պատերազմել:

---

8. Երբ եղբայրս՝ Առնուվանդան, աստված դարձավ, բոլոր այն երկրները, որ դեռ չէին թշնամացել,
9. այդ երկրները նույնպես թշնամացան: Հարևան թշնամի երկրները այսպես
10. էին ասում. «Նրա հայրը, որ Խաթթի երկրի արքան էր, հերոս արքա էր
11. և հաղթում էր թշնամի երկրներին: Նա աստված դարձավ: Նրա որդին,

4681

12. ku-iš *A-NA* ^{GIŠ}GU.ZA *A-BI-ŠU* e-ša-at nu-wa a-pa-a-aš-ša ka-ru-ú ^{LÚ}LAMMA-an-za e-eš-ta
13. nu-wa-ra-an ir-ma-li-at-ta-at nu-wa-za a-pa-a-aš-ša DINGIR^{LIM}-iš ki-ša-at

---

14. ki-nu-un-ma-wa-za-kán ku-iš *A-NA* ^{GIŠ}GU.ZA *A-BI-ŠU* e-ša-at nu-wa-ra-aš DUMU-la-aš
15. nu-wa ^{KUR}Ḫat-ti ZAG$^{HI.A}$ ^{KUR}Ḫa-at-ti-ya-wa *Ú-UL* TI-nu-zi

---

16. *A-BU-YA*-ma-kán *I-NA* KUR ^{URU}Mi-it-ta-an-ni ku-it an-da a-ša-an-du-le-eš-ki-it
17. na-aš-kán a-ša-an-du-li an-da iš-ta-an-da-a-it *ŠA* ^{D}UTU ^{URU}A-ri-in-na-ma-kán GAŠAN-*YA*
18. EZEN$_4^{ḪI.A}$ ša-ku-wa-an-da-re-eš-ke-er

---

19. ma-aḫ-ḫa-an-ma-za-kán ^{D}UTU^{ŠI} *A-NA* ^{GIŠ}GU.ZA *A-BI-YA* e-eš-ḫa-at nu-mu a-ra-aḫ-zé-na-aš KUR.KUR ^{LÚ}KÚR
20. ku-i-e-eš ku-u-ru-ri-ya-aḫ-ḫi-ir nu *A-NA* KUR ^{LÚ}KÚR na-wi$_5$ ku-it-ma-an ku-e-da-ni-ik-ki
21. pa-a-un nu *A-NA ŠA* ^{D}UTU ^{URU}A-ri-in-na-pát GAŠAN-*YA* SAG.UŠ-aš *A-NA* EZEN$_4^{ḪI.A}$ EGIR-an ti-ya-nu-un
22. na-aš-za i-ya-nu-un nu *A-NA* ^{D}UTU ^{URU}A-ri-in-na GAŠAN-*YA* ŠU-an ša-ra-a e-ep-pu-un
23. nu ki-iš-ša-an *AQ-BI* ^{D}UTU ^{URU}A-ri-in-na GAŠAN-*YA* a-ra-aḫ-zé-na-aš-wa-mu-za KUR.KUR ^{LÚ}KÚR ku-i-e-eš
24. DUMU-la-an ḫal$^{!}$-zi-eš-šir[14] nu-wa-mu-za te-ep-nu-uš-kir nu-wa tu-el *ŠA* ^{D}UTU ^{URU}A-ri-in-na
25. GAŠAN-*YA* ZAG$^{ḪI.A}$ da-an-na ša-an-ḫi-iš-ki-u-an da-a-ir nu-wa-mu ^{D}UTU ^{URU}A-ri-in-na GAŠAN-*YA*
26. kat-ta-an ti-ya nu-wa-mu-kán u-ni a-ra-aḫ-zé-na-aš KUR.KUR ^{LÚ}KÚR pé-ra-an ku-en-ni
27. nu-mu ^{D}UTU ^{URU}A-ri-in-na me-mi-an iš-ta-ma-aš-ta na-aš-mu kat-ta-an ti-ya-at

---

[14] Տեքստում ḫal-zi-eš-šir բառի առաջին ⊢(ḫal) սեպանշանի փոխարեն գրված է ⊢ (aš) սեպանշանը, որը գրչի սխալ է:

12. որ իր հոր գահին էր բազմել, նույնպես հզոր էր:
13. Սակայն նա հիվանդացավ և նույնպես աստված դարձավ:

---

14. Այժմ, ով զբաղեցնում է իր հոր գահը, երեխա է:
15. Խաթթի երկրի սահմանները և Խաթթի երկիրը նա չի կարողանա պահպանել»:

---

16. Հայրս Միտտանի երկրում էր գտնվում:
17. Եվ երբ նա այնտեղ էր, Արիննա քաղաքի Արևի աստվածուհու՝ իմ տիրուհու
18. տոները չէին նշվում:

---

19. Երբ ես՝ Արևս, բազմեցի հորս գահին, հարևան թշնամի երկրները
20. թշնամացան: Ես դեպի այդ թշնամի երկրները
21. չգնացի, որովհետև Արիննա քաղաքի Արևի աստվածուհու՝ տիրուհուս նվիրված ամենամյա տոները պետք է նշեի:
22. Եվ տոները նշեցի: Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհուն՝ տիրուհուս, ձեռքս մեկնեցի
23. և այսպես ասացի. «Արիննա քաղաքի Արևի աստվածուհի՝ տիրուհիս, հարևան թշնամի երկրները, որոնք
24. երեխա են ինձ անվանում, անարգում են ինձ: Եվ քո՝ Արիննա քաղաքի Արևի աստվածուհու՝
25. տիրուհուս սահմանների վրա են հարձակվում: Արիննա քաղաքի Արևի աստվածուհի՝ տիրուհիս,
26. աջակցիր ինձ և այդ թշնամի հարևան երկրներին կործանիր:
27. Եվ իմ խոսքը Արիննա քաղաքի Արևի աստվածուհին լսեց և ինձ աջակցեց:

28. nu-za-kán *A-NA* ^{GIŠ}GU.ZA *A-BI-YA* ku-wa-pí e-eš-ḫa-at nu-za ke-e a-ra-aḫ-zé-na-aš

29. KUR.KUR^{MEŠ} ^{LÚ}KÚR *I-NA* MU.10.KAM tar-aḫ-ḫu-un na-at-kán ku-e-nu-un

---

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

30. *ŠA* KUR ^{URU}Dur-mi-it-ta-mu ^{URU}Ga-aš-ga-aš ku-u-ru-ri-ya-aḫ-ta nu[(-mu za-aḫ-ḫi-ya)][15]

31[16]. nam-ma ^{URU}Qa-aš-qa-aš ú-it-pát nu KUR ^{URU}Dur-mi-it-ta GUL-an-ni-iš-ki-u-an [(da-a-aš)][17]

32. nu-uš-ši ^{D}UTU^{ŠI} pa-a-un nu *ŠA* KUR[18] ^{URU}Ga-aš-ga ku-i-e-eš SAG.DU^{MEŠ} KUR.KUR^{ME}[(^{Š} ^{URU}Ḫa-li-la)][19]-aš

33. ^{URU}Du-ud-du-uš-ga-aš-ša e-šir na-aš GUL-un na-aš *IŠ-TU* NAM.RA GUD$^{ḪI.A}$ UDU$^{ḪI.A}$

34. [(ša)]-ra-a da-aḫ-ḫu-un na-aš ^{URU}KÙ.BABBAR-ši ar-ḫa ú-da-aḫ-ḫu-un

35. [(^{URU}Ḫa)]-li-la-an-ma ^{URU}Du-ud-du-uš-ga-an-na ar-ḫa wa-ar-nu-nu-un

---

36. [(ma-aḫ-ḫ)]a-an-ma KUR ^{URU}Ga-aš-ga *ŠA* ^{URU}Ḫa-li-la *Ù ŠA* ^{URU}Du-ud-du-uš-ga ḫar-ni-in-ku-u-ar

37. [(iš-t)]a-ma-aš-ta nu KUR ^{URU}Ga-aš-ga ḫu-u-[(ma-an)] an-da wa-ar-re-eš-še-eš-ta

38. [(na-at-m[20]-)]u MÈ-ya <<aš>> ú-it na-an ^{D}UTU^{ŠI} MÈ-ya-nu-un nu-mu ^{D}UTU ^{URU}A-ri-in-na

39. [(GAŠAN-*YA*)] ^{D}U NIR.GÁL EN-*YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš DINGIR^{MEŠ} ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an [ḫu]-i-e-er

40. [(nu-za *ŠA* K[21])]UR ^{URU}Kaš-ga ÉRIN^{MEŠ} *NA-RA-RÙ* tar-aḫ-ḫu-un na-an-kán ku-e-nu-un

---

[15] ADM, p. 56.
[16] Այս հատվածի (KBo III 4 ԴԿ I 31-44) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KBo XVI 4 ԴԿ I 1-12-ում:
[17] ADM, p. 56.
[18] AM-ում KUR բառը բաց է թողնված (տես՝ AM, S. 22):
[19] AM, S. 22.
[20] Նույն տեղում:
[21] AM, S. 24.

28. Եվ երբ ես բազմեցի հորս գահին, այդ հարևան

29. թշնամի երկրներին տասը տարվա ընթացքում հաղթեցի: Եվ կործանեցի նրանց:

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

30. Դուրմիտտա երկրի կասկերը թշնամացան և [(կռվի ելան իմ դեմ)]:

31. Այնուհետև կասկերը սկսեցին պարբերաբար Դուրմիտտա երկրի վրա հարձակվել [(և գրավեցին այն)]:

32. Եվ նրանց դեմ ես՝ Արևս, գնացի: Եվ կասկերի գլխավոր երկրներն էին [(Խալիլա)]ն և

33. Դուդդուսգան, որոնք նվաճեցի: Եվ այնտեղից գերիներ, կովեր, ոչխարներ

34. վերցրի և նրանց Խաթթուսա ուղարկեցի:

35. [(Խա)]լիլա և Դուդդուսգա քաղաքները այրեցի:

---

36. [(Երբ)] կասկերի երկրում Խալիլա և Դուդդուսգա քաղաքների ավերման մասին

37. լսեցին, բոլոր կասկերը օգնության եկան:

38. Եվ կռվի ելան իմ դեմ: Իսկ ես՝ Արևս, ճակատամարտ տվեցի նրանց: Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝

39. [(տիրուհիս)], Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին և աստվածները բոլոր ինձ հետ էին:

40. [(Եվ)] կասկերի երկրի օգնական զորքերին հաղթեցի և նրանց ոչնչացրի:

41. [(nu-za *ŠA* KUR ^{URU})][22]Dur-mi-it-ta ^{URU}Ga-aš-ga-aš da-a-an EGIR-pa ÌR-aḫ-ta-at

42. [(nu-mu ÉRIN^{MEŠ})][23] pé-eš-ki-u-an da-a-ir

43[24]. [(nam-ma ^{D}UTU^{Ši} EGIR[25])]-pa ú-wa-nu-un nu-mu *ŠA* KUR ^{URU}Iš-ḫu-pí-it-ta ku-it ^{URU}Ga-aš-ga-aš

44. [(ku-u-ru-ri-ya-aḫ-ḫa-an ḫar-t[26])]a nu-mu ÉRIN^{MEŠ} *Ú-UL* pé-eš-ki-it nu ^{D}UTU^{Ši} *I-NA* KUR ^{URU}Iš-ḫu-pí-it-ta

45. [(pa-a-un nu ^{URU}x-[27])]ḫu[28]-mi-eš-še-na-an GUL-un na-an *IŠ-TU* NAM.RA GUD UDU

46. [(ša-ra-a da-aḫ-ḫu-un)][29] na-an ^{URU}KÙ.BABBAR-ši ar-ḫa ú-da-aḫ-ḫu-un URU-[an-m]a ar-ḫa

47. [wa-ar-nu-nu-un nu-za *ŠA*)][30] KUR ^{URU}Iš-ḫu-pí-it-ta ^{URU}Ga-aš-ga da-a-an EGIR-pa ÌR-aḫ-ḫu-un

48[31]. [nu-mu ÉRIN^{MEŠ} pé-eš-ki-u-an da-a-i]r[32] nu ki-i [.....][33] *I-NA* MU.1.KAM i-ya-nu-un

---

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

49. [(MU-an-ni-ma *I-NA* KUR ^{URU}UGU[7])][34] pa-a-un nu-mu KUR ^{URU}Ti-pí-ya ku-it ku-u-ru-ri-ya-aḫ-ḫa-<an> ḫar-ta

---

[22] Նույն տեղում:
[23] Նույն տեղում:
[24] Այս հատվածի (KBo III 4 ԴԿ I 43-45) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KBo XVI 2 I 1-5-ում:
[25] AM, S. 24.
[26] Նույն տեղում:
[27] Նույն տեղում:
[28] Այս վանկի հատվածը կարող է և' -ḫu-ի, և' -ri-ի, և' ar-ի մասը լինել:
[29] AM, S. 26.
[30] Նույն տեղում:
[31] Այս հատվածի (KBo III 4 ԴԿ I 48-60) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KBo XVI 1 ԴԿ II 51-64-ում:
[32] Նույն տեղում:
[33] Այս վնասված հատվածում, հավանաբար, ոչ մի բառ չի եղել, պարզապես բառերի միջև լայն միջակայք է թողնվել:
[34] Նույն տեղում:

41. [(Եվ)] կասկերի Դուրմիտտա երկիրը կրկին հպատակեցրի:

42. [(Եվ ինձ զորքեր)] սկսեցին տալ:

---

43. [(Այնուհետև ես՝ Արևս, վեր)]ադարձա: Եվ իմ դեմ Իսխուպիտտա երկրի կասկերը

44. [(սկսեցին թշնամություն անել)]: Եվ ինձ զորքեր չէին ուղարկում: Եվ ես՝ Արևս, դեպի Իսխուպիտտա երկիր

45. [(գնացի: Եվ քաղաք x-)]ḫu-mi-eš-še-na-an ոչնչացրեցի: Եվ այնտեղից գերիներ, կովեր, ոչխարներ

46. [(վերցրեցի:)] Եվ նրանց Խաթթուսա ուղարկեցի: Իսկ քաղաքը

47. [(այրեցի: Եվ)] Իսխուպիտտա երկրի կասկերին կրկին հպատակեցրի:

48. [(Եվ ինձ պարբերաբար սկսեցին զորքեր ուղարկե)]լ: Եվ այս ամենը [....] մեկ տարում արեցի:

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

49. [(Հաջորդ տարի դեպի Վերին երկիր)] գնացի, քանի որ Տիբիյա երկիրը թշնամացել էր ինձ հետ

50. [(nu-mu ÉRIN^{MEŠ} *Ú-UL* pé-eš-ki-it n[35])]u ^{D}UTU^{Ší} ^{URU}Kat-ḫa-id-du-wa-an GUL-un

51. [(na-an *IŠ-TU* NAM.RA GUD UDU ^{URU}K[36])]Ù.BABBAR-ši ar-ḫa ú-da-aḫ-ḫu-un

52. [(URU-an-ma ar-ḫa wa-ar-nu-nu-u[37])]n

---

53. [(nam-ma *IŠ-TU* KUR ^{URU}Ti-pí-ya EGIR-pa *I-NA* ^{URU}KÙ.BABBAR-ši ú-wa[38])]-nu-un nu KUR ^{URU}Iš-ḫu-pí-it-ta ku-it

54. [(ku-ru-ur eš-ta nu)] [.....] [(na-at-za da[39])]-a-an EGIR-pa tar-aḫ-ta nu-kán a-pí-ya

55. [(ku-i-e-eš]) [.....])] iš-pár-te-er

56. [(^{m}Nu-un-nu-ta-aš)] [.....])][40] na-aš-kán *I-NA* KUR ^{URU}Ga-aš-ga [.....]

57. [([.....] [(nu-kán)] [.....r])]a-aš-ta[41]

58.[(nu ^{D}UTU^{Ší}[.....] an-tu-uḫ-še-eš)][42] SAG.DU^{MEŠ} BAL

59. [([.....] na-aš-kán [.....] nu ^{D})][43]UTU^{Ší} ^{URU}Kam!-ma-ma-an

60. [(za-aḫ-ḫi-ya-nu-un nu-mu ^{D}UTU ^{URU}A-ri-in-na GAŠAN-*YA* ^{D}U NIR.GÁL EN-*YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš)][44]

Bo II 43

ԴԿ II

24[45]. DINGIR^{MEŠ} [(ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an ḫu-u-i-e-er[46])]

---

[35] AM, S. 28.
[36] Նույն տեղում:
[37] Նույն տեղում:
[38] AM, S. 30.
[39] Նույն տեղում:
[40] Նույն տեղում:
[41] AM-ում այս վնասված հատվածը վերականգված է՝ [nu-kán ..... iš-pár-za] (տես՝ AM, S. 30), սակայն ավելի հավանական է ADM-ում տեղ գտած վերականգնումը՝ -r]a: Վերջին սեպանշանը ոչ թե za է (𒍪), այլ՝ ar (𒄀) (տես՝ ADM, p. 57):
[42] ADM, p. 57.
[43] AM, S. 32.
[44] ADM, p. 57.
[45] Այս հատվածի (Bo II 43 ԴԿ II 24-41) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KBo XVI 1 ԴԿ II 28-64-ում:
[46] AM, S. 34.

50. [(և այլևս զորքեր չէր ուղարկում ինձ: Ե)]վ ես՝ Արևս, Կատխահիդդուվա քաղաքին հաղթեցի:

51. [(Եվ գերիներ, կովեր, ոչխարներ)] Խաթթուսա ուղարկեցի:

52. [(Իսկ քաղաքը այրեց)]ի:

---

53. [(Այնուհետև Տիբիյա երկրից Խաթթուսա վերադար)]ձա: Բայց քանի որ Իսխուպիտտա երկիրը

54.[(թշնամացել էր: Եվ [.....]: Եվ նրան)] կրկին հաղթեցի: Եվ այնտեղ

55. [որ [.....])] փախել:

56. [(Նուննուտան [.....:])] Եվ նա դեպի կասկերի երկիր [.....]

57. [([.....:] Եվ [.....])]

58. [(Եվ ես՝ Արևս, [.....] մարդկանց,)] ապստամբների առաջնորդներին

59. [([.....]: Եվ նրանց [.....] Եվ ես՝ Ա)]րևս, Կամմամա քաղաքի

60. [(վրա հարձակվեցի: Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս, Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին)]

---

24. աստվածները [(բոլոր ինձ հետ էին:)]

25.nu-za [(^{URU}Kam-ma-ma-an tar-aḫ-ḫu-un na-an *IŠ-TU* NAM.RA[47])]
26. GUD UDU [(ša-ra-a da-aḫ-ḫu-un na-an ^{URU}Ḫa-at-tu-ši[48])]
27. ar-ḫa [(ú-da-aḫ-ḫu-un URU-an-ma ar-ḫa wa-ar-nu-nu-un[49])]
28. nu ki[(-i *I-NA* MU.1.KAM i-ya-nu-un[50])]

(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

29. MU-an-ni-m[a .....[51]]
30. ŠEŠ-*YA* an[(da [....] nu-mu ÉRIN^{MEŠ} ^{URU}Ḫu-wa-ar-ša-na-aš-ša[52])]
31. *Ù* ÉRIN^{MEŠ} ^{URU}[([.....] pé-ra-an ar-ḫa pár-še-er[53])]
32. na-at-kán *I*-[(*NA* KUR ^{URU}Ar-za-u-wa an-da ú-e-er)[54]]
33. nu *A-NA* ^{m}Uḫ-[(ḫa-LÚ ^{LÚ}*ṬE₄-MA* u-i-ya-nu-un[55])]
34.nu-uš-ši ḫa-a[(t-ra-a-nu-un am-me-el-wa-at-ták-kán ku-i-e-eš[56])]
35. an-tu-u-uḫ-ša-aš [(ÉRIN^{MEŠ} ^{URU}At-ta-a-ri-im-ma[57])]
36. ÉRIN^{MEŠ} ^{URU}Ḫu-wa-a[(r-ša-na-aš-ša *Ù* ÉRIN^{MEŠ} ^{URU}Šu-ru-da[58])]
37. an-da ú-e-er [(nu-wa-ra-aš-mu EGIR-pa pa-a-i[59])]
38. ^{m}Uḫ-ḫa-LÚ-iš-ma-m[(u EGIR-pa ki-iš-ša-an ḫa-at-ra-a-it[60])]
39.*Ú-UL*-wa-at-ta k[(u-it-ki EGIR-pa pí-iḫ-ḫi nu-wa-ra-aš-mu-kán[61])]
40. [(ma-aḫ)]-ḫa-an GÉŠPU-z[(a.....)]
41. [([.....] ÌR^{MEŠ}-*ŠU* [.....][62])]

---

[47] Նույն տեղում:
[48] Նույն տեղում:
[49] AM, S. 36.
[50] Նույն տեղում:
[51] Ա. Գյոթցեն հավանական է համարում, որ այստեղ խոսքը Մուրսիլի II-ի եղբոր՝ Կարգամիսի արքա Շարրիկուշուխի (Պիյասսիլի) կամ Առնուվանդա II-ի մասին է (տես՝ AM, S. 38, հղում 25a): Ավելի հավանական է, որ խոսքը Կարգամիսի արքայի մասին է:
[52] ADM, p. 58.
[53] AM, S. 38.
[54] Նույն տեղում:
[55] AM, S. 40.
[56] Նույն տեղում:
[57] Նույն տեղում:
[58] Նույն տեղում:
[59] Նույն տեղում:
[60] Նույն տեղում:
[61] Նույն տեղում:
[62] ADM, p. 58.

25. Եվ [(Կամմամա քաղաքը նվաճեցի և գերիներ,)]
26. կովեր, ոչխարներ [(վերցրի: Եվ նրանց Խաթթուսա)]
27. [(վերադարձրի, իսկ քաղաքը այրեցի:)]
28. Եվ այ[(ս ամենը մեկ տարում արեցի:)]

(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

29. Հաջորդ տարի[.....]
30. եղբայրս [([.....] Եվ ինձ Խուվարսանասա քաղաքի զորքերը,)]
31. և զորքերը քաղաք [([.....] փախուստի դիմեցին:)]
32. Եվ [(Արցավա երկիր մտան:)]
33. Եվ Ուխ[(խացիտիի մոտ մունետիկ ուղարկեցի:)]
34. Եվ նրան գ[(րեցի. «Իմ այն)]
35. մարդիկ, [(Ատտարիմմա քաղաքի զորքերը,)]
36. զորքերը քաղաք Խուվա[(րսանասայի և զորքերը Սուրուդա քաղաքի,)]
37. որ եկան քեզ մոտ, [(նրանց վերադարձրու»:)]
38. Սակայն Ուխխացիտին ինձ [(այսպես գրեց.)]
39. «Ոչինչ [(քեզ չեմ վերադարձնի: Եվ դու ինձ)]
40. [(երբևէ չես)] ստիպի [.....]
41. [([.....] իր հպատակները [.....])]

KBo XVI 1

ԴԿ II

51. [([.....] x [(..... nu-mu])][64]
52. [(*I-NA* ^{URU}Ti-ik-ku-u[65])]k-ku-wa EGIR-an za-aḫ-ḫi-y[(a ti-ya-at[66])]
53. [(na-an ^{D}UTU^{Ši} za-a[67])]ḫ-ḫi-ya-nu-un nu-mu ^{D}UTU ^{URU}[(A-ri-in-na[68])]
54. [(GAŠAN-*YA* ^{D}U NIR.GÁ[69])]L EN-*YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš [(DINGIR^{MEŠ}[70])]
55. [(ḫu-u-ma-an-te-[71])]eš pé-ra-an ḫu-i-e-er nu-za ^{LÚ}[(KÚR[72])]
56. [(tar-aḫ-ḫu-un[73])] na-an-kán ku-e-nu-un nu ^{URU}Ti-i[(k-ku-uk-ku-wa-an[74])]
57. [(URU-an ar-ḫa)][75] wa-ar-nu-nu-un KUR ^{URU}Da-aš-ma[(-ḫa-ma[76])]
58. [(KUR-e ar-ḫa[77])] wa-ar-nu-nu-un

59[78]. [(.....-i)]t-ta-ka-at-ta ^{D}UTU[(^{Ši})]
60. [.....] wa-al-ḫu-u[(n)]
61. [.....]
62. [.....-]un
63. [.....]
64. [.....-]a-an

---

[63] AM-ում տեքստը ընդհատվում է և սկսվում է KBo III 4 ԴԿ II-ով, իսկ ADM-ում 41-րդ տողից հետո նշված է բացթողում, որից հետո շարունակվում է KBo XVI 1 ԴԿ II 51-րդ տողից և շարունակվում մինչև 64-րդ տողը: Տես նաև՝ Otten H. Neue Fragmente zu den Annalen des Muršili, MIO, 1955, 3, S. 163.
[64] ADM, p. 58.
[65] Նույն տեղում:
[66] Նույն տեղում:
[67] Նույն տեղում:
[68] Նույն տեղում:
[69] Նույն տեղում:
[70] Նույն տեղում:
[71] ADM, p. 59.
[72] Նույն տեղում:
[73] Նույն տեղում:
[74] Նույն տեղում:
[75] Նույն տեղում:
[76] Նույն տեղում:
[77] Նույն տեղում:
[78] 59-64-րդ տողերը վնասված են և դժվարընթեռնելի, ADM-ում կա դրանց մոտավոր վերականգնումը, տառադարձումը և թարգմանությունը (տես՝ ADM, p. 59):

51. [.....] x [.....: Եվ]
52. [(դեպի քաղաք Տիկկու)]կուվա ճակատամարտ[(ի գնացի:)]
53. [(Եվ նրան ես՝ Արևս, հաղ)]թեցի: Եվ [(Արիննա)] քաղաքի Արևի աստվածուհին,
54. [(տիրուհիս, Ամպրոպի հզոր աստվա)]ծը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին, [(աստվածները)]
55. [(բոլո)]ր ինձ հետ էին: Եվ թ[(շնամուն)]
56. [(հաղթեցի,)] նրան ոչնչացրի: Եվ Տի[(կկուկուվա)]
57. [(քաղաքն)] այրեցի, Դասմա[(խա)] երկիրը նույնպես,
58. [(երկիրն այդ)] այրեցի:

---

59. [.....]..... ես՝ Արև[ս]
60. [.....] x x x հարձակվեց[ի]
61. [.....]
62. [.....]
63. [.....]
64. [.....]

KBo III 4 = 2 BoTU 48

ԴԿ II

1'[79]. [.....]
2'. na-a[(n.....)]
1. nam-ma [(pa-ra[80])]-a *I-NA* ^{URU}Iš-ḫu-pí-it-ta pa-a-un nu ^{URU}[(Pal-ḫu-iš-ša-an[81])]
2. GUL-un nu-mu-uš-ša-an *I-NA* ^{URU}Pal-ḫu-iš-ša EGIR-an [(^{LÚ}KÚR ^{URU}Pí-[82])]iš-ḫu-ru-uš
3. MÈ-ya ti-ya-at na-ši[83] za-aḫ-ḫi-ya-nu-un nu-mu ^{D}UTU ^{URU}A-ri-in-na GAŠAN-*YA*
4. ^{D}U NIR.GÁL *BE-LÍ-YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš DINGIR^{MEŠ}-ya ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an ḫu-i-e-er
5[84].nu-kán ^{LÚ}KÚR Pí-iš-ḫu-ru-un *I-NA* ^{URU}Pal-ḫu-iš-ša EGIR-an ku-e-nu-un
6. nam-ma URU-an ar-ḫa wa-ar-nu-nu-un

---

7. nam-ma ^{URU}Pal-ḫu-iš-ša-az EGIR-pa *I-NA* ^{URU}KÙ.BABBAR-ti[85] ú-wa-nu-<<aš>>-un[86]
8. nu-za ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ} ni-ni-in-ku-un nam-ma a-pé-e-da-ni MU-ti[87] *I-NA* ^{KUR}Ar-za-u-wa

---

[79] ADM-ում սյունակը սկսվում է այս տողերով, որոնք բացակայում են AM-ում (տես՝ AM, S. 42. ADM, p. 59): Այս հատվածի (KBo III 4 ԴԿ II 1'-2', 1-2) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KBo XVI 1 ԴԿ II 62-67-ում (113/e):
[80] ADM, p. 59.
[81] Նույն տեղում:
[82] Նույն տեղում:
[83] Տեքստում այս հատվածը դժվարընթեռնելի է: Ըստ Ա. Գյոթցեի՝ na-ից հետո տրված է an (𒀭) սեպանշանը, սակայն, ամենայն հավանականությամբ, այն ši (𒋗) սեպանշանն է (տես՝ AM, S. 44):
[84] Այս հատվածի (KBo III 4 ԴԿ II 5-44) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KBo XVI 1 ՀԿ III 1-53-ում:
[85] Տեքստում տրված է ti սեպանշանը (𒋫), իսկ Ա. Գյոթցեն նշել է ši սեպանշանը (𒋗) (տես՝ AM, S. 44):
[86] ú-wa-nu-(aš?)-un բառում գրված aš (𒀀) սեպանշանն ավելորդ է. այն գրչի թույլ տված սխալի արդյունք է:
[87] AM-ում նշված է MU[77] (տես՝ AM, S. 44), սակայն ավելի հավանական է, որ այն գրվի MU-ti, որտեղ ti-ն խեթերեն witti (հայ.՝ տարի) բառի մասնիկն է (տես նաև՝ ADM, p. 59):

1. x[....
2. Եվ նրա[ն.....
1. Այնուհետև դեպի Իսխուպիտտա քաղաք գնացի: Եվ [(Պալխուիսա)] քաղաքին
2. հարվածեցի: Եվ Պալխուիսա քաղաքի մոտ [(թշնամի քաղաք Պի)]սխուրոյի հետ
3. կռվի բռնվեցի: Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս,
4. Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին և աստվածները բոլոր ինձ հետ էին:
5.Եվ Պիսխուրու երկրի թշնամուն Պալխուիսայում ոչնչացրի:
6. Այնուհետև քաղաքը հրդեհեցի:

---

7. Հետո Պալխուիսայից վերադարձա Խաթթուսա:
8. Եվ զորքերը, մարտակառքերը հավաքեցի և հենց այդ տարի դեպի Արցավա երկիր

9. i-ya-an-ni-ya-nu-un-pát *A-NA* ^{m}U-uḫ-ḫa-LÚ-ma ^{LÚ}*ṬE₄-MA* u-i-ya-nu-un

10. nu-uš-ši ḫa-at-ra-a-nu-un ÌR^{MEŠ}-*YA*-wa-at-ták-kán ku-i-e-eš an-da ú-e-er

11. nu-wa-ra-aš-ta EGIR-pa ku-it ú-e-wa-ak-ki-nu-un nu-wa-ra-aš-mu EGIR-pa[88]

12. EGIR-pa *Ú-UL* pa-iš-ta nu-wa-mu-za DUMU-la-an ḫal-ze-eš-še-eš-ta

13. nu-wa-mu-za te-ep-nu-uš-ki-it ki-nu-na-wa e-ḫu nu-wa za-aḫ-ḫi-ya-u-wa-aš-ta-ti

14. nu-wa-an-na-aš ^{D}U *BE-LÍ-YA DĪ-NAM* ḫa-an-na-a-ú

---

15. ma-aḫ-ḫa-an-ma i-ya-aḫ-ḫa-at nu GIM-an *I-NA* $^{ḪUR.SAG}$La-wa-ša a-ar-ḫu-un

16. nu-za ^{D}U NIR.GÁL EN-*YA* pa-ra-a ḫa-an-da-an-da-a-tar te-ek-ku-uš-ša-nu-ut

17. nu ^{GIŠ}kal-mi-ša-na-an ši-ya-a-it nu ^{GIŠ}kal-mi-ša-na-an am-me-el KARAŠ$^{ḪI.A}$-*YA*

18. uš-ki-it KUR ^{URU}Ar-za-u-wa-ya-an uš-ki-it nu ^{GIŠ}kal-mi-ša-na-aš pa-it

19. nu KUR ^{URU}Ar-za-u-wa GUL-aḫ-ta *ŠA* ^{m}U-uḫ-ḫa-LÚ-ya ^{URU}A-pa-a-ša-an URU-an GUL-aḫ-ta

20. ^{m}U-uḫ-ḫa-LÚ-na gi-nu-uš-šu-uš a-še-eš-ta na-aš ir-ma-li-ya-at-ta-at

21. nu ma-aḫ-ḫa-an ^{m}U-uḫ-ḫa-LÚ-iš GIG-at na-aš-mu nam-ma za-aḫ-ḫi-ya

22. me-na-aḫ-ḫa-an-da *Ú-UL* ú-it nu-mu-kán <<nu-mu-kán>>[89] ^{m}SUM-ma-^{D}LAMMA-an DUMU-*ŠU*

23. *QA-DU* ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ} me-na-aḫ-ḫa-an-da pa-ra-a na-eš-ta

24. na-aš-mu *I-NA* ^{ID}A-aš-tar-pa *I-NA* ^{URU}Wa-al-ma-a MÈ-ya ti-ya-at

25. na-an ^{D}UTU^{ŠI} za-aḫ-ḫi-ya-nu-un nu-mu ^{D}UTU ^{URU}A-ri-in-na GAŠAN-*YA*

26. ^{D}U NIR.GÁL *BE-LÍ-YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš DINGIR^{MEŠ}-ya ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an ḫu-i-e-er

27. nu-za ^{m}SUM-ma-^{D}LAMMA-an [(DUMU ^{m}U-uḫ)]-ḫa-LÚ *QA-DU* ÉRIN^{MEŠ}-*ŠU* ANŠE.KUR.RA^{MEŠ}-*ŠU* tar-aḫ-ḫu-un

---

[88] AM-ում տեղ գտած տառադարձման մեջ EGIR-pa բառը բացակայում է, սակայն այն տեքստում առկա է (տես՝ AM, S. 46):

[89] Երկրորդ nu-mu-kán բառը, հավանաբար, գրչի սխալն է:

9. շարժվեցի: Ուխխացիտիի մոտ ես սուրհանդակ ուղարկեցի,

10. և նրան գրեցի. «Իմ հպատակները, որ եկել են քեզ մոտ,

11. որոնց ես պահանջեցի վերադարձնել,

12. սակայն դու չվերադարձրիր, ավելին, ինձ երեխա անվանեցիր

13. և անարգեցիր: Այժմ եկ կռվենք:

14. Եվ Ամպրոպի աստվածը՝ տերս, թող դատավոր լինի մեզ:

---

15. Երբ գնացի և Լավասա լեռանը հասա,

16. Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, իր աստվածային հզորությունը ցույց տվեց:

17. Կայծակով հարվածեց, և իմ զորքը կայծակը

18. տեսավ: Եվ Արցավա երկիրն էլ տեսավ այն: Կայծակը գնաց

19. և Արցավա երկրին հարվածեց: Այն հարվածեց Ուխխացիտիի քաղաք Ապասային:

20. Ուխխացիտիին ծնկի բերեց: Եվ նա հիվանդացավ:

21. Եվ քանի որ Ուխխացիտին հիվանդացավ, նա այդ պատճառով կռվի

22. իմ դեմ դուրս չեկավ: Եվ Պիյամա-Կուրունտային՝ իր որդուն,

23. զորքերի և մարտակառքերի հետ իմ դեմ ուղարկեց:

24. Եվ նա ինձ հետ Աստարպա գետի ափին՝ Վալմա քաղաքի մոտ, կռվի բռնվեց:

25. Եվ նրա հետ ես՝ Արևս, մարտնչեցի: Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս,

26. Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին և աստվածները բոլոր ինձ հետ էին:

27. Եվ Պիյամա-Կուրունտային՝ [(որդուն Ուխխ)]ացիտիի, իր զորքերի և մարտակառքերի հետ միասին հաղթեցի:

28. [(na)]-an-kán ku-e-nu-un nam-ma-[(an)] EGIR-an-pát *AṢ-BAT* nu-kán *I-NA* KUR ^{URU}Ar-za-u-wa
29. [(pár)]-ra-an-da pa-a-un nu *I-NA* ^{URU}A-pa-a-ša *A-NA* URU^{LIM}
30. *ŠA* ^{m}U-uḫ-ḫa-LÚ an-da-an pa-a-un nu-mu ^{m}Uḫ-ḫa-LÚ-iš *Ú-UL* ma-az-za-aš-ta
31. na-aš-mu-kán ˂ḫu-u-wa-iš na-aš-kán a-ru-ni pár-ra-an-da
32. ˂gur-ša-u-wa-na-an-za pa-it na-aš-kán a-pí-ya an-da e-eš-ṭa

---

33. KUR ^{URU}Ar-za-u-wa-ma-kán ḫu-u-ma-an pár-aš-ta nu ku-i-e-eš NAM.RA *I-NA* $^{ḪUR.SAG}$A-ri-in-na-an-da
34. pa-a-ir nu-za-kán $^{ḪUR.SAG}$A-ri-in-na-an-da-an e-ep-pir ku-i-e-eš-ma NAM.RA$^{ḪI.A}$
35. pa-ra-a *I-NA* ^{URU}Pu-ú-ra-an-da pa-a-ir nu-za-kán nu-za-kán[90] ^{URU}Pu-ra-an-da-an e-ep-pir
36. ku-i-e-eš-ma-kán NAM.RA^{MEŠ} a-ru-ni pár-ra-an-da *IT-TI* ^{m}Uḫ-ḫa-LÚ pa-a-ir
37. [(nu)] ^{D}UTU^{ŠI} *I-NA* $^{ḪUR.SAG}$A-ri-in-na-an-da *A-NA* NAM.RA EGIR-an-da pa-a-un
38. nu $^{ḪUR.SAG}$A-ri-in-na-an-da-an za-aḫ-ḫi-ya-nu-un nu-mu ^{D}UTU ^{URU}PÚ-na GAŠAN-*YA* [.....]-ir
39. ^{D}U NIR.GÁL *BE-LÍ-YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš DINGIR^{MEŠ}-ya ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an
40. [(ḫu-u-i-e-er)][91] [...]-u nu-za $^{ḪUR.SAG}$A-ri-in-na-an-da-an tar-aḫ-ḫu-un
41. nu-za ^{D}UTU^{ŠI} ku-in NAM.RA *I-NA* É.LUGAL ú-wa-te-nu-un
42. na-aš 1 SIG$_7$ 5 *LI-IM* 5 ME NAM.RA e-eš-ta ^{URU}KÙ.BABBAR-aš-ma-za EN^{MEŠ} ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ}-ya
43. ku-in NAM.RA^{MEŠ} ú-wa-te-et nu-uš-ša-an kap-pu-u-wa-u-wa-ar
44. NU.GÁL e-eš-ta nam-ma-kán NAM.RA^{MEŠ} ^{URU}KÙ.BABBAR-ši pa-ra-a
45. ne-eḫ-ḫu-un na-an ar-ḫa ú-wa-te-er

---

46. nu-za ma-aḫ-ḫa-an $^{ḪUR.SAG}$A-ri-in-na-an-da-an tar-aḫ-ḫu-un
47. nam-ma EGIR-pa *I-NA* ^{ID}A-aš-tar-pa ú-wa-nu-un nu-za BÀD.KARAŠ

---

[90] Տողում nu-za-kán բառը տրված է երկու անգամ, որը հավանաբար գրչի թույլ տված սխալն է:
[91] Տողը սկսվում է DINGIR^{MEŠ}-ով, սակայն պետք է լինի՝ ḫu-u-i-e-ir: Հավանաբար, գրչի սխալն է (տես՝ AM, S. 56):

28. Եվ նրան ջախջախեցի: Հետապնդեցի նրան և Արցավա երկիր
29. մտա: Եվ Ապասա՝ քաղաքը
30. Ուխխացիտիի մտա: Ուխխացիտին ինձ չդիմադրեց,
31. նա վախեցավ ինձնից: Եվ ծովի այն կողմը
32. կտրեց-անցավ և մնաց այնտեղ:

---

33. Ամբողջ Արցավա երկիրը փախավ: Փախստականների մի մասը դեպի Արիննանդա լեռը
34. գնացին: Եվ Արիննանդա լեռը գրավեցին: Մյուսները
35. դեպի Պուրանդա քաղաք գնացին և գրավեցին այն:
36. Իսկ մյուս փախստականները Ուխխացիտիի հետ միասին ծովը կտրեցին-անցան:
37. Եվ ես՝ Արևս, դեպի Արիննանդա լեռ՝ փախստականների ետևից գնացի:
38. Եվ Արիննանդա լեռան մոտ մարտնչեցի: Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս, [.....]
39. Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին և աստվածները բոլոր
40. ինձ հետ էին: [....] Եվ Արիննանդա լեռը նվաճեցի:
41. Եվ ես՝ Արևս, գերիներին պալատ ուղարկեցի:
42. Գերիները 15.500-ն էին: Թե որքան խաթթուսա տիարք, զինվորները և կառավարները
43. գերիներ բերեցին, նրանց հաշվել
44. հնարավոր չէր: Այնուհետև գերիներին խաթթուսա
45. ուղարկեցի: Եվ նրանց բերեցին:

---

46. Եվ երբ Արիննանդա լեռը նվաճեցի,
47. հետո վերադարձա Աստարպա գետի մոտ: Եվ ամրացված ռազմական ճամբար

48. *I-NA* ^{ID}Aš-tar-pa wa-aḫ-nu-nu-un nu-za EZEN$_4$ MU-ti[92] a-pí-ya i-ya-nu-un
49. nu ki-i *I-NA* MU.1.KAM [.....] i-ya-nu-un

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

50. [(ma-aḫ-ḫa)]-an-ma ḫa-me-eš-ḫa-an-za ki-ša-at nu ^{m}U-uḫ-ḫa-LÚ-iš ku-it GIG-at
51. [(na-aš-kán)][93] a-ru-ni an-da e-eš-ta DUMU^{MEŠ}-*ŠU-NU*-ya-aš-ši kat-ta-an e-šir
52. [(nu-kán)] ^{m}U-uḫ-ḫa-LÚ-iš a-ru-ni an-da BA.ÚŠ DUMU^{MEŠ}-*ŠU-NU*-ma-za ar-ḫa
53[94]. šar-ra-an-da-at nu-kán 1-aš ŠÀ A.AB.BA-pát e-eš-ta 1-aš-ma-kán
54. ^{m}[(Ta-pa-la-zu)]-na-ú-li-iš a-ru-na-az ar-ḫa ú-it nu-kán KUR ^{URU}Ar-za-u-wa ku-it ḫu-u-ma-an
55. [.....] [(*I-NA*)] ^{URU}Pu-ra-an-da ša-ra-a pa-a-an e-eš-ta
56. nu [(^{m}Ta-pa-l)]a-zu-na-wa-liš *I-NA* ^{URU}Pu-ra-an-da ša-ra-a pa-it

---

57. [(nu ^{D}UTU$^{Š/}$ ÉRIN^{MEŠ} ^{URU}Ḫa-at[95])]-ti kar-ap-pu-un nu *I-NA* ^{URU}Pu-ra-an-da MÈ-ya pa-a-un
58. [(nu-ká)]n ^{m}Ta-pa-l[(a-zu-na-w)]a-liš *IŠ-TU* ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ} ^{URU}Pu-ra-an-da-za kat-ta ú-it
59. [(na-aš-m)]u za-aḫ-ḫi-ya me-na-aḫ-ḫa-an-da ú-it na-aš-mu-kán *A-NA* A.ŠÀ A.GÀR-*ŠU*
60. [(an-da[96])] MÈ-ya ti-ya-at na-an ^{D}UTU$^{Š/}$ MÈ-ya-nu-nu-un
61. [(nu-mu ^{D})]UTU ^{URU}A-ri-in-na [(GAŠAN-*YA* ^{D})]U NIR.GÁL *BE-LÍ-YA*
62. [(^{D}Me-ez-zu-u)]l-la-aš DINGIR^{MEŠ}-ya ḫu[(-u-ma-an-t)]e-eš pé-ra-an ḫu-u-i-e-er nu-za ^{m}Tá-pa-la-zu-na-ú-wa-li-in

---

[92] AM-ում նշված է MU$^{?!}$ (տես՝ AM, S. 60), սակայն ավելի հավանական է, որ այն գրվի MU-ti, որտեղ ti-ն խեթերեն witti (հայ.՝ տարի) բառի մասնիկն է:
[93] AM, S. 60.
[94] Այս հատվածի (KBo III 4 ԴԿ II 53-81) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KBo XVI 1 ՀԿ IV 1-39-ում:
[95] AM, S. 62.
[96] Նույն տեղում:

48. Աստարպա գետի մոտ հիմնեցի: Եվ տարվա ամենամյա տոնը այնտեղ նշեցի:
49. Եվ այս ամենը մեկ տարում [.....] արեցի:

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

50. [(Եվ)] երբ գարունը եկավ, Ուխխացիտին դեռևս հիվանդ էր:
51. [(Նա)] ծովում էր գտնվում (կղզու վրա - Ռ.Ղ.), իսկ նրա որդիները նրա հետ էին:
52. [(Եվ)] Ուխխացիտին ծովում մահացավ: Իսկ նրա որդիները
53. առանձնացան: Մեկը ծովի մեջ (կղզում - Ռ.Ղ.) մնաց, իսկ մյուսը՝
54. [(Տապալացու)]նաուլին ծովից եկավ: Եվ Արցավա երկիրը, քանի որ ամբողջովին
55. [.....] [(դեպի)] Պուրանդա էր գնացել:
56. Եվ [(Տապալ)]ացունաուլին դեպի Պուրանդա քաղաք գնաց:

---

57. [(Եվ ես՝ Արևս, Խաթ[թիի] զորքերի)] զորատես անցկացրի: Եվ Պուրանդա քաղաք մարտնչելու գնացի:
58. [(Ե)]վ Տապալ[(ացունաու)]լին Պուրանդայից զորքերով, մարտակառքերով եկավ,
59. [(ի)]մ դեմ կռվելու եկավ: Նա ինձ հետ դաշտում, իր տարածքում
60. կռվի բռնվեց: Եվ նրան ես՝ Արևս, ճակատամարտ տվեցի:
61. [(Եվ աստվածուհին)] Արևի՝ Արիննա քաղաքի, [(տիրուհիս, աստվածը)] Ամպրոպի՝ հզոր տերս,
62. [(Մեցցու)]լլա աստվածուհին և աստվածները բ[(ոլո)]ր ինձ հետ էին: Եվ Տապալացունավալիին

63. [.....] [(*QA-DU*[97])] ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ}-*Š*[(*U* t)]ar-aḫ-ḫu-un na-an-kán ku-e-nu-un

64. [(nam-ma-an EGIR[98])]-an *AṢ-BAT* nu pa-a-un ^{URU}Pu-ra-an-da-an an-da wa-aḫ-nu-nu-un

65. [(na-an-kán an-da[99])] ḫa-at-ke-eš-nu-nu-un nu-uš-ši-kán ú-i-[(da-a-a)]r ar-ḫa da-aḫ-ḫu-un

---

66. [(GIM-an-ma-kán ^{URU}P[100])]u-ra-an-da-an an-da ḫa-at-ke-eš-nu-nu-un

67. [(nu-ša-an ^{m}Tá-pa-la-zu-na[101])]-ú-liš ku-iš DUMU ^{m}U-uḫ-ḫa-LÚ *I-NA* ^{URU}Pu-ra-an-da še-er e-eš-ta

68. [(na-aš na-aḫ-šar-ri-ya-a[102])]t-ta-at na-aš-kán ^{URU}Pu-ra-an-da-za GE$_6$-az kat-ta ḫu-wa-iš

69. [(nam-ma-za DUMU^{MEŠ}-*ŠU* NA[103])]M.RA^{MEŠ}-ya ša-ra-am-na-az pé-ra-an ḫu-u-i-nu-ut

70. [(na-an-kán ^{URU}Pu-ra-an-da-z[104])]a kat-ta pé-e-ḫu-te-et

---

71. [(ma-aḫ-ḫa-an-ma ^{D}UTU^{ŠI} iš-t[105])]a-ma-aš-šu-un ^{m106}Tá-pa-la-zu-na-ú-liš-wa-kán

72. [(GE$_6$-az kat-ta ḫu-wa-iš DAM-*ZU*-y[107])]a-wa-za DUMU^{MEŠ}-*ŠU* NAM.RA^{MEŠ}-ya

73. [(ša-ra-a-am-na-za pé-ra-an ḫ[108])]u-i-nu-ut nu-wa-ra-an-kán kat-ta pé-e-ḫu-te-et

---

[97] Նույն տեղում:
[98] ADM, p. 63.
[99] Նույն տեղում:
[100] AM, S. 62.
[101] Նույն տեղում:
[102] Նույն տեղում:
[103] նույն տեղում:
[104] Նույն տեղում:
[105] AM, S. 64.
[106] Տեքստում սխալմամբ տրված է URU (𒌷), այնինչ հարկավոր էր գրել 𒹭՝ տղամարդկանց անձնանունների դիմաց դրվող սեպանշանը, քանի որ դրան հաջորդում է նախորդ տողերից արդեն հայտնի ^{m}Tá-pa-la-zu-na-ú-li անձնանունը:
[107] ADM, p. 63.
[108] AM, S. 64.

63. [.....] նրա զորքերի, մարտակառքերի հետ միասին հաղթեցի և նրան ջախջախեցի:

64. [(Այնուհետև նրան կրկին)] հետապնդեցի: Եվ դեպի Պուրանդա քաղաք շարժվեցի:

65. Այն (քաղաքը - Ռ.Ղ.) պաշարեցի, նրանց ջուրը հեռացրի (կտրեցի - Ռ.Ղ.):

---

66. [(Երբ քաղաք Պ)]ուրանդան պաշարեցի,

67. [(Տապալացունա)]ուլին՝ Ուխխացիտիի որդին, Պուրանդայում էր:

68. [(Նա վախեց)]ավ և նա Պուրանդայից գիշերը փախուստի դիմեց:

69. [(Հետո նա իր որդիներին և փախստական)]ներին միջնաբերդից իջեցրեց, և նրանք փախուստի դիմեցին:

70. [(Եվ նրանք Պուրանդայից)] հեռացան:

---

71. [(Եվ երբ ես՝ Արևս, լսե)]ցի, որ Տապալացունավալին

72. [(գիշերը փախել էր և նրա կինը)], նրա որդիները և փախստականներն էլ

73.[(միջնաբերդից)]հեռացել էին՝

74. [(nu-uš-ši ^{D}UTU^{Ši} ÉRIN^{MEŠ} ANŠU.KUR.RA[109])]^{MEŠ} EGIR-an-da u-i-ya-nu-un

75.[(na-at ^{m}Tá-pa-la-zu-na-wa-li-in[110])] KASKAL-ši EGIR-an-da ta-ma-aš-šir

76. [(nu-uš-ši-kán DAM-*ZU* DUMU^{MEŠ}-*ŠU* NA[111])]M.RA^{MEŠ}-ya ar-ḫa da-a-ir na-an EGIR-pa

77. [(ú-wa-te-er ^{m}Tá-pa-la-zu-na-ú-li-iš-ma-kán)][112] 1-aš SAG.DU-aš iš-pár-za-aš-ta

78. [(NAM.RA-ma-kán ku-in KASKAL-ši ta-ma-aš-šir)][113] na-an-za-an ÉRIN^{MEŠ}-pát ANŠE.KUR.RA^{MEŠ} da-a-aš

---

79. [(ma-aḫ-ḫa-an-ma-kán ú-wa-nu-un *I-NA* UD)] [....] [(KAM ^{URU}Pu-ra[114])]-an-da-an an-da ḫa-at-k[(e-eš-nu-nu-un)]

80. [.....] [(za-aḫ-ḫi-ya-nu)]-un [.....]

81. [(nu-mu ^{D}UTU ^{URU}A-ri-in-na GAŠAN-*YA* ^{D}U NIR.GÁL EN-*YA*)] ^{D}Me-ez-zu-ul-la[(-aš)]

82. [(DINGIR^{MEŠ}-ya ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an ḫu-u-i-e-er nu-z)]a ^{URU}Pu-ra-an-da-a[(n tar-aḫ-ḫu-un)][115]

83. [(nu-za ku-in NAM.RA *I-NA* É.LUGAL ú-wa-te-nu-un n[116])]a-aš 1 SIG$_7$ 6[117] *LI-IM* [...] [(ME NAM.RA)][118]

84. [(e-eš-ta ^{URU}KÙ.BABBAR-aš-ma-za EN^{MEŠ} ERÍN^{MEŠ} ANŠU.KUR.RA^{MEŠ}[119])]-ya ku-i[(n NAM.RA GUD UDU)][120]

85. [(ú-wa-te-et nu-uš-ša-an kap-pu-u-wa-u-wa-ar NU.GÁL e-eš-ta)][121]

86. [(na-an-kán ^{URU}KÙ.BABBAR-ši pa-ra-a ne-eḫ-ḫu-un na-an ar-ḫa ú-wa-te-er)][122]

---

[109] Նույն տեղում:
[110] Նույն տեղում:
[111] ADM, p. 63.
[112] Նույն տեղում:
[113] Նույն տեղում:
[114] ADM, p. 64.
[115] Նույն տեղում:
[116] Նույն տեղում:
[117] AM-ում նշված է 5 (₹), սակայն տեքստում տրված է 6 (₹) (տես՝ AM, S. 64):
[118] AM, S. 64.
[119] Նույն տեղում:
[120] Նույն տեղում:
[121] AM, S. 66.
[122] Նույն տեղում:

74. [(ես՝ Արևս, զորքեր, մարտակառք)]եր նրա ետևից ուղարկեցի:

75. [(Եվ Տապալացունավալիին)] նրանք հետապնդեցին:

76. [(Եվ նրա կնոջը, որդիներին և փախստ)]ականներին գերեվարեցին: Եվ նրանց ետ

77. [(բերեցին: Տապալացունավալին)] միայնակ փախավ:

78. [(Այն փախստականներին, որոնց ճանապարհին բռնեցին,)] նրանց որպես զինվորներ, կառավարներ վերցրին:

---

79. [(Այնուհետև ես եկա, ցերեկով Պուրա)]նդան պաշար[(եցի:)]:

80. [[.....] [(հաղթեց)]ի [.....]

81. [(Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս, Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս,)] Մեցցուլլա աստվածուհին,

82.[(աստվածները բոլոր ինձ հետ էին: Ե)]վ Պուրանդա[(ն նվաճեցի:)]

83. [(Եվ գերիներին դեպի պալատ ուղարկեցի: Ե)]վ նրանք՝ 16.000 [([...] [(հարյուր գերիներ)]

84. [(էին: Իսկ թե Խաթթուսա տիարք, զինվորները և կառավարները)] որքան [(գերիներ, կովեր, ոչխարներ)]

85. [(բերեցին, նրանց թիվ չկար:)]

86. [(Եվ նրանց Խաթթուսա ուղարկեցի: Եվ նրանց բերեցին:)]

KBo III 4 = 2 BoTU 48

ՀԿ III

1[123]. [.....]
2. [.....]
3. [.....,.....] [(a-ru-ni an-da e-eš-ta[124])]
4. [.....] [(^{m}SUM-ma-^{D}LAMMA-aš-ma DUMU ^{m}U-uḫ-ḫa-LÚ[125])]
5[126]. [(.....n)]a-aš-k[(án a-ru-na-az)]
6[127].[(ar-ḫa pa-it na-aš)] [(.....*l*)]*T-TI* [(LUGAL ^{KUR}Aḫ-ḫi-ya-wa-a)]
7[128].[(an-da ú-it nu ^{D}UTU$^{Ši\,m}$)] [.....] *IŠ-TU* ^{GIŠ}[(MÁ u-i-ya-nu-un)]
8[129]. [(na-an-ši LUGAL ^{KUR}Aḫ-ḫi-ya-wa-a pa-ra-a pé-eš-)]ta na-an-kán [(ar-ḫa ú-wa-te-er)]
9. [(kat-ti-iš-ši-ma-kán ku-in NAM.RA^{MEŠ} a[130])]r-ḫa ú-wa-te-er
10[131]. [(na-aš *IŠ-TU* NAM.RA ^{URU})] [....] Ù *IŠ-TU* NAM.RA [(^{URU}LI-pa)]
11[132]. [(an-da 1-e-et-ta)] [...] [(SIG$_7$)] [...] [(*LI-IM*)] [...] [(ME)] NAM.RA e-eš-ta
12[133]. [(na-an-kán ^{URU}KÙ.BABBAR-ši pa-ra-a n)]e-eḫ-ḫu-un na-an ar-ḫa ú[(-wa-te-er)]

13[134]. [(GIM-an-ma-kán *I-NA* KUR ^{ID}Še-e-ḫa)] EGIR-pa ú-wa-nu-un nu-kán *I-NA* ŠÀ ^{I}[^{D}Še-ḫa]
14[135]. [(^{m}Ma-na-pa-^{D}U-aš ku-iš EN-aš e)]-eš-ta ma-a-na-an za-aḫ-ḫi-ya-nu-un nu-mu [(ma-aḫ-ḫa-an)]
15. [(^{m}Ma-na-pa-^{D}U-aš iš-ta[136])]-ma-aš-ta LUGAL ^{KUR}Ḫat-ti-wa ú-iz-zi

---

[123] Սյունակի սկիզբը բացակայում է: Տողերի համարակալումը 1-ով սկսելը պայմանական է:
[124] ADM, p. 64.
[125] Նույն տեղում:
[126] AM, S. 66.
[127] Նույն տեղում:
[128] Նույն տեղում:
[129] Նույն տեղում:
[130] Նույն տեղում:
[131] Նույն տեղում:
[132] Նույն տեղում:
[133] Նույն տեղում:
[134] Նույն տեղում:
[135] AM, S. 68.
[136] Նույն տեղում:

1. [.....]
2. [.....]
3. [.....] [(ծովից այն կողմ)]
4. [.....] [(Պիյամա-Կուրունտան՝ որդին Ուխխացիտիի)]
5. [(.....Ե)]վ ն[(ա դեպի ծով)]
6. [(հեռացավ: Եվ նա)] [.....] [(Ախխիյավայի արքայի մոտ)]
7. [(գնաց: Եվ ես՝ Արևս)] [.....] [(նավով գնացի:)]
8. [(Եվ նրանց Ախխիյավայի արքան ուղարկ)]եց: Եվ նրանց [(ուղարկեցին)]
9. [(ետ: Եվ փախստականներին նույնպես)] վերադարձրին:
10. [(Եվ փախստականները միասին քաղաք)] [.....] և փախստականները [(Լիպա քաղաքի)]
11. [(միայն)] [...] [(10.000)] [...] [(1.000)] [...] [(100)] էին:
12. Եվ նրանց Խաթթուսա ու)]ղարկեցի: Եվ նրանց ետ բ[(երեցին:)]

---

13. [(Երբ Սեխա գետի երկիր)] վերադարձա: Եվ [(Սեխա գետի վրա (Սեխա գետի երկրի վրա - Ռ.Ղ.),)]
14. [(որի տերն էր Մանապա-Թարխունտան, ես)] հարձակվեցի: Եվ [(երբ)] իմ մասին
15. [(Մանապա-Թարխունտան լս)]եց. «Խաթթիի արքան գալիս է»,

16. [(na-aš na-aḫ-šar-ri-y[137])]a-at-ta-at na-aš-mu nam-ma me-na-aḫ-ḫ[a-an-da]

17.[*Ú-UL* ú-it nu-m[138])]u-kán AMA-*ŠU* LÚ.MEŠŠU.GI MUNUS..MEŠŠU.GI-ya

18. [(me-na-aḫ-ḫa-an-da)][139] pa-ra-a na-iš-ta na-at-mu ú-e-er GÌR^{MEŠ}-a[š k]at-ta-an

19. [(ḫa-a-li-i-e-er)][140] nu-mu MUNUS^{MEŠ} ku-it GÌR^{MEŠ}-aš GAM-an ḫa-a-li-i-e-er

20. [(nu *A-NA* MUNUS^{MEŠ})][141] ḫa-a-an-da ka-a-ri ti-ya-nu-un nu nam-ma *I-NA* ^{ID}Še-e-ḫa

21. [(*Ú-UL* p)]a-a-un nu-kán NAM.RA ^{URU}KÙ.BABBAR-ti ku-iš *I-NA* ^{ID}Še-e-ḫa

22. [(an-d)]a e-eš-ta na-an-mu [.....] pa-ra-a pí-i-e-er nu-mu NAM.RA ku-in

23. pa-ra-a pí-i-e-er na-aš 4 *LI-IM* NAM.RA e-eš-ta na-an-kán ^{URU}KÙ.BABBAR-ši

24. pa-ra-a ne-eḫ-ḫu-un [.....] na-an ar-ḫa ú-wa-te-er ^{m}Ma-na-pa-^{D}U-an-ma-za

25. KUR ^{ID}Še-e-ḫa-ya [...] ÌR-an-ni da-aḫ-ḫu-un

---

26. nam-ma *I-NA* KUR ^{URU}Mi-ra-a pa-a-un nu KUR ^{URU}Mi-ra-a *A-NA* ^{m}Maš-ḫu-i-lu-wa *AD-DIN*

27. KUR ^{ID}Še-e-ḫa-ma *A-NA* ^{m}Ma-na-pa-^{D}U *AD-DIN* KUR ^{URU}Ḫa-pal-la-ma *A-NA* ^{m}Tar-ga-aš-na-al-li

28. *AD-DIN* nu-za-kán ke-e KUR.KUR^{MEŠ} pé-e-di-iš-ši ÌR-na-aḫ-ḫu-un

29. nu-uš-ma-aš-kán ÉRIN^{MEŠ} iš-ḫi-iḫ-ḫu-un nu-mu ÉRIN^{MEŠ} pí-iš-ki-u-an da-a-ir

30. nu-kán *I-NA* ŠÀ KUR ^{URU}Ar-za-u-wa ku-it [.....] ŠE$_{12}$-ya-nu-un *I-NA* MU.2.KAM-ma-mu

31. ^{D}UTU ^{URU}PÚ-na GAŠAN-*YA* ^{D}U NIR.GÁL EN-*YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš DINGIR^{MEŠ}-ya

---

[137] Նույն տեղում:
[138] AM, S. 70.
[139] Նույն տեղում:
[140] Նույն տեղում:
[141] Նույն տեղում:

16. [(նա վախեց)]ավ: Եվ նա ընդառ[(աջ)]

17. [(չեկավ: Եվ ի)]նձ՝ իր մորը, ավագներին և տիկնանց

18. [(ընդառաջ)] ուղարկեց: Եվ նրանք եկան և իմ ոտքերն ընկան,

19. [(ծնկի եկան:)] Եվ քանի որ կանայք խոնարհվել էին ոտքերիս առջև և ծնկի եկել,

20. [(հանուն կանանց)] զիջեցի և Սեխա գետ (Սեխա գետի երկիր - Ռ.Ղ.)

21. [(չգ)]նացի: Եվ Խաթթիի փախստականներին, որ Սեխա գետում (Սեխա գետի երկրում - Ռ.Ղ.)

22. էին, ինձ [.....] տվեցին: Եվ այդ փախստականներին, որ ինձ

23. տվեցին, 4000-ն էին: Եվ նրանց Խաթթուսա

24. ուղարկեցի [.....]: Եվ նրանց վերադարձրին, իսկ Մանապա-Թարխունտային

25. և Սեխա գետի երկիրը [...] հպատակեցրի:

---

26. Այնուհետև գնացի Միրա երկիր: Եվ Միրա երկիրը Մասխուիլուվային տվեցի,

27. Սեխա գետի երկիրը Մանապա-Թարխունտային տվեցի, իսկ Խապալլա երկիրը Տարգասնալիին

28. տվեցի: Եվ այդ երկրները հնազանդեցրի:

29. Եվ նրանց մոտ զորքեր տեղակայեցի: Եվ նրանք ինձ սկսեցին պարբերաբար զորքեր տալ:

30.Եվ Արցավա երկրում [.....] երկրորդ տարին ձմեռեցի: Եվ

31. Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս, Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, և Մեցցուլլա աստվածուհին, աստվածները

32. ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an ḫu-u-i-e-er nu-za KUR ^{URU}Ar-za-u-wa tar-aḫ-ḫu-un

33. nu-za ku-it ^{URU}KÙ.BABBAR-ši ar-ḫa ú-da-aḫ-ḫu-un ku-it-ma-za-kán pé-di-iš-ši

34. ÌR-na-aḫ-ḫu-un nu-uš-ma-aš-kán ÉRIN^{MEŠ} iš-ḫi-iḫ-ḫu-un nu-mu ÉRIN^{MEŠ} pé-eš[(-ki)]-u-an

35. da-a-ir nu-za KUR ^{URU}Ar-za-u-wa ku-it ḫu-u-ma-an tar-aḫ-ḫu-un nu-za ^{D}UTU^{ŠI} ku-in

36. NAM.RA *I-NA* É.LUGAL ú-wa-te-nu-un na-aš an-da 1-e-et-ta 6 SIG$_7$ 6 *LI-IM* NAM.RA

37[142]. e-eš-ta ^{URU}KÙ.BABBAR-aš-ma-za EN^{MEŠ} ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ}-ya ku-in NAM.RA GUD UDU-ya

38. ú-wa-te-et nu-uš-ša-an kap-pu-u-wa-u-wa-ar NU.GÁL e-eš-ta

39. nu-za ma-aḫ-ḫa-an [.....] KUR ^{URU}Ar-za-u-wa ḫu-u-ma-an tar-aḫ-ḫu-un

40. nam-ma ^{URU}KÙ.BABBAR-ši ar-ḫa ú-wa-nu-un nu-kán *I-NA* KUR ^{URU}Ar-za-u-wa ku-it

41. an-da gi-im-ma-an-da-ri-ya-nu-un nu ki-i *I-NA* MU.1.KAM DÙ-nu-un

---

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

42. MU.<<1>>[143] KAM-an-ni-ma *I-NA* $^{ḪUR.SAG}$Aš-ḫar-pa-ya pa-a-un nu-za $^{ḪUR.SAG}$Aš-ḫar-pa-ya-an ku-iš

43. ^{URU}Ga-aš-ga-aš e-ša-an ḫar-ta nu *ŠA* KUR ^{URU}Pa-la-a KASKAL^{MEŠ} kar-aš-ša-an ḫar-ta

44. nu u-ni *ŠA* $^{ḪUR.SAG}$Aš-ḫar-pa-ya ^{URU}Ga-aš-gán za-aḫ-ḫi-ya-nu-un nu-mu ^{D}UTU ^{URU}PÚ-na GAŠAN-*YA*

45. ^{D}U NIR.GÁL *BE*[(-*LÍ*)]-*YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš DINGIR^{MEŠ}-ya ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an

---

[142] Այս հատվածի (KBo III 4 ՀԿ III 37-52) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KUB XIX 38 ՀԿ III 3-17-ում:

[143] AM-ում 1-ը բացակայում է, սակայն տեքստում այն կա (տես՝ AM, S. 76):

32. բոլոր ինձ հետ էին: Եվ Արցավա երկիրը նվաճեցի:

33. Եվ նրանց մի մասին Խաթթուսա ուղարկեցի, իսկ մյուս մասին տեղում

34. հնազանդեցրի: Եվ նրանց մոտ զորքեր տեղակայեցի: Եվ ինձ զինվորներ նրանք

35. ուղարկեցին: Եվ Արցավա երկիրն ամբողջությամբ նվաճեցի: Եվ ես՝ Արևս,

36. գերիներին պալատ ուղարկեցի: Եվ նրանց թիվը 66.000

37. էր: Իսկ թե որքան Խաթթուսա տիարք, զինվորները և կառավարները գերիներ, կովեր, ոչխարներ

38. բերեցին, անհնար էր հաշվել:

39. Եվ երբ [.....] Արցավա երկիրն ամբողջովին նվաճեցի,

40. Խաթթուսա վերադարձա: Հետո Արցավա երկրում

41. ձմեռեցի: Եվ այս ամենը մեկ տարում արեցի:

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

42. Երբ տարին սկսվեց, դեպի Ասխարպայա լեռներ գնացի: Ասխարպայա լեռները

43.կասկերը գրավել էին և Պալա երկրի ճանապարհները փակել էին:

44. Եվ Ասխարպայա լեռներում կասկերի դեմ կռվեցի: Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս,

45. Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին և աստվածները բոլոր

46. ḫu-u-i-e-er nu-za ḪUR.SAGAš-ḫar-pa-ya-an ku-iš URUGa-aš-ga-aš e-ša-an ḫar-ta

47. na[(-an-)]za-an tar-aḫ-ḫu-un na-an-kán ku-e-nu-un ḪUR.SAGAš-ḫar-pa-ya-an-ma dan-na-at-ta-aḫ-ḫu-un

48. [(nam-ma)] ar-ḫa ú-wa-nu-un nu ma-aḫ-ḫa-an *I-NA* URUŠa-am-ma-ḫa a-ar-ḫu-un

49. [(nu *I-NA* URU)]Zi-ú-li-la an-da-an ú-wa-nu-un

---

50. nu ku-it-ma-an *A-BU-YA I-NA* KUR URUMi-it-tan-ni e-eš-ta nu LÚKÚR URUA-ra-u-wa-an-na-aš

51. ku-iš KUR URUKi-iš-ši-ya-a GUL-an-né-eš-ki-it na-at me-ek-ki ta-ma-aš-ša-an

52. [(ḫar)]-ta nu DUTUŠI *I-NA* KUR URUA-ra-u-wa-an-na pa-a-un nu KUR URUA-ra-u-wa-an-na

53. [(GUL)]-un nu-mu DUTU URUPÚ-na GAŠAN-*YA* DU NIR.GÁL *BE-LÍ-YA* DMe-ez-zu-ul-la-aš

54. DINGIRMEŠ-ya ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an ḫu-u-i-e-er nu-za KUR URUA-ra-u-wa-an-na ḫu-u-ma-an tar-aḫ-ḫu-un

55. nu-za *IŠ-TU* KUR URUA-ra-u-wa-an-na ku-in NAM.RAMEŠ *I-NA* É.LUGAL ú-wa-te-nu-un

56. na-aš 3 *LI-IM* 5 ME NAM.RA e-eš-ta URUKÙ.BABBAR-aš-ma-za ENMEŠ ÉRINMEŠ ANŠE.KUR.RAMEŠ-ya

57[144]. ku-in NAM.RAMEŠ GUD UDU ú-wa-te-et nu-kán kap-pu-u-wa-u-wa-ar NU.GÁL e-eš-ta

58. nu-za ma-aḫ-ḫa-an KUR URUA-ra-u-wa-an-na tar-aḫ-ḫu-un nam-ma EGIR-pa URUKÙ.BABBAR-ši

59. ú-wa-nu-un nu *I-NA* MU.1.KAM ki-i i-ya-nu-un

---

[144] Այս հատվածի (KBo III 4 ՀԿ III 57-69) զուգահեռ տեքստը մասնակի պահպանվել է KUB XIX 38 ՀԿ IV 1-22-ում:

46. ինձ հետ էին: Եվ Ասխարպայա լեռները նվաճած կասկերին

47. հաղթեցի, նրանց ոչնչացրի, իսկ Ասխարպայա լեռները (լեռների երկիրը - Ռ.Ղ.) ավերակների վերածեցի:

48. [(Հետո)] վերադարձա, այնուհետև Սամմախա քաղաք ժամանեցի:

49. [(Եվ քաղաք)] Զիուլիլա մտա:

---

50. Երբ հայրս Միտտանի երկրում էր, Արավաննա երկրի թշնամին

51. հարձակումներ էր գործել Կիսսիյա երկրի վրա և շատ վնասներ էր

52. [(պատճառ)]ել: Ես՝ Արևս, դեպի Արավաննա երկիր գնացի, Արավաննա երկրին

53. [(հարված)]եցի: Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս, Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին

54. և աստվածները բոլոր ինձ հետ էին: Ամբողջ Արավաննա երկիրը նվաճեցի:

55. Եվ Արավաննա երկրի գերիներին պալատ ուղարկեցի:

56. Գերիների թիվը 3.500 էր: Իսկ թե Խաթթուսա քաղաք տիարք, զինվորները և կառավարները

57. որքան գերիներ, կովեր, ոչխարներ բերեցին, հաշիվ չկար:

58. Եվ երբ Արավաննա երկիրը նվաճեցի, Խաթթուսա

59. վերադարձա: Եվ դա արեցի մեկ տարում:

---

60. MU-an-ni-ma *I-NA* KUR ^{URU}Zi-ḫar-ri-ya pa-a-un nu-za *A-NA PA-NI A-BI A-BI-YA*

61. ku-iš ^{URU}Ga-aš-ga-aš $^{ḪUR.SAG}$Ta-ri-ka-ri-mu-un GÉŠPU-az e-ša-at

62. nam-ma-aš-za ^{URU}KÙ.BABBAR-ši ḫar-ga-aš ki-ša-at nu ú-e-er ^{URU}KÙ.BABBAR-ša-an GUL-ḫi-ir

63. na-an me-ek-ki dam-meš-ḫa-a-ir nu ^{D}UTU^{ŠI} pa-a-un nu-za $^{ḪUR.SAG}$Ta-ri-ka-ri-mu-un

64. ku-iš ^{URU}Ga-aš-ga-aš e-ša-an ḫar-ta na-an GUL-un nu-mu ^{D}UTU ^{URU}PÚ-na

65. GAŠAN-*YA* ^{D}U NIR.GÁL *BE-LÍ-YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš DINGIR^{MEŠ}-ya ḫu-u-ma-an-te-eš

66.pé-ra-an ḫu-u-i-e-er nu-za *ŠA* $^{ḪUR.SAG}$Ta-ri-ka-ri-mu ^{URU}Ga-aš-gán

67. tar-aḫ-ḫu-un na-an-kán ku-e-nu-un $^{ḪUR.SAG}$Ta-ri-ka-ri-mu-un-ma

68. dan-na-at-ta-aḫ-ḫu-un KUR ^{URU}Zi-ḫar-ri-ya-ya ḫu-u-ma-an ar-ḫa wa-ar-nu-nu-un

69. nam-ma EGIR-pa ^{URU}KÙ.BABBAR-ši ú-wa-nu-un nu ki-i *I-NA* MU.1.KAM DÙ-nu-un

---

60. Երբ տարին սկսվեց, դեպի Զիխարիյա երկիր գնացի: Նախկինում՝ պապիս օրոք,

61. Տարիկարիմու լեռների կասկերը գրավել էին այն

62. և Խաթթուսայի համար վտանգ էին ստեղծել: Նրանք գալիս և հարձակվում էին Խաթթուսայի վրա

63. և շատ վնասներ պատճառում: Եվ ես՝ Արևս, գնացի և Տարիկարիմու լեռների

64. կասկերի վրա հարձակվեցի: Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝

65. տիրուհիս, Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին և աստվածները բոլոր

66. ինձ հետ էին: Ես Տարիկարիմու լեռների կասկերին

67. հաղթեցի, նրանց ոչնչացրի և Տարիկարիմու լեռները (լեռների երկիրը - Ռ.Ղ.)

68. ավերեցի: Իսկ Զիխարիյա երկիրն էլ ամբողջովին այրեցի:

69. Այնուհետև Խաթթուսա վերադարձա: Եվ այս ամենն արեցի մեկ տարում:

---

70. MU-an-ni-ma *I-NA* KUR ^{URU}Ti-pí-ya pa-a-un nu ku-it-ma-an *A-BU-YA*
71. *I-NA* ^{KUR}Mi-it-tan-ni e-eš-ta ^{m}Pí-iḫ-ḫu-ni-ya-aš-ma LÚ ^{URU}Ti-pí-ya i-ya-at-ta-at
72. nu [.....] ^{KUR}UGU GUL-an-ni-eš-ki-it na-aš pa-ra-a *I-NA* ^{URU}Za-az-zi-ša
73. a-ar-aš-ki-it nu ^{KUR}UGU ša-ra-a da-a-aš na-at-kán *I-NA* ^{KUR}Ga-aš-ga
74. kat-ta-an-ta pé-e-da-aš KUR ^{URU}Iš-ti-ti-na-ma-za ḫu-u-ma-an da-a-aš
75. na-at-za a-pé-el ú-i-ši-ya-u-wa-aš pé-e-da-an i-ya-at

---

76. nam-ma ^{m}Pí-iḫ-ḫu-ni-ya-aš *Ú-UL ŠA* ^{URU}Ga-aš-ga i-wa-ar ≮ta-pa-ar-ta
77. ḫu-u-da-a-ak ma-aḫ-ḫa-an *I-NA* ^{URU}Ga-aš-ga *Ú-UL ŠA* 1^{EN}ta-pa-ri-ya-aš
78. e-eš-ta a-ši-ma ^{m}Pí-iḫ-ḫu-ni-ya-aš *ŠA* LUGAL-$^{UT-TI}$ i-wa-ar
79. ta-pa-ar-ta nu-uš-ši ^{D}UTU^{ŠI} pa-a-un nu-uš-ši ^{LÚ}*ŢE₄-MA* u-i-ya-nu-un
80. nu-uš-ši ḫa-at-ra-a-nu-un ÌR^{MEŠ}-*YA*-wa-za ku-i-e-eš da-a-aš nu-wa-ra-aš-kán *I-NA* ^{URU}Ga-aš-ga
81. kat-ta-an-ta pé-e-ḫu-te-et nu-wa-ra-aš-[(mu)] ar-ḫa up-pí
82. ^{m}Pí-iḫ-ḫu-ni-ya-aš-ma-mu EGIR-pa ki-iš-ša-an ḫa-at-ra-a-eš
83. *Ú-UL*-wa-at-ta ku-it-ki EGIR-pa pí-iḫ-ḫi ma-a-an-na-wa-mu za-aḫ-ḫi-ya
84. ú-wa-ši nu-wa-at-ta *Ú-UL* ku-wa-at-qa am-me-el A.ŠÀ ku-e-ri an-[(da)]
85. za-aḫ-ḫi-ya ti-ya-mi *A-NA* KUR^{TI}-*KA*-wa-at-ta me-na-aḫ-ḫa-an-da ú-wa-mi
86. nu-wa-at-ták-kán *A-NA* ŠÀ KUR-*KA* za-aḫ-ḫi-ya ti-ya-mi nu-mu ma[(-aḫ)]-ḫa-an
87. ^{m}Pí-iḫ-ḫu-ni-ya-aš e-ni-iš-ša-an EGIR-pa *IŠ-PUR* nu-mu ÌR^{MEŠ}-*YA*
88. EGIR-pa *Ú-UL* pí-iš-ta nu-uš-ši za-aḫ-ḫi-ya pa-a-un nu-uš-ši KUR-*ZU*

70. Երբ տարին սկսվեց, դեպի Տիբիյա երկիր գնացի: Մինչ հայրս
71. Միտտանի երկրում էր, Պիխխունիյան՝ տիբիացին, գնացել
72. և [.....] Վերին երկրի վրա էր հարձակվել: Եվ նա մինչև Զազզիսա քաղաք
73. էր հասել: Նա Վերին երկրից ավար էր վերցրել և կասկերի երկիր
74. տարել: Իսկ ամբողջ Իստիտինա երկիրը գրավել
75. և այն արոտավայր էր դարձրել:

---

76. Բացի այդ, Պիխխունիյան կասկերի երկրում չէր իշխում
77. այնպես, ինչպես ընդունված էր նրանց մոտ: Կասկերի երկրում միանձնյա չէին իշխում:
78. Իսկ նշյալ Պիխխունիյան թագավորավայել էր
79. իշխում: Ես՝ Արևս, գնացի և նրա մոտ սուրհանդակ ուղարկեցի,
80. նրան գրեցի. «Իմ հպատակներին, որոնց դու պահում ես կասկերի երկրում,
81. վերադարձրու, ինձ ուղարկիր»:
82. Սակայն Պիխխունիյան ինձ այսպես գրեց.
83. «Ես քեզ ոչինչ չեմ վերադարձնի: Եթե դու ինձ հետ կռվելու
84. գաս, ես քեզ հետ իմ հողի վրա
85. կռվի չեմ բռնվի, այլ դեպի քո երկիրը կգամ
86. և քո երկրում կռվի կբռնվեմ»: Ինձ այսպես
87. գրեց Պիխխունիյան և իմ հպատակներին
88. չվերադարձրեց: Ես նրա դեմ կռվի գնացի: Եվ նրա երկրի վրա

89. GUL-un nu-mu ^{D}UTU ^{URU}PÚ-na GAŠAN-*YA* ^{D}U NIR.GÁL *BE-LÍ-YA* ^{D}Me-ez-zu-ul-la-aš

90. DINGIR^{MEŠ}-ya ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an ḫu-u-i-e-er nu-za KUR ^{URU}Ti-pí-ya

91. ḫu-u-ma-an tar-aḫ-ḫu-un [.....] na-at ar-ḫa wa-ar-nu-nu-un

92. ^{m}Pí-iḫ-ḫu-ni-ya-an-na *AṢ-BAT* na-an ^{URU}KÙ.BABBAR-ši ar-ḫa ú-wa-te-nu-un

93. nam-ma *IŠ-TU* KUR ^{URU}Ti-pí-ya EGIR-pa ú-wa-nu-un nu-za ^{m}Pí-iḫ-ḫu-ni-ya-aš ku-it

94. KUR ^{URU}Iš-ti-ti-na ta-a-an ḫar-ta na-at EGIR-pa ú-e-te-nu-un

95. na-at EGIR-pa *ŠA* KUR ^{URU}Ḫa-at-ti KUR-e i-ya-nu-un

---

96. nam-ma-za ma-aḫ-ḫa-an KUR ^{URU}Ti-pí-ya tar-aḫ-ḫu-un nu *A-NA* ^{m}An-ni-ya LUGAL ^{URU}Az-zi

97. ^{LÚ}*ṬE$_4$-MA* u-i-ya-nu-un nu-uš-ši ḫa-at-ra-a-nu-un ku-it-ma-an-wa *A-BU-YA*

98. *I-NA* KUR ^{URU}Mi-it-ta-an-ni e-eš-ta nu-wa-ták-kán ÌR^{MEŠ}-*YA* ku-i-e-eš an-da ú-e-er[145]

(ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)[146]

[145] Յոթերորդ տարվա մնացած հատվածը բացակայում է:

[146] Տարեգրության ութերորդ տարվա հատվածն ամբողջովին բացակայում է:

89. հարձակվեցի: Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս, Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին

90. և բոլոր աստվածներն ինձ հետ էին: Ես Տիբիյա երկիրն

91. ամբողջությամբ նվաճեցի: [.....] Եվ այն հրի մատնեցի,

92. Պիխխունիյային էլ գերեցի: Եվ նրան Խաթթուսա ուղարկեցի:

93. Այնուհետև Տիբիյա երկրից վերադարձա, իսկ այն, ինչ Պիխխունիյան

94. Իստիտինա երկրից վերցրել էր, վերադարձրի:

95. Եվ այն կրկին Խաթթի երկրի տարածք դարձրի:

---

96. Եվ երբ Տիբիյա երկիրը նվաճեցի, Ազզի երկրի արքա Աննիյայի մոտ

97. սուրհանդակ ուղարկեցի և նրան գրեցի. «Այն ժամանակ, երբ հայրս

98. Միտտանի երկրում էր, իմ հպատակները քեզ մոտ եկան...

(ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

(ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)[147]

ՀԿ IV

1. [.....]
2. [.....]
3. [.....]
4. [.....]
5. [.....]
6. [.....]
7. [.....]-un
8. [.....]

---

9. [.....]-an-na
10. [.....]-ḫu-un
11. [.....]-aš
12. [.....-r]a-an ku-in
13. [.....na]-aḫ-šar-ra-at-ti
14. [.....] wa-aḫ-nu-nu-un
15. [.....] za-aḫ-ḫi-ya *Ú-UL*
16. [(ti-ya-at nu-kán ku-it ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ} *I-NA* ^{KUR}UGU^{7l})][148] da-a-li-ya-an ḫar-ku-un
17. [(nu ^{m}Nu-wa-an-za-aš GAL.GEŠTIN ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ} an-da)][149] wa-ar-ra-it na-aš *I-NA* ^{URU}Kán-nu-wa-ra
18. [(*A-NA* ^{LÚ}KÚR ^{URU}Az-zi me-na-aḫ-ḫa-an-da za-aḫ-ḫi-y[150])]a pa-it nu ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ} *ŠA* [(^{KUR}Az-z)]i
19. [(*A-NA* ^{m}Nu-wa-an-za GAL.GEŠTIN za-aḫ-ḫi-ya ti-i[151])]-e-er nu-za ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ} *ŠA* ^{KUR}Az-zi
20. [(^{m}Nu-wa-an-za-aš GAL.GEŠTIN tar-aḫ-ta nu-uš-š[152])]a-an ap-pa-an-ti ku-na-an-ti-ya

---

[147] Տարեգրության իններորդ տարվա սկզբի հատվածը գրեթե ամբողջովին բացակայում է:
[148] ADM, p. 70.
[149] AM, S. 122.
[150] Նույն տեղում:
[151] Նույն տեղում:
[152] Նույն տեղում:

1. [.....]
2. [.....]
3. [.....]
4. [.....]
5. [.....]
6. [.....]
7. [.....]
8. [.....]

---

9. [.....]
10. [.....]
11. [.....]
12. [.....] որ
13. [.....վա]խեցան
14. [.....] շրջվեցի
15. [.....] կռվելու
16. [(չեկավ: Եվ զորքերը, մարտակառքերը դեպի Վերին երկիր)] ուղարկեցի:
17. [(Եվ Նուվանցան՝ գլխավոր մատռվակը, զորքերով, մարտակառքերով)] օգնության գնաց: Եվ նա դեպի Կաննուվարա քաղաք՝
18. [(Ազզի երկրի թշնամուն ընդառաջ կռվելու)] գնաց: Եվ Ազզի երկրի զորքերի, մարտակառքերի հետ
19. [(գլխավոր մատռվակ Նուվանցան կռվի բռնվեց:)] Եվ Ազզի երկրի զորքերին, մարտակառքերին
20. [(գլխավոր մատռվակ Նուվանցան հաղթեց: Եվ նրանցից շատերին)] գերեց կամ սպանեց:

21. [.....]

---

22. [(GIM-an-ma-kán ^{D}UTU^{ŠI} ^{URU}Ki-iz-zu-[153])]wa-at-na-az ša-ra-a ú-wa-nu-un nu-mu M[U.KAM]-az

23. [(še-er te-e-pa-u-e-eš-ša-an-za e-eš[154])]-ta nu nam-ma *I-NA* ^{KUR}Az-zi *Ú-UL* pa-a-un

24. [(nu-mu ^{URU}Ya-aḫ-re-eš-ša-aš-ma-mu ku-it)][155] ku-u-ru-ri-aḫ-ḫa-an ḫar-ta nu-mu ÉRIN^{MEŠ} *Ú-UL* p[(é-eš-ki-)]it

25. [(.....n)]a GUL-an-ni-eš-ki-it nu ^{D}UTU^{ŠI} *I-NA* ^{URU}Ya-aḫ-re-eš-[(ša)]-an

26. [(pa-a-un nu)] ^{URU}Ya[(-aḫ-re-eš-ša)]-an GUL-un nu-mu ^{D}UTU ^{URU}PÚ-na [(GAŠAN)]-*YA* ^{D}U [(NIR.GÁL)] *BE*-[(*LÍ-YA*)]

27. [(^{D}Me-ez-zu-u)]l-l[(a-aš DINGIR^{MEŠ}-y)]a ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an ḫu-u-i-e-er nu-za ^{URU}Ya-aḫ-re-eš-ša-an

28. [(URU-an tar[156])]-aḫ-ḫu-un [(nam)]-ma-an ar-ḫa wa-ar-nu-nu-un pa-ra-a-ma [.....]

29. [(*I-NA* ^{KUR})]Pí-ig-ga-i-na-re-eš-ša pa-a-un nu *ŠA* ^{KUR}Pí-ig-ga-i-na-re-eš-ša

30. [.....] [(^{URU}G)]a-aš-gán GUL-un na-an-za-kán tar-aḫ-ḫu-un KUR ^{URU}Pí-ig-ga-i-na-re-eš-ša-ma

31. [(ar-ḫ)]a wa-ar-nu-nu-un *IŠ-TU* NAM.RA-ma-at GUD UDU ša-ra-a [(da-aḫ-ḫu-un)]

32. [(na-)]at ^{URU}KÙ.BABBAR-ši ar-ḫa ú-da-aḫ-ḫu-un nu-za ma-aḫ-ḫa-an ^{URU}Ya-a[(ḫ-re-e)]š-ša-an

33. [(KUR ^{URU})]Pí-ig-ga-i-na-re-eš-ša-ya tar-aḫ-ḫu-un nam-ma ^{URU}KÙ.BABBAR-ši E[(GIR-p)]a ú-wa-nu-un

34. [(nu)] ki-i *I-NA* MU.1.KAM DÙ-nu-un

---

[153] AM, S. 124.
[154] AM, S. 126.
[155] ADM, p. 70.
[156] ADM, p. 71.

21. [.....]

---

22. [(Երբ ես՝ Արևս, Կիցցու)]վատնայից եկա, տարին

23. [(կարճացավ (այսինքն՝ տարին ավարտվում էր, ձմեռնամուտ էր - Ռ.Ղ.),)] այդ պատճառով դեպի Ազզի երկիր չգնացի:

24. [(Սակայն քանի որ Յախրեսսա քաղաքը)] թշնամացել էր ինձ հետ և զորք չէր ուղարկում,

25.[(.....)] հարձակվում էին, ես՝ Արևս, դեպի Յախրեսսա քաղաք

26. [(գնացի և)] Յա[(խրեսսա)]յի վրա հարձակվեցի: Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ [(տիրուհ)]իս, Ամպրոպի [(հզոր)] աստվածը՝ տե[(րս)],

27. [(Մեցու)]լլ[(ա աստվածուհին և աստվածները)] բոլոր ինձ հետ էին: Եվ Յախրեսսա

28. [(քաղաքը նվ)]աճեցի, իսկ հետո այրեցի: Այնուհետև [.....]

29. [(դեպի)] Պիգայնարեսսա [(երկիր)] գնացի: Պիգայնարեսսայի

30. կասկերի վրա հարձակվեցի և նրանց ոչնչացրի: Իսկ Պիգայնարեսսա երկիրը

31. այրեցի: Այնտեղից գերիներ, կովեր, ոչխարներ [(վերցրի)]

32. և Խաթթուսա ուղարկեցի: Երբ Յախրեսսա քաղաքը

33. և Պիգայնարեսսա երկիրը նվաճեցի, վերադարձա Խաթթուսա:

34. Եվ այս ամենն արեցի մեկ տարում:

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

35. MU-an-ni-ma *I-NA* ^{KUR}Az-zi pa-a-un nu-mu nam-ma ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ} [(*Š*)]*A* ^{KUR}Az-zi
36. za-aḫ-ḫi-ya *Ú-UL* ti-ya-at nu KUR-e-an-za ḫu-u-ma-an-za URU.DIDLI$^{ḪI.A}$ BÀD
37. EGIR-pa e-ep-pir nu 2 URU.DIDLI$^{ḪI.A}$ BÀD-pát ^{URU}A-ri-ip-ša-a-an ^{URU}Du-uk-kam-ma-an-na
38. za-aḫ-ḫi-ya-nu-un nu-mu ^{D}UTU ^{URU}PÚ-na GAŠAN-*YA* ^{D}U NIR.GÁL *BE*-[(*LÍ-Y*)]*A* ^{D}Me-ez-zu-ul-la-aš
39. DINGIR^{MEŠ}-ya ḫu-u-ma-an-te-eš pé-ra-an ḫu-u-i-e-er nu-kán ^{URU}A-ri-ip-ša-a-an
40. ^{URU}Du-uk-ka-am-ma-an-na za-aḫ-ḫi-ya-za kat-ta da-aḫ-ḫu-un nu-za ^{D}UTU^{ŠI}
41. ku-in NAM.RA *I-NA* É.LUGAL ú-wa-te-nu-un na-aš 3 *LI-IM* NAM.RA e-eš-ta
42. ^{URU}KÙ.BABBAR-aš-ma-za EN^{MEŠ} ÉRIN^{MEŠ} ANŠE.KUR.RA^{MEŠ}-ya ku-in NAM.RA GUD UDU ú-wa-te-et
43. na-aš-ša-an *Ú-UL* an-da e-eš-ta

(ՎԵՐՋԱԲԱՆ)

44. nu-za-kán *A-NA* ^{GIŠ}GU.ZA *A-BI-YA* ku-wa-pí e-eš-ḫa-at nu ka-ru-ú MU.10.KAM
45. LUGAL-u-ez-na-nu-un nu-za ke-e KUR.KUR ^{LÚ}KÚR *I-NA* MU.10.KAM am-me-e-da-az ŠU-az
46. tar-aḫ-ḫu-un DUMU^{MEŠ} LUGAL-ma-za *BE-LU*^{MEŠ}-ya ku-e KUR.KUR ^{LÚ}KÚR tar-aḫ-ḫe-eš-kir
47. na-at-ša-an *Ú-UL* <<aš>> an-da pa-ra-a-ma-mu ^{D}UTU ^{URU}PÚ-na GAŠAN-*YA*
48. ku-it pé-eš-ki-iz-zi na-at a-ni-ya-mi na-at kat-ta te-eḫ-ḫi

---

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

35. Մեկ տարի անց դեպի Ազզի երկիր գնացի: Սակայն Ազզի երկրի զորքերը, մարտակառքերը ինձ հետ
36. կռվի չբռնվեցին: Ամբողջ երկիրը, պարսպապատ քաղաքները
37. անձնատուր եղան: Երկու ամրացված քաղաքներին՝ Արիպսային և Դուկկամմային
38. հարվածեցի: Եվ Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս, Ամպրոպի հզոր աստվածը՝ տերս, Մեցցուլլա աստվածուհին
39. և աստվածները բոլոր ինձ հետ էին: Եվ Արիպսան,
40. Դուկկամման կռվով գրավեցի: Եվ ես՝ Արևս,
41. գերիներին դեպի պալատ ուղարկեցի: Եվ նրանք 3.000-ն էին:
42. Իսկ թե որքան Խաթթուսայի տիարք, զինվորները և կառավարները գերիներ, կովեր, ոչխարներ բերեցին,
43. անհնար էր հաշվել:

(ՎԵՐՋԱԲԱՆ)

44. Հորս գահին բազմելուց հետո անցավ տասը տարի
45. ինչ թագավորում եմ: Եվ այդ թշնամի երկրներին տասը տարվա մեջ ես իմ ձեռքով
46. հաղթեցի: Եվ թշնամի երկրների արքայազնները և տերերը (ավագանու ներկայացուցիչներին - Ռ.Ղ.), որոնց հաղթեցի,
47. բոլորը չէ, որ այստեղ կան: Արիննա քաղաքի Արևի աստվածուհին՝ տիրուհիս, այսպես
48. ցանկացավ: Այս ամենն արեցի և այսպես իրագործեցի:

ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ՉՏԵՂԱԴՐՎԱԾ ՀԱՏՎԱԾ

KBo XVI 3

ՀԿ[157]

1. [.....] *Ú-UL* za-a[(ḫ-ḫi-ya ti-ya-at)] [.....]
2. [.....]^{TUM}ANŠE.KUR.RA^{MEŠ} [.....]
3. [(.....^{LÚ})]KÚR pa-an-ku-un za-aḫ[-ḫi-ya-nu-un] [.....]
4. [(li-)]in-ga-nu-wa-an-te-eš [.....]

1. [.....]x չկռ[(վեցի)] [.....]
2. [.....]x^{TUM} մարտակառքերը [.....]
3. [.....թ]շնամուն գնացի, հար[վածեցի [.....]
4. [(եր)]դման տակ դրեցի [.....]

[157] AMD, p. 72.

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գոյություն ունեն նաև Մուրսիլի II-ի «Աղոթքի» տեքստերը: Նրանցից մեկում նշվում է այն մասին, որ արքան հայտնաբերել էր մի հին աղյուսակ, որը նկարագրում էր նրա նախնիների կողմից կատարվող Մալա (Եփրատ) գետի ծեսը: Սակայն նրա հայրը (Սուպպիլուլիումա I-ը) թերացել էր այդ ծեսն իրականացնել և դա Խաթթիում, ըստ նրա, համաճարակի բռնկման պատճառ էր հանդիսացել (CTH 378.IIA. ՀԼՏ, էջ 134-135): Մյուս դեպքում նշվում է, որ Սուպպիլուլիումա I-ը մինչև գահ բարձրանալը խախտել էր ավագ եղբորը՝ Թուդխալիյային տված երդումը և սպանելով նրան՝ տիրացել գահին (CTH 378.I): Եվ ևս մեկ պատճառ է նշվում վերոհիշյալ տեքստերում, որ Սուպպիլուլիման խախտել էր Եգիպտոսի հետ կնքված պայմանագիրը և հարձակվել ու ավերել էր նրան ենթակա տարածքները (CTH 378.II):

2. Քանի որ Կասկա քաղաք կամ Կասկա պետություն գոյություն չուներ, ապա Տարեգրությունում նշված Կասկա քաղաք կամ Կասկա երկիր հասկացությունները թարգմանել ենք՝ որպես կասկեր կամ կասկերի երկիր՝ նկատի ունենալով, որ դա միայն աշխարհագրական տերմին է, այլ ոչ քաղաքական միավոր:

3. Նշվող լեռնանունների տակ կարելի է հասկանալ տվյալ լեռնային երկիրը կամ տարածքը, որտեղ գտնվում են այդ լեռները:

4. Խեթերը տարին բաժանում էին չորս մասի: Տարին սկսվում էր գարնանը (խեթ.՝ ḫamešḫa(nt)-)՝ ապրիլին: Հաջորդը ամառն է (շում.՝ EBUR), որը սկսվում է հուլիսից: Նրան հաջորդում է աշունը (խեթ.՝ zena(nt)-), որը սկսվում էր նոյեմբերին: Վերջին եղանակը՝ ձմեռն էր (խեթ.՝ gim(m)a(nt)-), որը տևում էր հունվարից մինչև ապրիլ: Սովորաբար խեթական զորքը գարնանն էր սկսում արշավները և ձմեռնամուտին վերադառնում զորանոցները (Ардзинба, 1982, с. 7-8):

ՀԱՎԵԼՎԱԾ

Ստորև ներկայացված ցանկերում տրված են Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունում տեղ գտած (տեքստում առկա կամ վերականգնված) տեղանունները (երկրանուններ, քաղաքանուններ, լեռնանուններ, գետանուններ), անձնանունները, դիցանունները, ինչպես նաև շումերագիր, աքքադագիր բառեր և թվեր: Տրվում է նաև տեքստում առկա անունների տառադարձումն ուղիղ ձևով: Ցանկերը տրվել են՝ ըստ հայերեն այբբենական կարգի (բացի շումերագիր և աքքադագիր բառերի, որոնք տրված են անգլերեն այբբենական կարգով): Տրվում են տեղանունների վերաբերյալ մասնագիտական գրականությունում առկա տեղորոշումները և մեր եզրակացությունները:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

ԵՐԿՐԱՆՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱՆՈՒՆՆԵՐ

Ազզի (RGTC, VI, S. 59-60. RGTC, VI/2, S. 19. ՀԼՏ, էջ 43-46:)
URUAz-zi (KBo III 4 ՀԿ III 96; KBo III 4 ՀԿ IV 18), KURAz-zi (KBo III 4 ՀԿ IV 18, 19, 23, 35).

Տեղանունը Տարեգրությունում հիշատակվել է՝ 7-րդ, 9-րդ և 10-րդ տարիների իրադարձությունների հետ կապված: Ուսումնասիրողներից շատերն Ազզին տարանջատել են Հայասայից՝ այն համարելով ինքնուրույն միավոր ու տարբեր տեղադրություններ են առաջարկել՝ մերձպոնտական շրջանում, Ճորոխի ավազանում,

ինչպես նաև Բարձր Հայքի տարածքում[158]:

Սակայն խեթական աղբյուրների հաղորդած տեղեկությունները ցույց են տալիս, որ թե՛ քաղաքական, թե՛ տարածքային առումով Հայասան և Ազզին իրենցից ներկայացնում էին միևնույն երկիրը[159]՝ ընդգրկելով Եփրատից մինչև Վանա լճի ավազան ընկած տարածքը[160]:

Ավելի արևելք Հայասա-Ազզիի սահմանների որոշումը կամ հստակեցումը, եղած նյութի հիման վրա, առայժմ անհնարին է[161]:

Ախխիյավա (RGTC, VI, S. 1-2. RGTC, VI/2, S. 1.)
KURAḫ-ḫi-ya-wa-a (KBo III 4 ՀԿ III 8).

Հիշատակվել է Տարեգրության չորրորդ տարում, երբ Արցավայի արքա Ուխխացիտիի որդին՝ արքայազն Պիյամա-Կուրունտան, փախչելով Արցավան գրաված խեթական զորքերից, անցավ ծովը և ապաստան գտավ Ախխիյավայի արքայի մոտ: Այն հանդիսանում էր ուշբրոնզեդարյան ժամանակաշրջանի «գերտերություններից» մեկը:

Հավանաբար նույնն է, ինչ Միկենյան Հունաստանի (Ք.ա. 16-11-րդ դդ.) անվանումը, որը Հոմերոսի մոտ պահպանվել է Աքայա ձևով[162]:

---

[158] Տես՝ Cornelius, 1967, S. 68. Дьяконов, 1968, с. 83. ИЛР, 1, с. 43-46. Խաչատրյան, 1998, էջ 35, 41: Քոսյան, 2008, էջ 288:
[159] Ղազարյան, 2009, էջ 35-36:
[160] Քոսյան, 2012, էջ 24-27: Ղազարյան, 2012, էջ 65-68:
[161] Կարելի է ենթադրել նաև, որ խեթական սկզբնաղբյուրներում միևնույն երկրի համար զուգահեռ նշված Հայասա կամ Ազզի անվանումները տրված են այնպես, ինչպես վերոհիշյալ սկզբնաղբյուրներում Միտտանի թագավորության համար և՛ Խուրրի, և՛ Միտտանի անունները, որտեղ Խուրրին հիմնականում հանդես է գալիս՝ որպես էթնոնիմ: Հավանական է, որ Ազզի անվան տակ խեթերը հասկացել են նախ և առաջ պետություն, իսկ Հայասա ասելով՝ էթնոնիմ:
[162] Ախխիյավա-Միկենյան Հունաստան խնդրի շուրջ: Տես՝ Քոսյան, 1999, էջ 50-69:

Ապասա (RGTC, VI, S. 26-27. RGTC, VI/2, S. 8.)
URUA-pa-a-ša (KBo III 4 ԴԿ II 19, 29).

Ապասա քաղաքը հանդիսացել է Արցավայի մայրաքաղաքը: Մուրսիլի II-ն այն գրավում է իր կառավարման երրորդ տարում:

Նույնն է, ինչ հետագայի անտիկ աշխարհի հայտնի քաղաքներից մեկը՝ Եփեսոսը[163]:

Ատտարիմմա (RGTC, VI, S. 55. RGTC, VI/2, S. 18.)
URUAt-ta-a-ri-im-ma (Bo II 43 ԴԿ II 35).

Երրորդ տարվա տարեգրության մեջ նշվում է, որ Մուրսիլի II-ը Արցավայի արքայից՝ Ուխխացիտիից պահանջում է իրեն վերադարձնել Արցավայում գտնվող Խու(վա)ոսանասա, Ատտարիմմա և Սուրուդա քաղաքների զորքերը, որոնք խեթական արքայի ենթականերն էին: Սակայն մերժում ստանալով՝ պատերազմ է սկսում Արցավայի դեմ:

Գտնվել է Փոքր Ասիայի արևմուտքում՝ Արցավական միության կազմի մեջ:

Արավաննա (RGTC, VI, S. 29-30. RGTC, VI/2, S. 9.)
KUR URUA-ra-u-wa-an-na (KBo III 4 ՀԿ III 52, 54, 55, 58), URUA-ra-u-wa-an-na (KBo III 4 ՀԿ III 50).

[163] Եփեսոս (լատ.՝ *Ephesus*, հուն.՝ Ἔφεσος). Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող հնագույն քաղաքներից մեկը: Այն գտնվել է Էգեյան ծովի ափին և հանդիսացել է անտիկ աշխարհի հոգևոր և քաղաքական կենտրոններից մեկը:

Տարեգրության հինգերորդ տարվա իրադարձությունների մեջ նշվում է, որ երբ Սուպպիլուլիումա I-ը գտնվում էր Միտտանիում, օգտվելով նրա բացակայությունից՝ Արավաննա երկրի զորքը սկսում է հարձակումներ գործել խեթահպատակ Կիսսիյա երկրի վրա և շատ վնասներ պատճառում: Մուրսիլի II-ը պատժիչ արշավանք է իրագործում Արավաննա երկրի վրա: Նա նվաճում է այդ երկիրը, հպատակեցնում այն և հազարավոր գերիներ ու մեծ քանակությամբ ավար է տանում այնտեղից:

Հավանաբար, գտնվել է Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան հատվածում:

Արիննա (RGTC, VI, S. 33-36. RGTC, VI/2, S. 10-11.)
URUA-ri-in-na (KBo III 4 ԴԿ I 17, 21, 22, 23, 24, 25, 27, 38, 60; KBo XVI I ԴԿ II 53; KBo III 4 ԴԿ II 3, 25, 33, 34, 37, 38, 40, 46, 61, 81), URUPÚ-na[164] (KBo III 4 ԴԿ II 38; KBo III 4 ՀԿ III 31, 44, 53, 64, 89; KBo III 4 ՀԿ IV 26, 38, 47).

Հանդիսանում էր Մուրսիլի II-ի հովանավոր աստվածուհու՝ Արևի դիցուհու պաշտամունքի վայրը: Խեթական տերության կարևոր հոգևոր կենտրոններից մեկն էր, ինչպես նաև Խեթական արքաների նստավայրերից մեկը:

Գտնվել է Փոքր Ասիայի կենտրոնական հատվածում՝ մայրաքաղաք Խաթթուսայից մեկ օրվա հեռավորության վրա[165]:

Արիպսա (RGTC, VI, S. 37. RGTC, VI/2, S. 11. ՀԼՏ, էջ 38-39:)
URUA-ri-ip-ša-a (KBo III 4 ՀԿ IV 37, 39).

[164] PÚ(TÚL) (հայ.՝ ջուր, աղբյուր, առու, ջրհոր) = խեթ.՝ watar: URUPÚ-na = URUArinna.
[165] Նույնանուն քաղաք կար նաև Փոքր Ասիայի արևմտյան հատվածում (RGTC, VI, S. 32):

Արիպսա քաղաքը հիշատակվել է՝ որպես Հայասա-Ազզիի ամրացված քաղաքներից մեկը: Խեթական արքան արշավանքի ընթացքում գրավել էր Արիպսան, որն ըստ «Ընդարձակ» տարեգրության՝ «ծովի մեջ էր գտնվում»[166]:

Հավանական է, որ Մուրսիլի II-ն իր կառավարման 10-րդ տարվա արշավանքի ժամանակ Բարձր Հայքի արևմտյան հատվածից (այն Մուրսիլի II-ի օրոք մեծամասամբ գտնվում էր խեթերի վերահսկողության ներքո) շարժվել է դեպի Տուրուբերանի տարածք և հասել մինչև Վանա լճի ավազան, որտեղ և գտնվել է Արիպսա քաղաքը[167]:

Արցավա (RGTC, VI, S. 42-45. RGTC, VI/2, S. 14.)
KUR ^{URU}Ar-za-u-wa (Bo II 43 ԴԿ II 32; KBo III 4 ԴԿ II 18, 19, 28, 33, 54; KBo III 4 ՀԿ III 30, 32, 35, 39, 40), ^{KUR}Ar-za-u-wa (KBo III 4 ԴԿ II 8).

Իր կառավարման երրորդ տարում Մուրսիլի II-ը զենքն ուղղում է դեպի արևմուտք և գրոհում Արցավա երկրի վրա («Փոքր Արցավա», որը հանդիսանում էր արցավական «համադաշնության» երկրների կենտրոնը): Առիթը Արցավայի հրաժարվելն էր՝ վերադարձնել խեթահպատակ փախստականներին: Ճակատամարտում հաղթելով Արցավայի զորքերին՝ խեթերը նվաճում են Արցավայի մայրաքաղաք Ապասան: Հաջորդ տարի Մուրսիլի II-ը ստիպված էր նորից արշավել Արցավա, քանզի արցավացիներն, ամրանալով Պուրանդա քաղաքում, արքայազն Տապալացունավալիի գլխավորությամբ պայքարի էին դուրս եկել խեթերի դեմ: Ճակատամարտում

[166] KBo IV 4 IV 5.
[167] Ղազարյան, 2005, էջ 37-38: Ղազարյան, 2012, էջ 65-68:

հաղթանակած խեթերը գրավում են Պուրանդան և երկու տարվա կռիվներից հետո իրենց ենթարկում Արցավա երկիրը, որտեղ տեղակայվում են խեթական կայազորներ: Արցավայից մեծ քանակությամբ գերիներ են տարվում (66.000):

Արցավյան «միությունը» կամ «համադաշնությունը» բաղկացած էր բուն Արցավայից (հետագայի Լիդիայի կենտրոնական մասը) և մի շարք այլ քաղաքական միավորներից՝ Միրա-Կուվալիյա, Սեխա գետի երկիր, Խապալլա, Ցիպասլա-Խարիյատի, Վիլուսա և այլն և գտնվում էր Փոքր Ասիայի արևմտյան հատվածում: Փոքր Արցավայի արքան, հավանաբար, հանդիսանում էր համադաշնության առաջնորդը[168]:

Դասմախա (RGTC, VI, S. 411. RGTC, VI/2, S. 164.)
KUR ^{URU}Da-aš-ma-ḫa (KBo XVI 1 ԴԿ II 57).

Այս երկիրը հիշատակվել է Տարեգրության երրորդ տարվա իրադարձությունների հետ կապված: Մուրսիլի II-ը գրավում և այրում է Տիկկուկուվա քաղաքը և Դասմախա երկիրը:

Կասկական երկիր էր, գտնվում էր Արևելապոնտական լեռների շրջանում:

Դուդդուսգա (RGTC, VI, S. 446-447.)
^{URU}Du-ud-du-uš-ga (KBo III 4 ԴԿ I 33, 35, 36).

Մուրսիլի II-ն իր կառավարման առաջին տարվա իրադարձությունների հետ կապված նշում է, որ Դուրմիտտա երկրում տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում ինքը

[168] Bryce, 1999, p. 55.

գրավում է կասկերի գլխավոր քաղաքներ Խալիլան և Դուդդուսգան, որոնք ավարի են մատնվում: Կասկական ցեղերը միավորվելով օգնության են գալիս այդ քաղաքներին, սակայն պարտություն են կրում և ստիպված լինում նահանջել:

Գտնվել է կասկերի Դուրմիտտա երկրում՝ Արևելապոնտական լեռների շրջանում:

Դուկկամմա (RGTC, VI, S. 435-436. ՀԼՏ, էջ 99:)
URUDu-uk-ka-am-ma (KBo III 4 ՀԿ IV 37, 40).

Մուրսիլի II-ն իր տարեգրությունում (10-րդ տարվա իրադարձություններ) նշել է, որ արշավելով դեպի Հայասա-Ազզի՝ գրավել է Արիպսա և Դուկկամմա ամրացված քաղաքները: Խեթական զորքը գրավել է Դուկկամման Արիպսան նվաճելուց հետո և այնտեղից 3.000 գերի վերցրել:

Հաշվի առնելով, որ Դուկկամման մոտ է գտնվել Արիպսային, կարելի է ենթադրել, որ այն գտնվել է Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհում՝ Վանա լճից ոչ հեռու[169]:

Դուրմիտտա (RGTC, VI, S. 442-444. RGTC, VI/2, S. 175.)
KUR URUDur-mi-it-ta (KBo III 4 ԴԿ I 30, 31, 41).

Իր կառավարման առաջին տարում Մուրսիլի II-ը կռվի բռնվեց Դուրմիտտա երկրի կասկերի հետ և հաղթելով նրանց՝ գրավեց և հպատակեցրեց այդ երկիրը:

Կասկական երկիր էր, որը, հավանաբար, Վերին երկրի մոտ է

[169]Ղազարյան, 2012, էջ 65-68:

գտնվել՝ Արևելապոնտական լեռների շրջանում:

Զազզիսա (RGTC, VI, S. 497. RGTC, VI/2, S. 194. ՀԼՏ, էջ 102-103, 109.)
URUZa-az-zi-ša (KBo III 4 ՀԿ III 72).

Տարեգրության յոթերորդ տարում Մուրսիլի II-ը նշում է, որ դեռևս Սուպպիլուլիումա I-ի օրոք Պիխխունիյան՝ Տիբիյա երկրի տերը, հարձակվել էր Վերին երկրի վրա և հասել մինչև Զազզիսա քաղաք:

Գտնվել է Վերին երկրում:

Զիխարիյա (RGTC, VI, S. 498.)
KUR URUZi-ḫar-ri-ya (KBo III 4 ՀԿ III 60, 68).

Վեցերորդ տարվա տարեգրությունում Մուրսիլի II-ը նշում է, որ երբ տարին սկսվեց, ինքը զորքերը շարժեց դեպի Զիխարիյա երկիր: Նա հայտնում է, որ Տարիկարիմու լեռների երկրի կասկերը դեռևս նրա պապի՝ Թուդխալիյա III-ի (Ք.ա. 1360-1344թթ.) օրոք գրավել էին Զիխարիյա երկիրը և վտանգավոր հարևաններ էին դարձել մայրաքաղաք Խաթթուսայի համար, որի վրա երբեմն հարձակվում էին և վնասներ պատճառում: Մուրսիլին որոշել էր վնասազերծել այդ վտանգը և նախահարձակ լինելով՝ հարձակվում և գրավում է և՛ Տարիկարիմու լեռների երկիրը, և՛ Զիխարիյա երկիրը, որը նա ավերում է:

Հավանաբար, գտնվել է Արևելապոնտական լեռների շրջանում՝ Խաթթուսայից հյուսիս-արևելք:

Զիուլիլա (RGTC, VI, S. 515.)
URUZi-ú-li-la (KBo III 4 ՀԿ III 49).

Հինգերորդ տարվա իրադարձությունների հետ կապված՝ Մուրսիլի II-ը նշում է, որ Ասխարպայա լեռների երկրում կասկերին պարտության մատնելուց հետո ինքը կանգ է առել Սամմախա քաղաքում, այնուհետև՝ Զիուլիլայում:

Հավանաբար, գտնվել է Վերին երկրում:

Իսխուպիտտա (RGTC, VI, S. 146-147. RGTC, VI/2, S. 53.)
KUR URUIš-ḫu-pí-it-ta (KBo III 4 ԴԿ I 43, 44, 47, 53), URUIš-ḫu-pí-it-ta (KBo III 4 ԴԿ II 1).

Տարեգրության առաջին տարում նշվում է, որ կասկերի Իսխուպիտտա երկիրն անհնազանդություն էր ցուցաբերել, որի պատճառով Մուրսիլի II-ը նվաճում է այն և հպատակեցնում, որից հետո այդտեղի կասկերը սկսում են կրկին զորք ուղարկել խեթական արքային: Սակայն հաջորդ տարի Իսխուպիտտայի կասկերը դարձյալ ընդվզում են, և խեթերի արքան նորից ստիպված է լինում ճնշել նրանց ապստամբությունը: Իսխուպիտտան նշվում է նաև երրորդ տարվա իրադարձությունների հետ կապված, երբ Իսխուպիտտայի կողմից խեթական զորքը շարժվում է դեպի Պալխուիսա քաղաք:

Գտնվել է Արևելապոնտական լեռների շրջանում[170]:

[170] Տես նաև՝ Хачарян, 1971, с. 34-35.

Իստիտինա (RGTC VI, S. 153. RGTC, VI/2, S. 57. ՀԼS, էջ 59-60, 109:)
KUR URUIš-ti-ti-na (KBo III 4 ՀԿ III 74, 94).

Տարեգրության յոթերորդ տարում Մուրսիլի II-ը նշում է, որ Տիբիյա երկրի տիրակալ Պիխխունիյան ավերել էր Իստիտինա երկիրը: Խեթական արքային հաջողվում է պարտության մատնել նրան, ետ վերցնել իր հողերը և ետ վերադարձնել այդտեղից տարված ավարը:

Հավանաբար, գտնվել է կա՛մ Վերին երկրում, կա՛մ նրա մոտ ընկած տարածքում:

Լիպա (RGTC VI, S. 248.)
URULI-pa (KBo III 4 ՀԿ III 10).

Այս քաղաքը հիշատակվել է Տարեգրության չորրորդ տարում: Լիպայից (տեքստի այդ հատվածը վնասված է) և մեկ այլ քաղաքից խեթերը գերիներ են վերցնում (կամ իրենց նախկին հպատակներին են վերադարձնում) և ուղարկում Խաթթուսա:

Հավանաբար, գտնվել է Արցավայում:

Խաթթի
KURḪa-at-ti (KBo III 4 ԴԿ I 1, 15), KUR URUḪa-at-ti (KBo III 4 ՀԿ III 95), URUḪa-at-ti (KBo III 4 ԴԿ II 57), KURḪat-ti (KBo III 4 ԴԿ I 10, 15; KBo III 4 ՀԿ III 15).

Խեթական պետության անվանումը (Ք.ա. 17-12 դդ.): Տարբեր տարիներին Խաթթիի տիրապետության տակ էր գտնվում Փոքր Ասիայի զգալի մասը, Հյուսիսային Սիրիան, Հայկական

լեռնաշխարհի արևմտյան որոշ հատվածներ, Հյուսիսային Միջագետքի որոշ հատվածը: Մեկն էր տարածաշրջանի «գերտերություններից»:

Անվանումը գալիս է խաթերի անունից, որն այնուհետև վերցրին հնդեվրոպացի նեսացիները, որոնք գրավել էին նրանց երկիրը: Ժամանակի ընթացքում ոչ հնդեվրոպացի խաթերն ուծացվեցին, սակայն պահպանվեց նրանց երկրի անունը՝ որպես հնդեվրոպացի նեսացիների պետության անվանում:

Ներքին երկպառակտչական պայքարի, բնակլիմայական պայմանների փոփոխման, էթնիկական տեղաշարժերի պատճառով Խեթական տերությունը տրոհվեց և անկում ապրեց Ք.ա. XII դ. սկզբում[171]: Նրա քաղաքական և մշակութային ժառանգորդները դարձան Փոքր Ասիայի հարավ-արևելքում, Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում և Սիրիայի հյուսիսային մասում գոյությունը պահպանած «ուշխեթական» կամ «նորխեթական» պետությունները (Թարխունտասա, Կարգամիս, Մելիդ, Կումուխ, Գուրգում), որոնց շարունակում էին կոչել Խաթթի անվամբ:

Խաթթուսա
URUKÙ.BABBAR-ši (KBo III 4 ԴԿ I 34, 46, 53; KBo III 4 ԴԿ II 7, 42, 44, 84, 86; KBo III 4 ՀԿ III 12, 21, 23, 33, 37, 40, 56, 58, 62, 69, 92; KBo III 4 ՀԿ IV 32, 33, 42), URUḪa-at-tu-ši (Bo II 43 ԴԿ II 26).

Խեթական պետության մայրաքաղաքը: Նախկինում հանդիսացել է խաթերի պետության մայրաքաղաքը: Խաթթուսիլի I-ի օրոք (Ք.ա. 1586-1556 թթ.) այն վերակառուցվեց և դարձավ

[171] Խեթական տերության անկման մասին տես՝ Քոսյան, 1999, էջ 112-117:

Խեթական պետության մայրաքաղաքը: Քաղաքը ավերվել և լքվել է Ք.ա. 12-րդ դարի սկզբին Խեթական տերության անկման պատճառով:

Գտնվել է ներկայիս Բողազկալե (նախկինում՝ Բողազքյոյ) բնակավայրի մոտ՝ կենտրոնական Փոքր Ասիայում՝ Անկարայից մոտ 150 կմ հեռավորության վրա:

Խալիլա (RGTC, VI, S. 69.)
URUḪa-li-la (KBo III 4 ԴԿ I 32, 36).

Այս քաղաքը, Դուդդուսգայի հետ միասին, խեթերը գրավում են Մուրսիլի II-ի կառավարման առաջին տարում: Համաձայն Տարեգրության՝ դրանք համարվում էին կասկերի գլխավոր քաղաքները:

Խալիլան գտնվել է կասկերի Դուրմիտտա երկրում՝ հավանաբար, Արևելապոնտական լեռների շրջանում:

Խապալլա (RGTC, VI, S. 79-80. RGTC, VI/2, S. 27.)
KUR URUḪa-pal-la (KBo III 4 ՀԿ III 27).

Չորրորդ տարվա ընթացքում Մուրսիլի II-ը հնազանդեցրեց Սեխա գետի երկիրը, ինչպես նաև Միրա երկիրը: Արքան նշում է նաև, որ Միրա երկիրը Մասխուիլուվային է տալիս, իսկ Սեխա գետի երկիրը՝ Մանապա-Թարխունտային: Նշվում է նաև, որ Խապալլա երկրի կառավարիչ է նշանակվում Տարգասնալին: Հավանաբար, Սեխա գետի և Միրա երկրները հնազանդեցնելու ընթացքում նվաճվել էր նաև Խապալլա երկիրը, որը նախկինում խեթերի

վերահսկողության տակ է եղել: Խապալլան նույնպես սկսում է կանոնավոր զորք ուղարկել խեթերին:

Արցավայի համադաշնության երկրներից մեկն էր: Գտնվել է Սեխա գետի և Միրա երկրների հարևանությամբ՝ Փոքր Ասիայի արևմուտքում:

Խուվարսանասա (RGTC, VI, S. 128-129.)
URUḪu-wa-ar-ša-na-aš-ša[172] (Bo II 43 ԴԿ II 30).

Երրորդ տարվա տարեգրության մեջ նշվում է, որ Խուվարսանասա և Սուրուդա քաղաքների զինվորները փախուստի էին դիմել և ապաստան գտել Արցավա երկրում: Մուրսիլի II-ն Արցավայի արքայից՝ Ուխխացիտիից, պահանջում է իրեն վերադարձնել Խուվարսանասա, Ատտարիմմա և Սուրուդա քաղաքների զորքերը, որոնք խեթական արքայի ենթականերն էին: Սակայն մերժում ստանալով՝ պատերազմ է սկսում Արցավայի դեմ:

Գտնվել է Փոքր Ասիայի արևմտյան մասում՝ Արցավայի հարևանությամբ:

Կամմամա (RGTC, VI, S. 167-168. RGTC, VI/2, S. 62.)
URUKam-ma-ma (KBo III 4 ԴԿ I 59; Bo II 43 ԴԿ II 25).

Տարեգրության երկրորդ տարվա իրադարձությունների մեջ նշվում է, որ խեթական արքան գրավում և ավերում է նաև այս քաղաքը: «Տասնամյա» տարեգրությունում հստակ պատճառը չի

[172] «Ընդարձակ» տարեգրության մեջ այս տեղանունը տրված է URUḪur-ša-na-aš-ša ձևով (KUB XIV 15 III 28, 31, 33):

նշվում, սակայն «Ընդարձակ» տարեգրության երկրորդ տարում տրված է, որ Կամմամա քաղաքը և մեկ այլ քաղաք, որի անունը բացակայում է, իրենց մոտ էին ընդունել խեթական արքայի հպատակներ Պազանային և Նուննուտային, որոնք փախել էին Խաթթիից: Մուրսիլի II-ը պահանջում է իրեն հանձնել նրանց՝ սպառնալով արշավել այդ քաղաքների վրա: Կամմամացիները և մյուս քաղաքի բնակիչները սպանում են այդ երկու փախստականներին, որից հետո խեթական արքան նորից իրեն է ենթարկում այդ երկու քաղաքները:

Հավանաբար, կասկական կամ կասկերի տարածքին մոտ գտնվող քաղաք:

Կաննուվարա (RGTC, VI, S. 171-172. ՀԼՏ, էջ 63-64, 109:)
URUKán-nu-wa-ra (KBo III 4 ՀԿ IV 17).

Տարեգրության իններորդ տարում նշվում է, որ Նուվանցան՝ գլխավոր մատովակը, զորքերով, մարտակառքերով օգնության էր գնացել Վերին երկրի Կաննուվարա քաղաքին, որը հարձակման էր ենթարկվել Ազզի երկրի կողմից: Կաննուվարա քաղաքի մոտ տեղի է ունենում ճակատամարտ, որտեղ ազզեցիները պարտություն են կրում: «Ընդարձակ» տարեգրության իններորդ տարում նշված է, որ Հայասա երկրի զորքերը Վերին երկրի Իստիտինա քաղաքը նվաճելուց հետո պաշարում են Կաննուվարա քաղաքը: Մուրսիլի II-ը, որը գտնվում էր իր տերության հարավում, անմիջապես այնտեղ է ուղարկում իր ամենահայտնի զորավարներից մեկին՝ Նուվանցային՝ մեծ մատովակին: Կաննուվարայի մոտ բախվում են խեթական և հայասական զորքերը: Ճակատամարտում հաղթանակ տանելուց

հետո Նուվանցան այդ մասին խեթական արքային լուր է ուղարկում Նանուցիտիի միջոցով, որտեղ ասվում է, որ նա Կաննուվարայի մոտ ջախջախել է հայասական զորքը, որը բաղկացած էր 10.000 հետևազորից և 700 մարտակառքերից: Այս ամենից հետո Նուվանցան զորքերը շարժում է Սալիտի լեռների ուղղությամբ[173]:

Գտնվել է Վերին երկրում, Խաթթիի և Հայասա-Ազզիի սահմանամերձ գոտում՝ խեթական տարածքում:

Կասկա (RGTC, VI, S. 190-192. RGTC, VI/2, S. 72-73.)
URUGa-aš-ga (KBo III 4 ԴԿ I 30, 32, 41, 43, 47; KBo III 4 ՀԿ III 43, 46, 61, 64, 76, 77, 80), KURGa-aš-ga (KBo III 4 ՀԿ III 73), KUR URUGa-aš-ga (KBo III 4 ԴԿ I 36, 37, 56), URUQa-aš-qa (KBo III 4 ԴԿ I 31), KUR URUKaš-ga (KBo III 4 ԴԿ I 40).

Այս տեղանունը կարելի է օգտագործել նաև՝ որպես տվյալ ժողովրդի անուն՝ չնայած տեքստերում սովորաբար նշվում է կա՛մ որպես երկրանուն, կա՛մ քաղաքանուն: Խոսքը գնում է Կասկա ընդհանրական անվան տակ մտնող ցեղակից ժողովուրդների մասին:

Կասկա երկրի սահմանները նշելիս պետք է հաշվի առնել, որ այն ընդգրկել է Արևելապոնտական լեռների զգալի հատվածը: Սակայն հարկավոր է տարանջատել կասկերի բուն երկրի սահմանները և նրանց տարածման գոտին տարածաշրջանում, որը երբեմն ընդգրկել է բավականին լայն արեալ[174]:

Իր կառավարման առաջին երկու տարիներին Մուրսիլի II-ն, այլ երկրների ապստամբությունները ճնշելուց զատ, զբաղված էր նաև՝

[173] KBo IV 4 II 16-33, 67-78.
[174] Տես՝ Ղազարյան, 2007, էջ 52-64:

կասկերի արշավանքների հետևանքները վերացնելով և նրանց դեմ պատժիչ գործողություններ ձեռնարկելով: Իր թագավորության միայն երրորդ տարում նրան հաջողվեց հաղթել կասկերին և իր ուժերն ուղղել դեպի Արցավա երկիր: Իր գահակալության հինգերորդ տարում Մուրսիլի II-ը լեռնային Ասխարպայա երկրում գրոհեց կասկական ուժերի վրա և հաղթելով նրանց՝ ազատագրեց դեպի Պալա երկիր տանող ճանապարհները: Հաջորդ տարի խեթերը նոր պատժիչ արշավանք ձեռնարկեցին Զիխարիյա երկրի կասկերի դեմ, որոնց մեղադրեցին դեռևս Թուդխալիյա III-ի ժամանակ Տարիկարիմու լեռնային երկրի կողմից Խաթթուսայի վրա արշավելու մեջ:

Սակայն խեթական Վերին երկրի անվտանգության հարցն այդպես էլ մնաց չլուծված, քանի որ այն սահմանակից էր ոչ միայն Կասկա երկրին, այլ նաև Խաթթիի մեկ այլ վտանգավոր թշնամուն՝ Հայասային, որը նույնպես սպառնում էր այս խեթական երկրամասին և ժամանակ առ ժամանակ նաև համագործակցելով կասկերի հետ՝ ներխուժում այդ տարածքներ: Վտանգն առավել ցայտուն դարձավ, երբ կասկական Տիբիյա երկրի առաջնորդ Պիխխունիյան իրեն հռչակեց թագավոր: Եթե նախկինում խեթերը բախվում էին լեռնաբնակ կասկական տարբեր ցեղերի հարձակումներին, որոնք, հավանաբար, միավորվում էին միայն խեթերի դեմ արշավանքների ժամանակ, ապա այժմ, Պիխխունիյայի ի հայտ գալով, վտանգ ստեղծվեց, որ կասկական ցրված ցեղերը կարող են միավորվել մեկ թագավոր-առաջնորդի իշխանության ներքո և ավելի կազմակերպված արշավանքներ ձեռնարկել խեթական տարածքների վրա: Այդ պատճառով Մուրսիլի II-ն անմիջապես միջոցներ

ձեռնարկեց՝ վերացնելու այդ վտանգը: Խեթական զորքը ներխուժեց Տիբիյա, որտեղ տեղի ունեցած ճակատամարտում կասկական զորքը պարտություն կրեց, երկիրն ամայացվեց, իսկ Պիխխունիյան գերվեց: Այնուհետև խեթերն իրենց իշխանությունը վերահաստատեցին Իստիտինա երկրում, որը մինչ այդ նվաճվել էր Պիխխունիյայի կողմից: Սակայն կասկական խնդիրն այդպես էլ մնաց չլուծված:

Կատխահիդդուվա (RGTC, VI, S. 201.)
URUKat-ḫa-id-du-wa (KBo III 4 ԴԿ I 50).

Հիշատակված է երկրորդ տարվա տարեգրությունում, երբ խեթական արքան շարժվում է դեպի Վերին երկիր, այնուհետև մտնում անհնազանդ Տիբիյա երկիր, որտեղ պարտության է մատնում և նվաճում Կատխահիդդուվա քաղաքը:

Գտնվել է Տիբիյա երկրում:

Կիսսիյա[175] (RGTC, VI, S. 188.)
KUR URUKi-iš-ši-ya-a (KBo III 4 ՀԿ III 51).

Տարեգրության հինգերորդ տարվա իրադարձությունների մեջ նշվում է, որ օգտվելով Սուպպիլուլիումա I-ի՝ Խաթթիից բացակայությունից՝ Արավաննա երկիրը սկսում է պարբերաբար հարձակումներ գործել խեթահպատակ Կիսսիյա երկրի վրա: Մուրսիլի II-ը շտկում է իրավիճակը և պատժիչ արշավանք իրագործում Արավաննա երկրի վրա: Նա նվաճում է այդ երկիրը,

[175] Խեթական սկզբնաղբյուրներում այս տեղանունը տրվել է նաև Kašiya ձևով:

հպատակեցնում այն և հազարավոր գերիներ ու մեծ քանակությամբ ավար է վերցնում այնտեղից:

Գտնվել է Խաթթիի սահմանամերձ գոտում՝ Արավաննայի հարևանությամբ՝ Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան հատվածում:

Կիցցուվատնա (RGTC, VI, S. 211-216. RGTC, VI/2, S. 81.)
URUKi-iz-zu-wa-at-na (KBo III 4 ՀԿ IV 22).

Տարեգրության իններորդ տարում Խաթթիի և Հայասա-Ազզիի զորքերի միջև Կաննուվարա քաղաքի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ: Մուրսիլի II-ը գտնվում էր Կիցցուվատնայում, որտեղից այնուհետև ճանապարհ է ընկնում դեպի Կարգամիս՝ այնտեղ գործերը կարգավորելու նպատակով:

Կիցցուվատնան գտնվում էր Փոքր Ասիայի հարավարևելյան հատվածում: Տեղորոշվում է հիմնականում պատմական Կիլիկիայի տարածքում: Հանդիսանում էր առանձին քաղաքական միավոր, որը, սակայն, Մուրսիլի II-ի օրոք գտնվում էր խեթական գերիշխանության ներքո: Մինչ այդ երկար ժամանակ հանդիսացել է կռվախնձոր Խաթթիի և Միտտանիի միջև:

Միտտանի (RGTC, VI, S. 272-273. RGTC, VI/2, S. 105.)
KUR URUMi-it-ta-an-ni (KBo III 4 ԴԿ I 16; KBo III 4 ՀԿ III 98), KUR URUMi-it-tan-ni (KBo III 4 ՀԿ III 50), KURMi-it-tan-ni (KBo III 4 ՀԿ III 71).

Հանդիսանում էր Մերձավոր Արևելքի «գերտերություններից» մեկը (Ք.ա. 17-13-րդ դդ.): Տարբեր ժամանակաշրջաններում զբաղեցրել է հիմնականում Հյուսիսային Միջագետքի, Հյուսիսային

Սիրիայի և Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան տարածքները: Մայրաքաղաքն էր Վաշուգանեն: Ասորեստանյան սկզբնաղբյուրներում այն անվանել են Խանիգալբադ, իսկ եգիպտականում՝ Նահարինա: Միտտանին Ք.ա. 13-րդ դարում Ասորեստանի նվաճողական քաղաքականության հետևանքով կործանվում է և վերանում Մերձավոր Արևելքի քաղաքական թատերաբեմից[176]:

Միրա (RGTC, VI, S. 269-271. RGTC, VI/2, S. 105.)
KUR ^{URU}Mi-ra-a (KBo III 4 ՀԿ III 26).

Իր կառավարման չորրորդ տարում Մուրսիլի II-ը շարունակեց Արցավայի և հարակից երկրների հպատակեցումը: Սեխա գետի երկիրը հպատակեցնելուց հետո Մուրսիլի II-ին իր հնազանդությունն է հայտնում նաև Միրա երկիրը: Այդտեղ կառավարիչ է նշանակվում Մասխուիլուվան, որը Մուրսիլի II-ի քրոջ՝ Մուվատտիի ամուսինն էր: Միրա երկրում տեղակայվում են նաև խեթական կայազորներ, և նրա բնակիչները սկսում են զորք ուղարկել խեթական արքային:

Գտնվում էր Փոքր Ասիայի արևմուտքում: Մտնում էր Արցավայի «միության» երկրների կազմի մեջ:

Յախրեսսա (RGTC, VI, S. 133-134.)
^{URU}Ya-aḫ-re-eš-ša (KBo III 4 ՀԿ IV 24, 25, 26, 27, 32).

Իններորդ տարում Մուրսիլի II-ը, գտնվելով Կիցցուվատնայում («Ընդարձակ» տարեգրությունում նշված է, որ արքան գտնվում էր

[176] Տես՝ Аветисян, 1984.

Թեգարամա երկրում[177]), չարշավեց դեպի Ազզի՝ հետաձգելով այդ ռազմական գործողությունը մինչև հաջորդ տարի: Սակայն մայրաքաղաք վերադառնալուց առաջ նա պատժիչ գործողություններ իրականացրեց Յախրեսսա և Պիգայնարեսսա քաղաքների նկատմամբ:

Գտնվում էր Պիգայնարեսսա և Տապտինա քաղաքների մոտ՝ Արևելապոնտական լեռների մերձակայքում: «Ընդարձակ» տարեգրությունում նշվում է, որ Պիգայնարեսսան նվաճելու հաջորդ օրը խեթական արքան մոտեցավ Յախրեսսա քաղաքին, որն էլ նվաճելուց հետո շարժվեց դեպի Տապտինա քաղաք[178]:

Պալա (RGTC, VI, S. 297-298. RGTC, VI/2, S. 118.)
KUR ^{URU}Pa-la-a (KBo III 4 ՀԿ III 43).

Մուրսիլի II-ը հինգերորդ տարվա տարեգրության մեջ նշում է, որ Ասխարպայա լեռների երկիրը նվաճած կասկերը փակել էին դեպի Պալա երկիր տանող ճանապարհները: Այստեղ նույնպես Մուրսիլի II-ին հաջողվում է հաղթանակի հասնել և այդ երկրներում վերականգնել կարգուկանոնը:

Պալա երկիրը հանդիսանում էր խեթերին ցեղակից պալայացիների երկիրը: «Ընդարձակ» տարեգրության 9-րդ տարում տրված է, որ Պալա երկրի կառավարիչ արքայազն Խուդուպիյանցային վտարել էին Վասումանա քաղաքից: Մուրսիլի II-ը նրան օգնության է ուղարկում մեծ մատռվակ Նուվանցային, որը

[177] KBo IV 4 III 19-23.
[178] KBo IV 4 III 36-43.

գրավում է այդ քաղաքը: Այն, հավանաբար, հանդիսացել է Պալա երկրի կենտրոնը[179]:

Գտնվել է Խաթթուսայից հյուսիս՝ կասկերի տարածքներին մոտ:

Պալխուիսա (RGTC, VI, S. 299. RGTC, VI/2, S. 119.)
URUPal-ḫu-iš-ša (KBo III 4 ԴԿ II 1, 2, 5, 7).

Մուրսիլի II-ը տարեգրության երրորդ տարում նշում է, որ Պալխուիսա քաղաքի մոտ ջախջախեց Պիսխուրու քաղաքի թշնամուն, որից հետո գրավեց Պալխուիսա քաղաքը և ավերեց այն: «Ընդարձակ» տարեգրությունում նշվում է, որ երբ խեթական արքան նվաճում է Պալխուիսա քաղաքը, վերջինիս օգնության են գալիս կասկերը, որոնց խեթական արքան պարտության է մատնում[180]:

Գտնվում էր Խաթթուսայից հյուսիս-արևելք՝ Արևելապոնտական լեռների մոտ[181]:

Պիգայնարեսսա (RGTC, VI, S. 312-313.)
KURPí-ig-ga-i-na-re-eš-ša (KBo III 4 ՀԿ IV 29), KUR URUPí-ig-ga-i-na-re-eš-ša (KBo III 4 ՀԿ IV 30, 33).

Իր կառավարման իններորդ տարում Մուրսիլի II-ն անհնազանդ Յախրեսսա քաղաքը նվաճելուց հետո զորքերը շարժում է դեպի Պիգայնարեսսա երկիր, որտեղ կռվի է բռնվում տեղի կասկերի հետ:

[179] KUB XIV 29 I 16-25.
[180] KUB XIV 16 II 8-22.
[181] Տես՝ Хачарян, 1971, с. 35-36.

Պայքարը ավարտվում է Պիգայնարեսսա երկրի նվաճմամբ և ավերմամբ:

Պիգայնարեսսան գտնվում էր Յախրեսսա և Տապտինա քաղաքների մոտ՝ Արևելապոնտական լեռների շրջանում[182]:

Պիսխուրու (RGTC, VI, S. 316-317.)
URUPí-iš-ḫu-ru (KBo III 4 ԴԿ II 2, 5).

Տարեգրության երրորդ տարում նշվում է, որ Պալխուիսա քաղաքի մոտ Պիսխուրու քաղաքի զորքը կռվի է բռնվում խեթական բանակի հետ և պարտություն կրում, որից հետո Մուրսիլի II-ը գրավում է Պալխուիսա քաղաքը: Պարզ չէ՝ արդյոք Պիսխուրուն Պալխուիսայի դաշնակիցն էր, թե այն գրավվել էր նրա կողմից: «Ընդարձակ» տարեգրության նույն հատվածում նշվում է, որ երբ խեթական արքան նվաճում է Պալխուիսա քաղաքը, նրան օգնության են գալիս կասկերը, որոնց խեթական արքան պարտության է մատնում[183]: Հավանաբար, այստեղ խոսքը գնում է Պիսխուրու երկրի մասին:

Գտնվել է Արևելապոնտական լեռների շրջանում. կասկական տարածք էր:

Պուրանդա (RGTC, VI, S. 322-323.)
URUPu-ú-ra-an-da (KBo III 4 ԴԿ II 35), URUPu-ra-an-da (KBo III 4 ԴԿ II 35, 55, 56, 57, 58, 64, 67, 68, 70, 82).

[182] Տես՝ Խաչատրյան, 1998, էջ 73:
[183] KUB XIV 16 II 8-22.

Տարեգրության երրորդ և չորրորդ տարվա իրադարձությունների հետ կապված՝ հիշատակվել է նաև Պուրանդա քաղաքը: Խեթերի կողմից Արցավա երկրի նվաճման ժամանակ արցավացի փախստականների մի մասն ամրանում է Պուրանդա քաղաքում: Այստեղ է ամրանում նաև Արցավայի մահացած արքա Ուխխացիտիի որդի Տապալացունավալին, որը պայքար է սկսում խեթերի դեմ: Սակայն ճակատամարտում պարտություն կրելուց հետո նա նորից ստիպված է լինում ապաստանել Պուրանդայում, որը պաշարվում է խեթերի կողմից: Տապալացունավալիին հաջողվում է դուրս գալ Պուրանդայից և հեռանալ: Հետապնդող խեթական ուժերը կարողանում են գերել միայն նրա ընտանիքը: Այս ամենից հետո Մուրսիլի II-ի զորքերին հաջողվում է գրավել պաշարված Պուրանդան և այնտեղից 16.000 գերի վերցնել:

Գտնվել է Արցավայում:

Սամմախա[184] (RGTC, VI, S. 337-341. RGTC, VI/2, S. 136. ՀԼՏ, էջ 85-90.)
URUŠa-am-ma-ḫa (KBo III 4 ՀԿ III 48).

Հիշատակվել է Տարեգրության հինգերորդ տարում: Ասխարպայա երկրում կասկերին պարտության մատնելուց հետո խեթական արքան ժամանում է Սամմախա քաղաք:

Գտնվել է Վերին երկրում[185]:

Սուրուդա (RGTC, VI, S. 369-370.)
URUŠu-ru-da (Bo II 43 ԴԿ II 36).

[184] Սամմախան և Սամմուխան նույնական են:
[185] Տես՝ Bryce, 1999, p. 160.

Երրորդ տարվա տարեգրության մեջ նշվում է, որ Խուվարսանասա և Սուրուդա քաղաքների զինվորները փախուստի էին դիմել և ապաստան գտել Արցավա երկրում: Մուրսիլի II-ն Արցավայի արքայից՝ Ուխխացիտիից, պահանջում է իրեն վերադարձնել Խուվարսանասա, Ատտարիմմա և Սուրուդա քաղաքների զորքերը, որոնք խեթական արքայի ենթականերն էին: Սակայն մերժում ստանալով՝ պատերազմ է սկսում Արցավայի դեմ և պարտության մատնելով արցավացիներին՝ վերադարձնում այս երկրների հպատակներին:

Գտնվել է Արցավայում կամ նրա մոտ:

Վալմա (RGTC, VI, S. 473. RGTC, VI/2, S. 185.)
URUWa-al-ma-a (KBo III 4 ԴԿ II 24).

Իր կառավարման երրորդ տարում Մուրսիլի II-ը սկսում է Արցավա երկրի նվաճումը: Արցավայի արքա Ուխխացիտին նրա դեմ է ուղարկում իր որդուն՝ Պիյամա-Կուրունտային, որը արցավական զորքերով Վալմա քաղաքի մոտ՝ Աստարպա գետի ափին, ճակատամարտ է տալիս խեթերին: Մուրսիլի II-ը պարտության է մատնում Պիյամա-Կուրունտայի ուժերին, որից հետո գրավում է նաև Արցավայի կենտրոնը՝ Ապասա քաղաքը:

Գտնվել է Արցավա երկրում:

Վերին երկիր (RGTC, VI, S. 293-294. ՀԼՏ, էջ 90-91:)
KURUGU (KBo III 4 ՀԿ III 72, 73), KURUGU[71] (KBo III 4 ԴԿ I 49; KBo III 4 ՀԿ IV 16).

Տարեգրության երկրորդ տարում Մուրսիլի II-ը կարգուկանոն է հաստատում Վերին երկրում: Նույնը նա ստիպված է լինում իրագործել նաև յոթերորդ տարում, երբ Տիբիյա երկրի զորքերը Վերին երկրի վրա էին հարձակվել և ավարի մատնել այն: Իններորդ տարում Վերին երկիր էին ներխուժել նաև Հայասա-Ազզիի զորքերը, որոնց ընդառաջ խեթական արքան ուղարկեց իր զորավար Նուվանցային, որը ազզեցիներին ճակատամարտ տվեց Կաննուվարա քաղաքի մոտ:

Վերին երկիրը գտնվել է Խեթական տերության հյուսիս-արևելքում՝ Հալիսի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորանն ընկած տարածքում՝ հյուսիսում հասնելով մինչև Գայլ գետի ավազանը: Այն հիմնականում ընդգրկել է հետագայի պատմական Փոքր Հայքի տարածքը:

Տիկկուկուվա (RGTC, VI, S. 420-421.)
URUTi-ik-ku-uk-ku-wa (KBo III 4 ԴԿ II 52, 56).

Իր կառավարման երրորդ տարում Մուրսիլի II-ը Տիկկուկուվա քաղաքի մոտ կռվի է բռնվում, հաղթում է թշնամուն, գրավում Տիկկուկուվա քաղաքը և ավերում այն՝ Դասմախա երկրի հետ միասին:

Տեքստի սկզբի մասի վնասված լինելու պատճառով պարզ չէ, թե Տիկկուկուվա քաղաքի մոտ ում հետ է կռվի բռնվում Խաթթիի արքան: Հավանաբար, այս քաղաքը մոտ էր գտնվում Դասմախա երկրին:

Տիբիյա (RGTC, VI, S. 425-426.)
KUR URUTi-pí-ya (KBo III 4 ԴԿ I 49, 53; KBo III 4 ՀԿ III 70, 90, 93, 96), URUTi-pí-ya (KBo III 4 ՀԿ III 71).

Այս կասկական երկիրը Տարեգրության մեջ հիշատակված է և՛ երկրորդ տարվա իրադարձությունների հետ կապված, և՛ յոթերորդ: Երկրորդ տարվա հետ կապված նշվում է, որ Տիբիյա երկիրը թշնամացել էր Խաթթիի հետ և այլևս զորք չէր տրամադրում նրան: Որպես պատիժ՝ Մուրսիլի II-ը արշավում և գրավում է Տիբիյայի Կատխահդդուվա քաղաքը: Սակայն խեթական արքան ստիպված էր յոթերորդ տարվա ընթացքում նորից շարունակել ռազմական գործողությունները Տիբիյա երկրի դեմ: Այս անգամ Մուրսիլի II-ը հիշատակում է, որ Տիբիյա երկրի կառավարիչ Պիխխունիյան դեռևս իր հոր՝ Սուպպիլուլիումա I-ի օրոք, երբ վերջինս Միտտանի երկրում էր, հարձակվել էր Վերին երկրի վրա, առաջացել մինչև Զազզիսա քաղաք և գրավել Իստիտինա քաղաքը: Պիխխունիյան առավել վտանգավոր էր դարձել, քանի որ ինքն իրեն թագավոր էր հռչակել՝ հավանաբար ձգտելով միավորել կասկական ցեղերը: Մուրսիլի II-ը, պատճառաբանելով Պիխխունիյայի հրաժարվելը՝ վերադարձնել խեթահպատակ գերիներին, պատերազմ է սկսում Տիբիյա երկրի դեմ: Պատերազմի ընթացքում խեթական զորքերին հաջողվում է ոչ միայն գրավել ամբողջ Տիբիյա երկիրը, այլ նաև գերել Պիխխունիյային:

Գտնվել է Արևելապոնտական լեռների շրջանում և սահմանակից է եղել Վերին երկրին[186]:

[186] Տես՝ Խաչատրյան, 1998, էջ 70:

Ասխարպայա (RGTC, VI, S. 46-47. RGTC, VI/2, S. 15.)
ḪUR.SAGAš-ḫar-pa-ya (KBo III 4 ՀԿ III 42, 44, 46, 47).

Մուրսիլի II-ը հինգերորդ տարվա կապակցությամբ նշում է, որ կասկերը գրավել էին Ասխարպայա լեռների երկիրը և այնտեղից դեպի Պալա երկիր տանող ճանապարհներն իրենց վերահսկողության տակ վերցրել: Խեթական բանակը գրավում է այդ երկիրը և վերահսկողության տակ վերցնում դեպի Պալա տանող ճանապարհները:

Գտնվել է Արևելապոնտական լեռների շրջանում՝ Խաթթուսայից հյուսիս-արևմուտք:

Արիննանդա (RGTC, VI, S. 36-37.)
ḪUR.SAGA-ri-in-na-an-da (KBo III 4 ԴԿ II 33, 34, 37, 38, 40, 46).

Իր կառավարման երրորդ տարում, երբ Մուրսիլի II-ը գրավում է Արցավա երկրի մեծ մասը, տեղի բնակչության մի մասը փախստական է դառնում և հաստատվում Արիննանդա լեռան վրա: Խեթական զորքը գրոհում է այդ լեռնային շրջանը և կոտրելով այնտեղ հաստատված արցավացիների դիմադրությունը՝ գրավում այդ լեռնային մարզը: Այստեղից խեթական արքան և նրա զորքը մեծաքանակ գերիներ և ավար են վերցնում և ուղարկում Խաթթուսա: «Ընդարձակ» տարեգրության նույն հատվածում Մուրսիլի II-ը նշում է, որ Արիննանդա լեռը բարձրացած փախստականները ստիպված են

լինում իջնել այնտեղից, քանի որ սովի էին մատնվել: Նրանք հանձնվում են Մուրսիլի II-ին և գերվում ու տարվում Խաթթուսա[187]:

Գտնվում էր Արցավա երկրում:

Լավասա (RGTC, VI, S. 245. RGTC, VI/2, S. 94.)
ḪUR.SAGLa-wa-ša (KBo III 4 ԴԿ II 15).

Տարեգրության երրորդ տարում նշվում է, որ Մուրսիլի II-ը, զորքերը հավաքելով, շարժվում է դեպի Արցավա երկիր: Երբ խեթական բանակը հասնում է Լավասա լեռան մոտ, կայծակի է ականատես լինում, որը մեկնաբանվում է՝ որպես Ամպրոպի աստծո կողմից խեթերին զորակցության նշան:

Գտնվել է Արցավա երկրում:

Տարիկարիմու (RGTC, VI, S. 406.)
ḪUR.SAGTa-ri-ka-ri-mu (KBo III 4 ՀԿ III 61, 63, 66, 67).

Իր կառավարման վեցերորդ տարվա ընթացքում Մուրսիլի II-ը ստիպված էր պայքարել Տարիկարիմու լեռների երկրի կասկերի դեմ: Նրանք դեռևս Մուրսիլի II-ի պապու՝ Թուդխալիյա III-ի օրոք (Ք.ա. 1360-1344 թթ.) գրավել էին Զիխարիյա երկիրը և դարձել խեթական մայրաքաղաքի՝ Խաթթուսայի համար վտանգավոր հարևաններ: Մուրսիլի II-ի զորքերը գրոհեցին Տարիկարիմու լեռների ուղղությամբ և գրավեցին թե՛ Տարիկարիմու լեռների երկիրը, թե՛ Զիխարիյա երկիրը:

[187] KUB XIV 15 III 34-52.

Տարիկարիմու լեռները գտնվել են Խաթթուսա մայրաքաղաքից ոչ շատ հեռու՝ Արևելապոնտական լեռների շրջանում:

ԳԵՏԱՆՈՒՆՆԵՐ

Աստարպա (RGTC, VI, S. 525-526.)
^{ID}A-aš-tar-pa (KBo III 4 ԴԿ II 24, 47), ^{ID}Aš-tar-pa (KBo III 4 ԴԿ II 48).

Այս գետանունը տրվել է երրորդ տարվա տարեգրության մեջ: Մուրսիլի II-ն Արցավայում՝ Վալմա քաղաքի մոտ՝ Աստարպա գետի ափին, պարտության է մատնում Արցավայի ուժերին, որոնց գլխավորում էր արքայազն Պիյամա-Կուրունտան: Դրանից հետո խեթերին հաջողվում է գրավել Արցավա երկրի մեծ մասը: Ռազմական գործողություններն ավարտելուց հետո Մուրսիլի II-ը ռազմական ճամբար է հիմնում Աստարպա գետի ափին:

Գտնվել է Արցավայում:

Սեխա[188] (RGTC, VI, S. 547-548. RGTC, VI/2, S. 144.)
KUR ^{ID}Še-e-ḫa (KBo III 4 ՀԿ III 13, 25, 27), ^{ID}Še-e-ḫa (KBo III 4 ՀԿ III 20, 21), ^{ID}Še-ḫa (KBo III 4 ՀԿ III 13).

Չորրորդ տարին Մուրսիլի II-ը շարժվեց նաև Սեխա գետի երկիր: Այն արցավական միության տարածքներից մեկն էր: Այդ երկրի տիրակալ Մանապա-Թարխունտան փորձեց հաշտության եզրեր գտնել Մուրսիլի II-ի հետ և նրա մոտ ուղարկեց իր

[188] Տեղանունը Տարեգրության մեջ տրված է և՝ որպես գետանուն, և որպես երկրանուն՝ Սեխա գետի երկիր:

բանագնացներին՝ ի դեմս իր մոր, երկրի ավագների և տիկնանց: Խեթական արքան զիջեց և կռվի չբռնվեց Սեխա գետի երկրի հետ: Իսկ Մանապա-Թարխունտան վերադարձրեց Սեխա գետի երկրում գտնվող խեթահպատակներին, հպատակություն հայտնեց Մուրսիլի II-ին և նրա կողմից հաստատվեց Սեխա գետի երկրի գահին: Երկրում տեղակայվեցին նաև խեթական զորքեր:

Գտնվում էր Փոքր Ասիայի արևմտյան հատվածում:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աննիյա
^{m}An-ni-ya (KBo III 4 ՀԿ III 96).

Աննիյան[189] հանդիսացել է Հայասա-Ազզիի արքան: Նրա մասին հիշատակություն կա Տարեգրության յոթերորդ տարում: Այստեղ խոսքը գնում է այն մասին, որ Մուրսիլի II-ը Տիբիյա երկիրը նվաճելուց հետո նամակ է ուղարկում Հայասա-Ազզիի արքային՝ Աննիյային՝ պահանջելով նրանից վերադարձնել դեռևս Սուպպիլուլիումա I-ի ժամանակ Հայասա-Ազզի անցած խեթահպատակներին: Հետագա խեթահայասական իրադարձություններում Աննիյայի անունը չի հիշատակվել: Յոթերորդ տարվա տարեգրության վերջնամասը, ութերորդ տարվա տարեգրությունն ամբողջովին և իններորդ տարվա տարեգրության սկզբնամասը, որտեղ, հավանաբար, եղել են նրա մասին հիշատակություններ, կորսված է:

«Ընդարձակ» տարեգրության զուգահեռ տեքստում Աննիյայի մասին տեղեկություններ կան 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ տարվա իրադարձություններում, որտեղ նշվում է, որ սկզբնապես փորձելով հարցը խաղաղությամբ լուծել՝ Մուրսիլի II-ը նամակներ է ուղարկում Հայասա-Ազզի՝ Աննիյայից պահանջելով վերադարձնել դեռևս Սուպպիլուլիումա I-ի օրոք Հայասայում ապաստան գտած խեթահպատակներին և Իստիտինա ու Դանկուվա խեթական երկրներից վերցրած գերիներին: Աննիյայից մերժում ստանալով՝ Մուրսիլի II-ը Հայասա-Ազզիի սահմանային Ուրա քաղաքի վրա

[189] Աննիյա անվան մասին տես՝ ИЛР, 1, с. 71-73. Խաչատրյան, 1998, էջ 46:

հարձակում է կատարում, որի ելքի մասին մեզ տեղեկություններ չեն հասել, սակայն հետագայում խեթական արքան ստիպված էր կրկին արշավել դեպի Հայասա-Ազզի[190]: Ըստ «Ընդարձակ» տարեգրության ութերորդ տարվա իրադարձությունների՝ հայասացիները, լսելով Մուրսիլիի կողմից նախապատրաստվող արշավանքի մասին, նրա մոտ դեսպան են ուղարկում՝ համաձայնելով կատարել Խաթթիի արքայի պահանջները: Մուրսիլի II-ն առժամանակ հետաձգում է իր նախատեսած արշավանքը և զբաղվում Կումմանիի Խեպատ աստվածուհուն նվիրված տոնախմբություններով[191]: Սակայն հաջորդ տարի Մուրսիլի II-ը հայասացիներից կրկին պահանջում է վերադարձնել ռազմավարը, բայց մերժում է ստանում Աննիյայից: Հայասայի արքան ցանկանում էր գերիների փոխանակում կատարել. հրաժարվում էր վերադարձնել խեթական գերիներին, քանի դեռ չէր ստացել խեթերի մոտ գտնվող իր հպատակներին[192]: Դեռ ավելին, օգտվելով հարմար առիթից, որ Մուրսիլի II-ը գտնվում էր Խաթթիի հարավում, Աննիյան վերստին հարձակվում է Իստիտինա երկրի վրա և պաշարում Կաննուվարա խեթական քաղաքը: Խեթական մի բանակ մեծ մատռվակ Նուվանցայի գլխավորությամբ շտապ կարգով օգնության է հասնում Կաննուվարա քաղաքին: Հայասացիները, որոնք ռազմի դաշտ էին հանել 700 մարտակառք և 10.000-անոց հետևազոր, Կաննուվարա քաղաքի տակ տեղի ունեցած ճակատամարտում, ըստ խեթական սկզբնաղբյուրների, պարտություն են կրում: Սակայն հավանական է, որ խեթական զորավարը անհաջողության էր մատնվել, որի պատճառով Խաթթիի

[190] KUB XIV 17 III 1-24.
[191] 2 Bo TU 56 III 7-11. KUB XIX 30 IV 1-13.
[192] KUB XIV 29 I 1-15.

արքան ստիպված էր Կարգամիսից իր զորքերը շարժել դեպի Թեգարամա, որպեսզի ավելի մոտ գտնվի ռազմական գործողությունների անմիջական վայրին: Այստեղ ձմռան պատճառով և իր զորահրամանատարների խորհրդով նա առժամանակ դադարեցրեց Հայասայի դեմ ռազմական գործողությունները և զորքերը շարժեց այլ ուղղությամբ[193]:

Հետագա տարիների իրադարձությունների մեջ Աննիյայի անունը չի հիշատակվել՝ չնայած Տարեգրության 10-րդ տարին նույնպես վերաբերում է Հայասա-Ազզիին[194]:

Առնուվանդա
^{m}Ar-nu-an-da (KBo III 4 ԴԿ I 5, 6, 8).

Առնուվանդա անունով մեզ հայտնի են 3 խեթական արքաներ (Առնուվանդա I՝ Ք.ա. XIV դարի սկիզբ, Առնուվանդա II՝ Ք.ա. 1322-1321 թթ., Առնուվանդա III՝ Ք.ա. XIII դ. վերջ):

Տարեգրությունում նշվել է Մուրսիլի II-ի ավագ եղբոր՝ Առնուվանդա II-ի մասին: Առնուվանդա II-ը Սուպպիլուլիումա I-ի հինգ որդիներից ավագն էր և թագաժառանգը: Մինչ գահ բարձրանալը նա հայտնի էր դարձել՝ ղեկավարելով խեթական զորքերի արշավանքները դեպի Կարգամիս և դեպի Եգիպտոսին ենթակա սիրիական տարածքներ: Սուպպիլուլիումա I-ին հաջորդած այս արքան կարճ է կառավարել: Նա մահացել է Խաթթիում տարածված համաճարակի պատճառով: Նրա մահը նոր ճգնաժամի առջև

[193] KBo IV 4 II 16-40, 70-75. KBo IV 4 III 17-26.
[194] Հավանաբար, Մուրսիլի II-ը դեպի Հայասա-Ազզի ձեռնարկած երկրորդ արշավանքի ավարտից անմիջապես հետո, իր կառավարման 11-րդ տարում, պայմանագիր է կնքել Հայասայի արքա Աննիյայի հետ (Տես՝ Քոսյան, 2004, էջ 198):

կանգնեցրեց Խաթթին: Հարևան մի շարք երկրներ, օգտվելով այս ամենից, թշնամական գործողություններ սկսեցին Խաթթիի դեմ՝ հույս ունենալով, որ նոր գահ բարձրացած երիտասարդ և անփորձ Մուրսիլի II-ին չի հաջողվի պետությունը ճգնաժամից դուրս բերել:

Մանապա-Թարխունտա
^{m}Ma-na-pa-^{D}U (KBo III 4 ՀԿ III 14, 15, 24, 27).

Հիշատակվել է Տարեգրության չորրորդ տարում: Նշվում է՝ որպես Սեխա գետի երկրի տիրակալ: Երբ խեթական զորքերը մոտենում են Մանապա-Թարխունտայի երկրի սահմաններին, նա Մուրսիլի II-ին ընդառաջ պատվիրակություն է ուղարկում՝ խաղաղության և հնազանդության առաջարկով: Մուրսիլի II-ն ընդունում է նրա առաջարկը և նորից հպատակեցնում Սեխա գետի երկիրը, որի բնակիչները վերադարձնում են նաև իրենց երկրում գտնվող խեթահպատակներին:

«Ընդարձակ» տարեգրության համաժամանակյա հատվածում նշված է, որ Մանապա-Թարխունտան խեթաարցավական պատերազմի ժամանակ անցել էր Արցավայի արքա Ուխխացիտիի կողմը, սակայն երբ Մուրսիլի II-ը մոտենում է Սեխա գետի երկրին, Մանապա-Թարխունտան մորն ուղարկում է խեթական արքայի մոտ, որպեսզի վերջինս ներողամիտ գտնվի իր հանդեպ և նորից իրեն ծառայության վերցնի: Մուրսիլի II-ը ներում է նրան և այսպիսով հպատակեցնում Սեխա գետի երկիրը[195]:

[195] KUB XIV 15 IV 14-33.

Մասխուիլուվա
^{m}Maš-ḫu-i-lu-wa (KBo III 4 ՀԿ III 26).

Հիշատակվել է Տարեգրության չորրորդ տարում: Սեխա գետի երկիրը հնազանդեցնելուց հետո Մուրսիլի II-ը շարժվում է դեպի Միրա երկիր, որտեղ կառավարիչ է նշանակում Մասխուիլուվային: Հավանաբար, Մասխուիլուվան Միրա երկրից էր: Նա իր հնազանդությունն է հայտնում խեթերին՝ առանց կռվի: «Ընդարձակ» տարեգրության համաժամանակյա հատվածում Մուրսիլի II-ը նշում է, որ ինքը մտնում է Միրա երկիր, այնտեղ կարգուկանոն հաստատում, վերակառուցում մի շարք քաղաքներ (Արսանի, Սարավա, Իմպա, Խապանուվա) և այնտեղ տեղադրում խեթական կայազորներ: Միրա երկրում կառավարիչ է կարգվում Մուրսիլի II-ի քրոջ՝ Մուվատտիի ամուսին Մասխուիլուվան: Խեթական արքան նրա անվտանգության համար հատկացնում է նաև 600 զինվորից բաղկացած թիկնազոր՝ հավանաբար, հաշվի առնելով Մասխուիլուվայի ոչ կայուն վիճակը Միրա երկրում[196]:

Մուրսիլի
^{m}Mur-ši-li (KBo III 4 ԴԿ I 1).

Խեթական պետության պատմության մեջ հայտնի են Մուրսիլի անվամբ երեք արքաներ: Մուրսիլի I-ը կառավարել է Ք.ա. 1556-1526 թթ.-ին, Մուրսիլի II-ը՝ Ք.ա. 1321-1295 թթ.-ին, իսկ Մուրսիլի III-ը (Ուրխի-Թեշուբ) կառավարել է Ք.ա. 1272-1267 թթ.-ին:

«Տասնամյա» տարեգրությունը կազմվել է Սուպպիլուլիումա I-ի՝

[196] KUB XIV 15 IV 34-49.

մեզ հայտնի հինգ որդիներից կրտսերի՝ Մուրսիլի II-ի հրամանով և ձոնված է նրա քաջագործություններին, որ նա կատարել է Արիննա քաղաքի Արևի աստվածուհու հովանու ներքո:

Նուննուտա
^{m}Nu-un-nu-ta (KBo III 4 ԴԿ I 56).

Տարեգրության երկրորդ տարում հիշատակված է այս անձնանունը: Մուրսիլի II-ը Տիբիյա երկրից վերադառնալուց հետո շարժվեց դեպի Իսխուպիտտա երկիր, որին պարտության մատնելուց հետո տեքստի վնասված հատվածում նշված է Նուննուտայի անունը, որը, հավանաբար, փախուստի էր դիմել դեպի կասկերի երկիր: Թերևս, նա կասկ էր, որ առաջնորդում էր Իսխուպիտտայի ուժերին: «Ընդարձակ» տարեգրության երկրորդ տարվա իրադարձությունների մեջ նշվում է, որ Պազանան և Նուննուտան, որ խեթական արքայի հպատակներն էին, փախել էին (հավանաբար, Իսխուպիտտայից - Ռ.Ղ.) և ապաստան գտել Կամմամա քաղաքում և մեկ այլ քաղաքում, որի անունը վնասված է տեքստում և անհնարին վերականգնել: Մուրսիլի II-ը պահանջում է այդ երկու քաղաքների բնակիչներից, որպեսզի նրանք այդ երկու փախստականներին իրեն հանձնեն՝ սպառնալով զորքեր մտցնել նրանց քաղաքներ: Վախեցած բնակիչները, ըստ խեթական սկզբնաղբյուրի, սպանում են Պազանային և Նուննուտային[197]:

[197] KUB XIV 15 I 31-35, 1-22.

Նուվանցա
^{m}Nu-wa-an-za (KBo III 4 ՀԿ IV 17, 19, 20).

Հանդիսանում էր Մուրսիլի II-ի օրոք պետության գլխավոր մատռվակը, որը համարվում էր խեթական արքունիքի կարևորագույն պաշտոններից մեկը: Հանդես է եկել նաև՝ որպես զորավար:

Հիշատակվել է Տարեգրության իններորդ տարում, երբ Հայասա-Ազզիի արքա Աննիյան վերստին հարձակվում է Իստիտինա երկրի վրա և պաշարում Կաննուվարա խեթական քաղաքը՝ օգտվելով այն բանից, որ Մուրսիլի II-ը գտնվում էր Խաթթիի հարավում: Խեթական մի բանակ մեծ մատռվակ Նուվանցայի գլխավորությամբ շտապ կարգով օգնության է հասնում Կաննուվարա քաղաքին, որի մոտ պարտության է մատնում հայասացիներին: «Ընդարձակ» տարեգրության երկրորդ տարում Մուրսիլի II-ը Նուվանցային ուղարկում է իր եղբոր՝ Կարգամիսի արքա Շարրիկուշուխի մոտ՝ օգնելու նրան դիմագրավել ասորեստանյան հնարավոր հարձակմանը[198]: «Ընդարձակ» տարեգրության 9-րդ տարում տրված է նաև, որ Պալա երկրի կառավարիչ արքայազն Խուդուպիյանցային վտարել էին Վասումանա քաղաքից: Մուրսիլի II-ը նրան օգնության է ուղարկում մեծ մատռվակ Նուվանցային, որը գրավում է այդ քաղաքը և կարգուկանոն հաստատում նաև խեթական տերության այս հատվածում[199]: Նմանապես նա գործում է նաև անհնազանդ կասկերի դեմ[200]:

[198] KUB XIV 16 I 12-19.
[199] KUB XIV 29 I 16-25.
[200] KBo IV 4 II 76-80.

Շարրիկուշուխ
^{m}Šarri-Kušuḫ

Տարեգրության երրորդ տարվա իրադարձությունների վնասված հատվածում Մուրսիլի II-ը նշում է իր եղբոր մասին, որի անունը, սակայն, բացակայում է: Ա. Գյոթցեն հավանական է համարել, որ այդտեղ խոսքը գնում է Մուրսիլի II-ի եղբոր՝ Կարգամիսի արքա ^{m}Šarri-Kušuḫ-ի (^{m}Šarri-^{D}*SIN*-aḫ) (Շարրիկուշուխը նրա խուրրիական անվանումն էր, կրում էր նաև խեթական Պիյասսիլի անունը - Ռ.Ղ.) կամ Առնուվանդա II-ի մասին[201]: Ավելի հավանական է, որ խոսքը Կարգամիսի արքայի մասին է, քանի որ նրա մասին հիշատակությունները, հատկապես «Ընդարձակ» տարեգրության համաժամանակյա իրադարձությունների մեջ, բազմաթիվ են, որտեղ նա օգնում է իր եղբորը՝ Խաթթիի արքային, վերականգնել Խեթական տերության սահմանները և անդորրը[202]:

Շարրիկուշուխը (Պիյասսիլին) Սուպպիլուլիումա I-ի հինգ որդիներից մեկն էր: Նա նշանակվել էր Կարգամիսի (ժամանակակից Ջերաբլուս, թուրք-սիրիական սահմանի վրա՝ Եփրատի ափին) արքա իր հոր՝ Սուպպիլուլիումա I-ի կողմից: Խեթական արքան, նվաճելով միտտանիական այդ տարածքը, ստեղծում է այնտեղ սահմանամերձ, Խաթթուսային ենթակա թագավորություն: Մուրսիլի II-ի կառավարման իններորդ տարում Շարրիկուշուխը Կիցցուվատնայում հիվանդանում և մահանում է: Նրա փոխարեն խեթական արքան Կարգամիսի արքա է նշանակում նրա որդուն (Սախուրունուվային -

[201] Bo II 43 II 25-26. AM, S. 38 (հղում 25a).
[202] KUB XIV 16 I 9, 14; KUB XIV 15 II 8; KUB XIV 15 III 27, 35; KUB XIV 17 II 21; KUB XIX 30 I 21, 26; 2 BoTU 56 IV 2; KUB XIV 29 I 29, 31.

Ռ.Ղ.)[203]:

Պիխխունիյա
^{m}Pí-iḫ-ḫu-ni-ya (KBo III 4 ՀԿ III 71, 76, 78, 82, 87, 92, 93).

Տիբիյա երկրի առաջնորդ Պիխխունիյայի մասին հիշատակություններ կան Տարեգրության յոթերորդ տարում: Մուրսիլի II-ը պատերազմ է սկսում կասկական Տիբիյա երկրի առաջնորդ Պիխխունիյայի դեմ, քանի որ նա դեռևս Սուպպիլուլիումա I-ի օրոք հարձակվել և ավերածություններ էր գործել խեթական Վերին երկրում: Պատերազմ սկսելու պատճառներից մեկն էր նաև այն, որ Պիխխունիյան իրեն, հավանաբար, հռչակել էր թագավոր և սկսել միավորել կասկական ցեղերին, որը Խաթթիի համար շատ վտանգավոր հետևանքներ կարող էր ունենալ: Այդ պատճառով Մուրսիլի II-ն անմիջապես միջոցներ ձեռնարկեց՝ վերացնելու այդ վտանգը: Պատերազմի համար առիթ հանդիսացավ Պիխխունիյայի հանդուգն պատասխանը խեթական արքայի պահանջին՝ վերադարձնել կասկերի կողմից գերված խեթահպատակներին և ազատել խեթական տարածքները: Խեթական զորքը ներխուժեց Տիբիյա, որտեղ տեղի ունեցած ճակատամարտում կասկական զորքը պարտություն կրեց, երկիրն ամայացվեց, իսկ Պիխխունիյան գերվեց («Ընդարձակ» տարեգրության համաժամանակյա հատվածում նշված է, որ նա հանձնվում է խեթական արքային[204]): Այնուհետև խեթերն իրենց իշխանությունը վերահաստատեցին Իստիտինա երկրում, որը մինչ այդ նվաճվել էր Պիխխունիյայի կողմից: Կասկերի առաջնորդի

[203] KBo IV 4 II 12-14.
[204] KUB XIX 30 I 16-20.

հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ: Հավանաբար, խեթական արքան նրան կա՛մ մահապատժի է ենթարկել, կա՛մ պատանդ է պահել՝ Տիբիյա երկիրը հնազանդ պահելու համար:

Պիյամա-Կուրունտա
^{m}SUM-ma-^{D}LAMMA (KBo III 4 ԴԿ II 22, 27; KBo III 4 ՀԿ III 4).

Հիշատակվել է Տարեգրության երրորդ և չորրորդ տարիներում: Պիյամա-Կուրունտան Արցավայի արքա Ուխխացիտիի որդին էր: Երբ խեթական զորքերը ներխուժում են Արցավա, Ուխխացիտին, հիվանդ լինելու պատճառով, արցավական զորքը վստահում է իր որդուն՝ Պիյամա-Կուրունտային և ուղարկում խեթերին ընդառաջ: Ճակատամարտը, որը տեղի ունեցավ Աստարպա գետի ափին՝ Վալմա քաղաքի մոտ, ավարտվեց Պիյամա-Կուրունտայի գլխավորած արցավական բանակի պարտությամբ:

Չորրորդ տարվա տարեգրության մեջ Պիյամա-Կուրունտան տրված է այն արցավացիների կազմում, որոնք խեթական արշավանքի հետևանքով հեռացել էին դեպի Ախխիյավա երկիր:

Սուպպիլուլիումա
^{m}Šu-up-pí-lu-li-u-ma (KBo III 4 ԴԿ I 2).

Այս անունով խեթական պատմության մեջ հայտնի են երկու արքաներ՝ Սուպպիլուլիամա I-ը (Ք.ա. 1344-1322 թթ.) և Սուպպիլուլիումա II-ը (Ք.ա. XIII դարի վերջ): Տարեգրությունում խոսվում է Մուրսիլի II-ի հոր՝ Խաթթիի մեծ արքա Սուպպիլուլիումա I-ի մասին: Վերջինիս օրոք սկսվեց Խաթթիի նոր վերելքը: Նրան կարելի է համարել նոր խեթական տերության հիմնադիրը: Մինչ գահ

բարձրանալը աջակցում էր հորը՝ Թուդխալիյա III-ին (Ք.ա. 1360-1344 թթ.)՝ վերականգնել Խաթթիի հզորությունը և տարածքային ամբողջականությունը: Գահ էր բարձրացել՝ կատարելով պետական հեղաշրջում և ասպարեզից վերացնելով իր ավագ եղբորը՝ թագաժառանգ Թուդխալիյային: Նրա օրոք սկսվում է Խաթթիի նոր վերելքը: Սուպպիլուլիումա I-ը վերջ է տալիս նաև Միտտանիի հզորությանը՝ այն գցելով Խաթթիի ազդեցության տակ: Միտտանիի նախկին տարածքների մի մասում Սուպպիլուլիումա I-ը ստեղծեց խեթական կախյալ թագավորություններ՝ իր որդիների՝ Տելեպինուի և Պիյասսիլիի գլխավորությամբ, որոնք դարձան Հալեպի (Խալպա) և Կարգամիսի թագավորներ: Սուպպիլուլիումա I-ը փորձեց ստեղծել նաև խեթաեգիպտական դաշինք՝ հիմնված խնամական կապի վրա: Սակայն եգիպտական թագուհի Դախամունցուի (Անխեսենամուն) հրավերով ամուսնության համար Եգիպտոս ուղևորված խեթական արքայազն Ցաննանցան սպանվեց այնտեղ: Եգիպտացիների ուխտադրժությունից բարկացած՝ Սուպպիլուլիումա I-ը խեթական զորքին իր ավագ որդու՝ Առնուվանդայի գլխավորությամբ հրամայեց վրեժխնդիր լինել և ավերել Սիրիայի եգիպտական տարածքները: Սակայն, ճակատագրի հեգնանքով, եգիպտահպատակ բազմաթիվ գերիների հետ միասին խեթական զինվորները Խաթթի ներմուծեցին նաև ժանտախտի համաճարակ, որին, բացի մեծ քանակությամբ հասարակ բնակչությունից, զոհ գնացին նաև Խաթթիի արքան՝ Սուպպիլուլիաումա I-ը, և նրան հաջորդած ավագ որդին՝ Առնուվանդա II-ը:

Տապալացունավալի
ᵐTá-pa-la-zu-na-ú-li (KBo III 4 ԴԿ II 54, 56, 67, 71, 77), ᵐTá-pa-la-zu-na-wa-li (KBo III 4 ԴԿ II 58, 62, 75).

Հիշատակվել է Տարեգրության չորրորդ տարում: Արցավայի արքա Ուխխացիտիի որդին էր: Ուխխացիտիի մահվանից հետո նրա որդիներն առանձնացան: Տապալացունավալին ծովի կողմից վերադարձավ Արցավա և փորձեց Պուրանդա քաղաքում դիմադրություն կազմակերպել խեթերի դեմ: Սակայն պարտություն կրելով՝ նա իր ընտանիքի հետ փակվեց Պուրանդա քաղաքում, որը պաշարվեց խեթերի կողմից: Տապալացունավալիին հաջողվում է փախուստի դիմել Պուրանդայից, որից հետո նրա մասին այլ տեղեկություններ չեն պահպանվել:

Տարգասնալի
ᵐTar-ga-aš-na-al-li (KBo III 4 ՀԿ III 27).

Հիշատակվել է Տարեգրության չորրորդ տարում: Մուրսիլի II-ը Տարգասնալիին նշանակում է Խապալլա երկրի կառավարիչ: Հայտնի չէ՝ նա տեղացի է եղել Խապալլա երկրում, թե պարզապես խեթական դրածո էր:

Ուխխացիտի
ᵐSḫ-ḫa-LÚ (Bo II 43 ԴԿ II 33, 38; KBo III 4 ԴԿ II 30, 36), ᵐU-sḫ-ḫa-LÚ (KBo III 4 ԴԿ II 9, 19, 20, 21, 30, 50, 52, 67; KBo III 4 ՀԿ III 4).

Ուխխացիտին հանդիսացել է Արցավա երկրի արքան: Հիշատակվել է Տարեգրության երրորդ և չորրորդ տարիների

դեպքերի հետ կապված: Մուրսիլի II-ը Արցավայի արքայից պահանջում է իրեն վերադարձնել այն խեթահպատակներին, որոնք հայտնվել էին Արցավայում: Ուխխացիտին մերժում է խեթական արքային, որը առիթ է հանդիսանում Արցավա երկրի դեմ երկամյա պատերազմի սկսման: Պատերազմի ընթացքում Ուխխացիտին հիվանդանում է և ռազմական գործողություններ վարելու պատասխանատվությունը դնում է իր որդիների վրա: Սակայն պատերազմի ընթացքում խեթական արքային հաջողվում է պարտության մատնել արցավական զորքերին և տիրել ամբողջ Արցավա երկրին: Ուխխացիտին ստիպված է լինում լքել իր երկիրը և փախչել ծովից այն կողմ (հավանաբար, կա'մ Ախխիյավա երկիր, կա'մ Էգեյան ծովի կղզիներից մեկը – Ռ.Ղ.): Նրա հետ փախուստի են դիմում նաև մեծ քանակությամբ արցավացիներ: Հետագա պայքարը խեթերի դեմ փորձում են շարունակել Ուխխացիտիի որդիները, քանի որ Ուխխացիտին իր մահկանացուն է կնքում Արցավայի սահմաններից դուրս:

ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐ

Ամպրոպի աստված[205]
^{D}U (KBo III 4 ԴԿ I 39, 60; KBo XVI 1 ԴԿ II 54; KBo III 4 ԴԿ II 4, 14, 16, 26, 39, 61, 81; KBo III 4 ՀԿ III 31, 45, 53, 65, 89; KBo III 4 ՀԿ IV 26, 38).

Խաթական ծագում ունեցող Ամպրոպի աստված Տարուն (խուր.՝ Թեշուբ) համարվում էր խեթական դիցարանի գերագույն աստվածը, Արիննայի Արևի աստվածուհու ամուսինը, Մեցցուլլա աստվածուհու հայրը: Այս եռյակը դեռևս Խաթթուսիլի I-ի օրոք (Ք.ա. 1586-1556 թթ.) համարվում էր տերության դիցարանի գերագույն եռյակը:

Ամպրոպի աստվածը պահապանն էր տիեզերական կարգուկանոնի, ինչպես նաև Խաթթի երկրի: Նրան անվանում էին նաև երկնքի տիրակալ, Խաթթիի տիրակալ, ուներ ռազմի աստծո գործառույթներ: Արշավանքների ժամանակ, ըստ խեթական պատկերացումների, նա ուղեկցում էր իրենց և օժանդակում հաղթանակի հասնել: Խեթական արքան նրա ցուցումով էր «կառավարում»: Երբեմն պատկերվում էր ցլի տեսքով կամ որպես հզոր մարդակերպ աստվածություն: Սովորաբար Ամպրոպի աստվածը ձեռքին ունենում էր մուրճ, որը խորհրդանշում էր երկնային տարերքը:

Ամպրոպի աստծո մականուններից մեկն էր Տարխունտը (խեթ.՝ հզոր, հաղթանակող - Ռ.Ղ.): Նրա խեթական անվանումը չի պահպանվել, կամ պարզապես նա այն չի ունեցել: Նա ավելի շատ հայտնի է խուրրիական Թեշուբ անվամբ: Ըստ խուրրիական

[205] Haas, 1994, S. 336-338.

հավատալիքների՝ Ամպրոպի աստվածը խուրրիական աստվածների երրորդ սերնդի գերագույն աստված Կումարբիի որդին էր, որի պաշտամունքն այնուհետև տարածվեց նաև Խաթթիում՝ միախառնվելով տեղի Ամպրոպի աստվածների պաշտամունքի հետ:

Արիննա քաղաքի Արևի աստվածուհի[206]
^{D}UTU ^{URU}A-ri-in-na (KBo III 4 ԴԿ I 17, 21, 22, 23, 24, 25, 27, 38, 60; KBo XVI 1 ԴԿ II 53; KBo III 4 ԴԿ II 3, 25, 61, 81), ^{D}UTU ^{URU}PÚ-na (KBo XVI 1 ԴԿ II 38; KBo III 4 ՀԿ III 31, 44, 53, 64, 89; KBo III 4 ՀԿ IV 26, 38, 47).

Արիննայի Արունիտի (Արինիտի) (խաթ.՝ Վուրունսեմու, Ուրունցիմու) մեծն աստվածուհին կինն էր Խաթթիի Ամպրոպի աստծո: Ուներ խաթական ծագում: Արիննայի Արևի աստվածուհին հանդիսանում էր Խաթթիի գլխավոր հովանավոր աստվածուհին, որին խեթական արքաները դիմում էին պետության համար դժվարին պահերին: Կարծես, նրան էր «ձոնված» նաև «Տասնամյա» տարեգրությունը: Դեռևս Խաթթուսիլի I-ի օրոք (Ք.ա. 1586-1556 թթ.) այս խաթական աստվածությունը ներառված է եղել խեթական դիցարանի կազմի մեջ: Հետագա խեթական արքաների մեծ մասը հիշատակել են այս աստվածուհուն՝ որպես հովանավոր աստվածություն և իրենց գործերում աջակցող ուժ:

Նա հանդիսանում էր նաև խեթական թագուհիների հովանավոր աստվածուհին, «երկրի մայրը», «թագուհին երկրի», «թագուհին երկնքի», «Խաթթի երկրի ջահը»:

Խաթթուսիլի III-ի օրոք (Ք.ա. 1267 – 1237 թթ.) Արիննայի Արևի աստվածուհու և խուրրիական ծագում ունեցող Խեպատ աստվածուհու

[206] Նույն տեղում, էջ 423, 425, 584-588:

կերպարները միախառնվեցին խեթական դիցարանում: Խեպատը նույնպես հանդիսանում էր Ամպրոպի աստծո՝ Թեշուբի կինը:

Բացի Արիննա և Խաթթուսա քաղաքներից՝ Արիննայի Արևի աստվածուհու պաշտամունքի տարածքը ներառում էր իր մեջ Անկուվա, Կարախնա, Լակարվա, Լարսիլիյա, Սուլուպասի, Տախուրպա, Դուրմիտտա և Ուրաունա քաղաքները:

Մեցցուլլա աստվածուհի[207]
^{D}Me-ez-zu-ul-la (KBo III 4 ԴԿ I 39, 60; KBo XVI 1 ԴԿ II 54; KBo III 4 ԴԿ II 4, 26, 39, 62, 81; KBo III 4 ՀԿ III 31, 45, 53, 65, 89; KBo III 4 ՀԿ IV 27, 38).

Խեթական աստվածուհիներից մեկը: Արիննա քաղաքի Արևի աստվածուհու և Ամպրոպի աստծո դուստրը: Ինչպես իր աստվածային ծնողները, նրա պաշտամունքը նույնպես ունի խաթական ծագում: Նրա կերպարը նույնպես առնչություն ուներ Արևի պաշտամունքի հետ և ինչպես Արիննայի Արևի աստվածուհու, այնպես էլ նրա գլխավոր պաշտամունքի վայրը գտնվում էր Արիննա քաղաքում: Հաճախ Արիննայի Արևի աստվածուհու և նրա դստեր՝ Մեցցուլլայի պաշտամունքային արարողությունները կատարվում էին միասին: Ինչպես երևում է խեթական Պուդուխեպա թագուհու աղոթքի տեքստից, Մեցցուլլան, կարծես, հանդես էր գալիս նաև որպես միջնորդ թագուհու և Մեցցուլլայի ամենազոր ծնողների միջև:

[207] Նույն տեղում, էջ 420, 427, 487:

A.AB.BA (հայ.՝ ծով) = խեթ.՝ aruna- (KBo III 4 ԴԿ II 53):
A.GÀR (հայ.՝ դաշտ, վայր, տեղանք, տարածք) = խեթ.՝ kuera- (KBo III 4 ԴԿ II 59):
AMA (հայ.՝ մայր) = խեթ.՝ anna/i- (KBo III 4 ՀԿ III 17):
ANŠE.KUR.RA^{MEŠ} (հայ.՝ մարտակառքեր) (KBo III 4 ԴԿ II 8, 23, 63, 74; KBo III 4 ՀԿ IV 16, 17, 18, 19, 35; KBo XVI 3 ՀԿ 2):
A.ŠÀ (հայ.՝ դաշտ) = խեթ.՝ ku(e)ra- (KBo III 4 ԴԿ II 59; KBo III 4 ՀԿ III 84):

BÀD (հայ.՝ պատ, պարիսպ, ամրոց, ամրացված, պարսպապատ) = խեթ.՝ kutt-; (BÀD-eššar) - kutteššar, šaḫeššar (KBo III 4 ՀԿ IV 36, 37):
BÀD.KARAŠ (հայ.՝ ամրացված ռազմական ճամբար) (KBo III 4 ԴԿ II 47):
BAL (հայ.՝ ապստամբություն) = խեթ.՝ wakkariya (KBo III 4 ԴԿ I 58):.
BA.ÚŠ (հայ.՝ մահանալ) = խեթ.՝ akkiš, akta (KBo III 4 ԴԿ II 52):

DAM (հայ.՝ տիկին, ամուսնացած կին) (KBo III 4 ԴԿ II 72, 76):
DINGIR (հայ.՝ աստված) = խեթ.՝ šiu(ni)-, աքք.՝ *ILU(M)* (KBo III 4 ԴԿ I 4, 8, 11, 13, 39; Bo II 43 ԴԿ II 24, KBo XVI 1 ԴԿ II 54; KBo III 4 ԴԿ II 4, 26, 39, 62, 82; KBo III 4 ՀԿ III 31, 45, 54, 65, 90; KBo III 4 ՀԿ IV 27, 39):
DUMU (հայ.՝ որդի, երեխա) = խեթ. pulla- (KBo III 4 ԴԿ I 2, 11, 14, 24; KBo III 4 ԴԿ II 12, 22, 27, 51, 52, 67, 69, 72, 76; KBo III 4 ՀԿ III 4; KBo III 4 ՀԿ IV 46):
DÙ (հայ.՝ անել, դառնալ, լինել, պատահել); DÙ-at = խեթ.՝ kišat (հայ.՝ դառնալ) (KBo III 4 ԴԿ I 4, 11; KBo III 4 ՀԿ III 41, 69; KBo III 4 ՀԿ IV 34):

EGIR (հայ.՝ ետևում, նորից, հետո) = խեթ.՝ appa (KBo III 4 ԴԿ I 5, 21, 41, 43, 47, 53, 54; Bo II 43 ԴԿ II 37, 38, 39; KBo XVI 1 ԴԿ II 52; KBo III 4 ԴԿ II 2, 5, 7, 11, 12, 28, 37, 47, 64, 74, 75, 76; KBo III 4 ՀԿ III 13, 58, 69, 82, 83, 87, 88, 93, 94, 95; KBo III 4 ՀԿ IV 37):
É.LUGAL (հայ.՝ արքայի տուն, պալատ) (KBo III 4 ԴԿ II 41, 83; KBo III 4 ՀԿ III 36; KBo III 4 ՀԿ IV 41):

EN (հայ.՝ տեր, իշխան) = խեթ.՝ ešḫa-/išḫa- (աքք.՝ *BĒLU(M)*) (KBo III 4 ԴԿ I 39, 60; KBo XVI 1 ԴԿ II 54; KBo III 4 ԴԿ II 16, 42, 81, 84; KBo III 4 ՀԿ III 14, 31, 37, 56; KBo III 4 ՀԿ IV 42):
ÉRIN^{MEŠ} (հայ.՝ զորքեր, հետևազոր) = խեթ.՝ tuzzi- (KBo III 4 ԴԿ I 40, 42, 44, 48, 50; Bo II 43 ԴԿ II 30, 31, 35, 36; KBo III 4 ԴԿ II 8, 23, 27, 42, 57, 58, 63, 74, 78; KBo III 4 ՀԿ III 29, 34, 37, 56; KBo III 4 ՀԿ IV 16, 17, 18, 19, 24, 35, 42):
EZEN$_4$ (հայ.՝ տոն, տոնակատարություն) (KBo III 4 ԴԿ I 18, 21; KBo III 4 ԴԿ II 48):

GAM (հայ.՝ ներքևում, տակ, մոտ) = խեթ.՝ katta(n) (KBo III 4 ՀԿ III 19):
GAŠAN (հայ.՝ տիրուհի) = խեթ.՝ išḫaššara- (KBo III 4 ԴԿ I 17, 21, 22, 23, 25, 39, 60; KBo XVI 1 ԴԿ II 54; KBo III 4 ԴԿ II 3, 25, 38, 61, 81; KBo III 4 ՀԿ III 31, 44, 53, 65, 89; KBo III 4 ՀԿ IV 26, 38, 47):
GE$_6$ (հայ.՝ մութ, սև, մթնել) = խեթ.՝ dankui-, kappant-, išpant- (KBo III 4 ԴԿ II 68):
GÉŠPU/GÉŠBU (հայ.՝ ուժ, իշխանություն, ստիպել, պայքար) = խեթ.՝ tarḫ- (Bo II 43 ԴԿ II 40; KBo III 4 ՀԿ III 61):
GIG (հայ.՝ հիվանդություն, հիվանդ) = խեթ.՝ arma(n)-/ irma(n)-/ erman- (KBo III 4 ԴԿ II 21, 50):
GIM-an (հայ.՝ երբ, ինչպես, քանի որ, հենց որ) = խեթ.՝ maḫḫan, man (KBo III 4 ԴԿ II 15, 66; KBo III 4 ՀԿ III 13; KBo III 4 ՀԿ IV 22):
GÌR (հայ.՝ ոտք) = խեթ.՝ pata- (KBo III 4 ՀԿ III 18, 19):
GUD (**GU**$_4$) (հայ.՝ կով, ցուլ, խոշոր եղջերավոր անասուն) = խեթ.՝ *guwau-/*gwau-? (KBo III 4 ԴԿ I 33, 45, 51; Bo II 43 ԴԿ II 26; KBo III 4 ԴԿ II 84; KBo III 4 ՀԿ III 37, 57; KBo III 4 ՀԿ IV 31, 42):
GUL (հայ.՝ հարված, ջախջախել) = խեթ.՝ walḫ- (KBo III 4 ԴԿ I 31, 33, 45, 50; KBo III 4 ԴԿ II 2, 19; KBo III 4 ՀԿ III 51, 53, 62, 64, 72, 89; KBo III 4 ՀԿ IV 25, 30):
^{GIŠ}**GU.ZA** (հայ.՝ գահ) (KBo III 4 ԴԿ I 3, 5, 12, 14, 19, 28; KBo III 4 ՀԿ IV 44):

ÌR (**ARAD**) (հայ.՝ ծառա, ստրուկ) = խեթ.՝ ḫutarla/i- (KBo III 4 ԴԿ I 41, 47; Bo II 43 ԴԿ II 41; KBo III 4 ԴԿ II 10; KBo III 4 ՀԿ III 25, 28, 34, 80, 87, 98):

KARAŠ (հայ.՝ ճամբար, բանակ, զորք) = խեթ.՝ tuzzi- (KBo III 4 ԴԿ II 17):
BÀD.KARAŠ (հայ.՝ ամրացված ռազմական ճամբար) (KBo III 4 ԴԿ II 47).
KASKAL (հայ.՝ ճանապարհ, ուղի) = խեթ.՝ palša/i- (KBo III 4 ԴԿ II 75, 78; KBo III 4 ՀԿ III 43):
KUR (հայ.՝ երկիր) = խեթ.՝ utne (KBo III 4 ԴԿ I 20; KBo XVI 1 ԴԿ II 58; KBo III 4 ՀԿ III 88, 95; KBo III 4 ՀԿ IV 36):
KUR-$^{(TI)}$*KA* (KBo III 4 ՀԿ III 85, 86).
KUR.KUR$^{(MEŠ)}$ (KBo III 4 ԴԿ I 4, 6, 7, 8, 9, 11, 19, 23, 26, 29, 32; KBo III 4 ՀԿ III 28; KBo III 4 ՀԿ IV 45, 46).
^{LÚ}**KÚR** (հայ.՝ թշնամի) = խեթ.՝ ḫarpanalli-, kurur (KBo III 4 ԴԿ I 4, 6, 7, 8, 9, 11, 19, 20, 23, 26, 29; KBo III 4 ԴԿ II 2, 5; KBo III 4 ՀԿ III 50; KBo III 4 ՀԿ IV 18, 45, 46):

LÚ (հայ.՝ մարդ, տղամարդ) = խեթ.՝ pešna- (pišena-), antuwaḫḫa/i- (antuḫša), լուվ.՝ ziti- (KBo III 4 ՀԿ III 71):
LUGAL (հայ.՝ արքա) = խեթ.՝ ḫaššu- (KBo III 4 ԴԿ I 1, 10; KBo III 4 ՀԿ III 6, 8, 15, 96):

^{GIŠ}**MÁ** (հայ.՝ նավ) (KBo III 4 ՀԿ III 7):
MÈ (հայ.՝ կռիվ, կռվել) = խեթ.՝ zaḫḫai-: (MÈ-iya) = խեթ.՝ zaḫḫiya- (KBo III 4 ԴԿ I 38; KBo III 4 ԴԿ II 3, 24, 57, 60):
MU.(KAM) (հայ.՝ տարի) = խեթ.՝ witt- (KBo III 4 ԴԿ I 29, 48, 49; Bo II ԴԿ II 28, 29. KBo III 4 ԴԿ II 8, 48, 49; KBo III 4 ՀԿ III 30, 41, 42, 59, 60, 69, 70; KBo III 4 ՀԿ IV 22, 34, 35, 44, 45):

NAM.RA (հայ.՝ ավար, գերի, ավար) = խեթ.՝ arnuwala- (KBo III 4 ԴԿ I 33, 45, 51; KBo III 4 ԴԿ II 33, 37, 41, 42, 83, 84; KBo III 4 ՀԿ III 10, 11, 21, 22, 23, 36, 37, 56; KBo III 4 ՀԿ IV 41, 42):
NIR.GÁL (հայ.՝ հզոր, ուժեղ) = խեթ.՝ muwatalla/i- (KBo III 4 ԴԿ I 39, 60; KBo III 4 ԴԿ II 4, 16, 26, 39, 61, 81; KBo III 4 ՀԿ III 31, 45, 53, 65, 89; KBo III 4 ՀԿ IV 38):
NU.GÁL (հայ.՝ ոչ, չ- ժխտական մասնիկ) = խեթ.՝ natta (KBo III 4 ԴԿ II 44, 85; KBo III 4 ՀԿ III 38, 57):

SAG.DU (հայ.՝ գլուխ, անձ, առաջնորդ) = խեթ.՝ ḫaršar-, ḫaršan- (KBo III 4 ԴԿ I 32, 58; KBo III 4 ԴԿ II 77):
SAG.UŠ (հայ.՝ միշտ, կանոնավոր) = խեթ.՝ ukturi-/wakturi- (KBo III 4 ԴԿ I 21):
ŠE$_{12}$ (SÈD, SE$_{24}$, ŠED$_{9}$) (հայ.՝ ձմեռ, ձմեռել) = խեթ.՝ gim(a)-, gem(a)-, gimmant-, gimmantariya- (KBo III 4 ՀԿ III 30):
ŠEŠ (հայ.՝ եղբայր) = խեթ.՝ negna- (KBo III 4 ԴԿ I 5, 6, 8; Bo II 43 ԴԿ II 30):
ŠU (հայ.՝ ձեռք) = խեթ.՝ ke/iššar(a)- (KBo III 4 ԴԿ I 22; KBo III 4 ՀԿ IV 45):
ŠU.GI (հայ.՝ ծեր մարդ) = խեթ.՝ miyaḫ(ḫ)u(wa)nt-, mieḫuwant-:
^{LÚ}ŠU.GI (հայ.՝ ծերունի), ^{MUNUS}ŠU.GI (հայ.՝ ծեր կին, տիկին) (KBo III 4 ՀԿ III 17):

TI(TÌL) (հայ.՝ կյանք, ապրել, պահել) = խեթ.՝ ḫuiš-/ḫueš- (KBo III 4 ԴԿ I 15):

UDU (հայ.՝ ոչխար, մանր եղջերավոր անասուն) = խեթ.՝ iyant-, ḫawi-, *pekku-? (KBo III 4 ԴԿ I 51; Bo II 43 ԴԿ II 26; KBo III 4 ՀԿ III 57; KBo III 4 ՀԿ IV 31, 42):
UGU (հայ.՝ վերևում, վերին, բարձր) = խեթ.՝ šer:
^{KUR}UGU$^{(TI)}$ (Վերին (Բարձր) երկիր) (KBo III 4 ԴԿ I 49; KBo III 4 ՀԿ III 72, 73; KBo III 4 ՀԿ IV 16):
UR.SAG (հայ.՝ հերոս) = խեթ.՝ ḫaštali(ya)- (KBo III 4 ԴԿ I 1, 2, 10):
URU (հայ.՝ քաղաք, բնակավայր) = խեթ.՝ ḫappira/i-:
URU-an(-ma) (KBo III 4 ԴԿ I 46, 52; Bo II 43 ԴԿ II 27; KBo XVI 1 ԴԿ II 57; KBo III 4 ԴԿ II 6, 19; KBo III 4 ՀԿ IV 28).
URU^{LIM} (KBo III 4 ՀԿ IV 29).
URU.DIDLI$^{ḪI.A}$ BÀD (հայ.՝ ամրացված քաղաքներ) (KBo III 4 ՀԿ IV 36, 37).
^{D}**UTU**^{ŠI} (հայ.՝ իմ Արևը, ես՝ Արևս, իմ մեծությունը) = խեթ.՝ ištanuš miš, աքք.՝ ^{D}*Šamši* (KBo III 4 ԴԿ I 19, 32, 38, 43, 44, 50, 58; KBo XVI 1 ԴԿ II 53; KBo III 4 ԴԿ II 25, 37, 41, 57, 60, 71, 74; KBo III 4 ՀԿ III 7, 35, 52, 63, 79; KBo III 4 ՀԿ IV 22, 25):

ZAG (հայ.՝ սահման, տարածք) = խեթ.՝ arḫa-/irḫa- (KBo III 4 ԴԿ I 15, 25):

Աքքադագիր բառեր

A-BU(M) (հայ.՝ հայր) = խեթ.՝ atta-:
A-BI-YA (*A-BU-YA*) (հայ.՝ հայրս) (KBo III 4 ԴԿ I 3, 4, 16, 19, 28; KBo III 4 ՀԿ III 50, 70, 97; KBo III 4 ՀԿ IV 44):
A-BI-ŠU (*A-BU-ŠU*) (հայ.՝ իր հոր) (KBo III 4 ԴԿ I 5, 10, 12, 14):
A-BI A-BI-YA (հայ.՝ հորս հայրը, պապս) (KBo III 4 ՀԿ III 60):
AD-DIN (հայ.՝ տվեցի) = խեթ.՝ peḫḫun (KBo III 4 ՀԿ III 26, 27):
A-NA (հայ.՝ դեպի, մեջ, մոտ, համար) (KBo III 4 ԴԿ I 3, 5, 12, 14, 19, 20, 21, 22, 28; Bo II 43 ԴԿ II 33; KBo III 4 ԴԿ II 9, 29, 37, 59; KBo III 4 ՀԿ III 20, 26, 27, 85, 86, 96; KBo III 4 ՀԿ IV 18, 19, 44):
A-NA PA-NI (հայ.՝ դեպի, մեջ, մոտ, համար) (KBo III 4 ՀԿ III 60):
AQ-BI (հայ.՝ ասացի) = խեթ.՝ memaḫḫun (KBo III 4 ԴԿ I 23):
AṢ-BAT (հայ.՝ վերցրի, տիրեցի, նվաճեցի) (KBo III 4 ԴԿ II 28, 64; KBo III 4 ՀԿ III 92):

DĪ-NAM (***DĪ-NU(M)***) (հայ.՝ դատ, արդարություն, աջ) = խեթ.՝ ḫanneššar (KBo III 4 ԴԿ II 14):

I-NA (հայ.՝ մեջ, մոտ, վրա) (KBo III 4 ԴԿ I 16, 29, 44, 48, 49, 53, 56; Bo II 43 ԴԿ II 28; KBo XVI 1 ԴԿ II 52; KBo III 4 ԴԿ II 1, 2, 5, 7, 8, 15, 24, 28, 29, 33, 35, 37, 41, 47, 48, 49, 56, 57, 67, 79, 83; KBo III 4 ՀԿ III 13, 20, 21, 26, 30, 36, 40, 41, 42, 48, 49, 50, 52, 55, 59, 60, 69, 70, 71, 72, 73, 77, 80, 98; KBo III 4 ՀԿ IV 16, 17, 23, 25, 29, 34, 35, 41, 45):
IŠ-PUR (հայ.՝ ուղարկեց (գիր), գրեց) (KBo III 4 ՀԿ III 87):
IŠ-TU (համարժեք է հայերեն -ից հոլովական վերջավորությանը, ցույց է տալիս գործողություն՝ ուղղված դեպի դուրս, ինչ-որ բանից հետո) (KBo III 4 ԴԿ I 33, 45, 51, 53; Bo II 43 ԴԿ II 25; KBo III 4 ԴԿ II 58; KBo III 4 ՀԿ III 7, 10, 55, 93; KBo III 4 ՀԿ IV 31):
IT-TI (հայ.՝ հետ, մոտ, դեպի) (KBo III 4 ԴԿ II 36):

-KA(-QÁ) (հայ.՝ նրա, քո) (KBo III 4 ՀԿ III 85, 86):

NA-RA-RÙ/I (***NE-RA-RU***) (հայ.՝ օգնական) (KBo III 4 ԴԿ I 40):

PA-NU(M) (***PA-NI***) (հայ.՝ առջև, դեմք, նախկինում) (KBo III 4 ՀԿ III 60):

QA-DU (հայ.՝ միասին, իրար հետ, ներառյալ) (KBo III 4 ԴԿ II 23, 27):

ŠA (ցույց է տալիս պատկանելություն, վրա, վերաբերյալ) (KBo III 4 ԴԿ I 17, 21, 24, 30, 32, 36, 40, 41, 43, 47; KBo III 4 ԴԿ II 19, 30; KBo III 4 ՀԿ III 43, 44, 66, 76, 77, 78, 95; KBo III 4 ՀԿ IV 18, 19, 29):
-ŠU-NU (հայ.՝ նրա(նց)) (KBo III 4 ԴԿ II 51, 52):

ᴸᵁ ṬE₄-MA (***ᴸᵁ ṬE₄-MU***) (հայ.՝ բանագնաց, նամակատար, սուրհանդակ, լուր) (Bo II 43 ԴԿ II 33; KBo III 4 ԴԿ II 9; KBo III 4 ՀԿ III 79, 97):

Ù (հայ.՝ և, նույնպես, սակայն, բացի այդ) = խեթ.՝ -a մասնիկ (KBo III 4 ԴԿ I 36; Bo II 43 ԴԿ II 31, 36; KBo III 4 ՀԿ III 10):
Ú-UL (հայ.՝ ոչ, չ-, ժխտական մասնիկ) = խեթ.՝ natta (KBo III 4 ԴԿ I 15, 44, 50; KBo III 4 ԴԿ II 12, 22, 30; KBo III 4 ՀԿ III 17, 21, 76, 77, 84, 88; KBo III 4 ՀԿ IV 15, 23, 24, 36, 43, 47; KBo XVI 3 ՀԿ 1):

-YA (հայ.՝ իմ) (KBo III 4 ԴԿ I 3, 4, 5, 6, 8, 16, 17, 19, 21, 22, 23, 25, 28, 39, 60; Bo II 43 ԴԿ II 30; KBo XVI 1 ԴԿ II 54; KBo III 4 ԴԿ II 3, 4, 10, 14, 16, 17, 25, 26, 38, 39, 61, 81; KBo III 4 ՀԿ III 31, 44, 45, 50, 53, 60, 65, 70, 80, 87, 89, 97, 98; KBo III 4 ՀԿ IV 26, 38, 44, 47):

ZU(SÚ) (հայ.՝ նրա, իր) (KBo III 4 ԴԿ II 72, 76; KBo III 4 ՀԿ III 88):

Թվեր

1^{EN} (***IŠTĒN***) (1) (KBo III 4 ՀԿ III 77):
1-aš (KBo III 4 ԴԿ II 53, 77):
1-e-et-ta (KBo III 4 ՀԿ III 36):

LI-IM (հոգն.՝ *LIMI*) (1.000):
3 *LI-IM* (KBo III 4 ՀԿ III 56; KBo III 4 ՀԿ IV 41):
4 *LI-IM* (KBo III 4 ՀԿ III 23):
5 *LI-IM* (KBo III 4 ԴԿ II 42):
6 *LI-IM* (KBo III 4 ԴԿ II 83; KBo III 4 ՀԿ III 36):

ME (100) (KBo III 4 ԴԿ II 42, 83; KBo III 4 ՀԿ III 11, 56):

SIG$_7$ (10.000) (KBo III 4 ԴԿ II 42, 83; KBo III 4 ՀԿ III 11, 36):

ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ազզի - 12, 55, 57, 59, 61, 64, 65, 77, 83
Ախխիյավա - 43, 65, 103, 106
Անկարա - 11, 75
Անկուվա - 109
Ապասա - 12, 33, 35, 66, 68, 87
Ասխարպայա լեռներ(ի երկիր) - 12, 47, 49, 72, 79, 83, 86, 90
Ասորեստան - 10, 82
Աստարպա գետ -33, 35, 37, 87, 92, 103
Ատտարիմմա - 27, 66, 76, 87
Արավաննա - 12, 49, 66-67, 80-81
Արիննա - 67, 109
Արիննանդա լեռ - 12, 35, 90
Արիպսա - 12, 61, 67-68, 70
Արցավա - 11, 12, 27, 31, 33, 35, 37, 45, 47, 65-66, 68-69, 73, 76, 79, 82, 86-87, 90-92, 97, 103, 105-106
Արևելապոնտական լեռներ - 69-72, 75, 78, 83-85, 89-90, 92
Աքայա - 65

Բարձր Հայք - 65, 68
Բողազկալե (Բողազքյոյ) - 75

Գայլ գետ - 88
Գուրգում - 74

Դանկուվա - 94
Դասմախա - 12, 69, 88
Դուդդուսգա - 12, 21, 69-70, 75
Դուկկամմա - 12, 61, 70
Դուրմիտտա - 12, 21, 23, 69-70, 75, 109

Եգիպտոս - 10, 63, 96, 104
Եփեսոս - 66
Եփրատ գետ - 63, 65, 88, 101

Զազզիսա - 53, 71, 89
Զիխարիյա - 12, 51, 71, 79, 91
Զիուլիլա - 49, 72

Էգեյան ծով - 66, 106

Թարխունտասա - 74
Թեգարամա - 83, 96

Իսխուպիտտա - 12, 23, 25, 31, 72, 99
Իստիտինա - 53, 55, 73, 77, 80

Լակարվա - 109
Լիպա - 43, 73
Լավասա լեռ - 33, 91
Լարսիլիյա - 109
Լիդիա - 69

Խաթթի - 10-11, 17, 19, 43, 45, 55, 63, 73-74, 77-81, 88-89, 95-97, 100-104, 107-108
Խաթթուսա - 11, 21, 23, 25, 27, 31, 35, 41, 43, 45, 47, 49, 51, 55, 59, 61, 67, 71, 73-74, 79, 84, 90-92, 101, 109
Խալիլա - 12, 21, 70, 75
Խանիգալբադ - 82
Խապալլա - 45, 69, 75-76, 105
Խու(վա)ոսանասա - 27, 76, 87
Խուրրի - 65

Կամմամա -12, 25, 27, 76-77, 99
Կաննուվարա - 12, 57, 77-78, 81, 88, 95, 100
Կասկա - 63, 78-79
Կատխահիդդուվա - 13, 25, 80, 89
Կարախնա - 109
Կարգամիս - 10, 26, 74, 81, 96, 100-101, 104
Կիցցուվատնա - 81-82, 101
Կիսսիյա 49, 67, 80
Կումմանի - 95
Կումուխ - 74

Հալեպ (Խալպա) - 10, 104
Հալիս գետ - 88
Հայասա(-Ազզի) - 64-65, 68, 70, 77-79, 81, 88, 94-96, 100
Հայկական լեռնաշխարհ - 11, 73-74, 82
Հյուսիսային Միջագետք - 74, 81

Ճորոխ գետ - 64

Մելիդ - 74

Մեծ Հայք - 70
Մերձավոր Արևելք - 81-82
Միկենյան Հունաստան - 65
Միտտանի - 19, 49, 53, 55, 67, 81-82, 89, 104
Միրա(-Կուվալիյա) - 12, 45, 69, 75-76, 82, 98

Յախրեսսա - 12, 59, 82-85

Նահարինա - 82

Պալա - 47, 79, 83-84, 90, 100
Պալխուիսա - 12, 31, 72, 84-85
Պիգայնարեսսա - 12, 59, 83-85
Պիսխուրու - 12, 31, 84-85
Պուրանդա - 12, 35, 37, 39, 41, 68-69, 85-86, 105

Ջերաբլուս - 101

Սալիտի - 78
Սամմախա - 49, 72, 86
Սամմուխա - 86
Սեխա գետ(ի երկիր) - 12, 43, 45, 69, 75-76, 82, 92-93, 97-98
(Հյուսիսային) Սիրիա - 73, 74, 104
Սուլուպասի - 109
Սուրուդա - 27, 66, 76, 86-87

Վալմա - 12, 33, 87, 92, 103
Վաշուգանե - 82
Վանա լիճ - 65, 68, 70
Վասումանա - 83, 100
Վերին երկիր - 23, 53, 57, 70-73, 77-79, 80, 86-89, 102, 113
Վիլուսա - 69

Տախուրպա - 109
Տապտինա - 83, 85
Տարիկարիմու լեռներ(ի երկիր) - 12, 51, 71, 79, 91-92
Տիբիյա - 12, 23, 25, 53, 55, 71, 73, 79-80, 88-89, 94, 99, 102-103
Տիկկուկուվա - 12, 69, 88
Տուրուբերան - 68, 70

Ցիպասլա-Խարիյատի - 69

Ուրա - 94

Փոքր Ասիա - 10-11, 66-67, 69, 73-76, 81-82, 93
Փոքր Հայք - 88

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աննիյա - 55, 94-96, 100
Առնուվանդա I - 96
Առնուվանդա II - 17, 26, 96, 101, 104
Առնուվանդա III - 96

Գասսուլավիյա (Գասսուլիյավիյա) - 10

Դախամունցու (Անխեսենամուն) - 104

Թուդխալիյա III - 71, 79, 91, 104
Թուդխալիյա (թագաժառանգ) - 63

Խաթթուսիլի I - 74, 107, 108
Խաթթուսիլի III - 108
Խուդուպիյանցա - 83, 100

Մանանդյան Հ. - 14
Մանապա-Թարխունտա - 43, 45, 75, 92-93, 97
Մասխուիլուվա - 45, 75, 82, 98
Մարտիրոսյան Ն. - 14
Մուվատտի - 82, 98
Մուրսիլի I - 98
Մուրսիլի II - 10-11, 13, 17, 26, 63-64, 66-73, 75-103, 105-106
Մուրսիլի III (Ուրխի-Թեշուբ) - 98

Նուննուտա - 25, 77, 99
Նուվանցա - 57, 77-78, 83, 88, 95, 100

Շարրիկուշուխ - 10, 26, 100-101

Պազանա - 77, 99
Պիխխունիյա - 53, 55, 71, 73, 79-80, 89, 102
Պիյամա-Կուրունտա – 33, 43, 65, 87, 92, 103
Պիյասսիլի - 26, 101, 104

Սախուրունուվա - 101
Սուպպիլուլիամա I - 10, 63, 67, 71, 80, 89, 94, 96, 98, 101-104

Սուպպիլուլիումա II - 103

Տապալացունավալի - 37, 39, 41, 68, 86, 105
Տարգասնալի - 45, 75, 105
Տելեպինու - 10, 104

Ցաննանցա - 104

Ուխխացիտի - 27, 32-33, 35, 37, 39, 43, 65-66, 76, 86-87, 97, 103, 105-106

ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐ

Ամպրոպի աստված - 21, 25, 29, 31, 33, 35, 37, 41, 45, 47, 49, 51, 55, 59, 61, 91, 107-109
Արիննա քաղաքի Արևի աստվածուհի - 11, 19, 21, 25, 29, 31, 33, 35, 37, 41, 45, 47, 49, 51, 55, 59, 61, 67, 99, 107-109
Արունիտի/Արինիտի - 108

Թեշուբ - 107, 109

Խեպատ - 95, 108-109

Կումարբի - 108

Մեցցուլլա աստվածուհի - 21, 25, 29, 31, 33, 35, 41, 45, 47, 49, 51, 55, 61, 107, 109

Վուրունսեմու (Ուրունցիմու) - 108

Տարխունտ - 107
Տարու - 107


ՀԱՅԱՍԱ
ՄԻՏՏԱՆԻ
ԱՍՍՈՒՐԻՍՏԱՆ
ԲԱԲԵԼՈՆԻ
ՄԱՍՍԱ
ՄԱՍՍԱ
ՄԱՍՍԱ

KBo III 4 = 2 BoTU 48

74 I 44-60

Nr. 4 Vorderseite Columne I, Zeile 44–60



KBo III 4 = 2 BoTU 48

74 II 1-23

Columne II, Zeile 1–23



ꝟ II 24-66

Nr. 4 Vorderseite Columne II, Zeile 24—66



ꝟ II 67-85

Nr. 4 Vorderseite Columne II, Zeile 67—85



<4 III 1-22

Rückseite Columne III, Zeile 1—22



<4 III 23-65

Nr. 4 Rückseite Columne III, Zeile 23—65



<4 III 66-95

Nr. 4 Rückseite Columne III, Zeile 66—95



<4 IV 1-18



KBo III 4 = 2 BoTU 48

Ch IV 19-48



KBo XVI 1

Th II 1-40



KBo XVI 1 II 41-61



KBo XVI 4 1-12



KBo XVI 2 I 1-5

KBo XVI 1 II 51-64



KBo XVI 1 II 28-41



KBo XVI 1 II 62-67, 113e




III
Nr. 1
§16*
§17*
888/c
Ank. 10284
III (Fortsetzung)
105/e
§18*
Fortsetzung s. rechts
Vs. s. Blatt 1 u. 2
Rs. IV s. folgendes Blatt



KUB XIX 38 IV 1-22



KBo XVI 3 1-4



ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍԻ

ՄՈՒՐՍԻԼԻ II-Ի «ՏԱՍՆԱՄՅԱ» ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հրատ. պատվեր՝ N 409
Հանձնված է արտադրություն՝ 10.01.2013 թ.:
Չափսը՝ 70 x 100 $^{1}/_{16}$: Թուղթ՝ օֆսեթ N 1:
9 տպագր. մամուլ: Տպաքանակը 200 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,